

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՒՓՍԻՄԵ ՕՀԱՆՅԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 811.134.2:811.19
ԳՄԴ 81.472.1+81.51
Օ-452

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

*Նվիրում եմ ծնողներին՝ ՀՀ վաստակավոր իրավաբան,
Մխիթար Գոշի մեղալակի, Սանկտ Պետերբուրգի հումանիտար
գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ի. գ. թ.,
պրոֆեսոր Լևոն Օհանյանին և ՀՀ վաստակավոր բժշկուհի,
ՀՀ ստոմատոլոգների միության անդամ Գոհար Օհանյանին:*

Գրախոսներ՝

բ.գ.թ., դոցենտ Զ. Ազիզբեկյան
դասախոս՝ Մերի Մարտիրոսյան

Օհանյան Հռիփսիմե

Օ-452 Կենդանիների անուններով դարձվածքները իսպաներենում
և հայերենում / Հ. Օհանյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2024.- 172 էջ:

Մենագրության նպատակն է իսպաներենի և հայերենի զուգադրական քննության վեր հանել կենդանիների անուններ պարունակող դարձվածքների ընդհանրություններն ու տարբերությունները երկու լեզուներում:

Մարդիկ շատ մոտ գտնվելով կենդանիներին՝ նրանց հատուկ հատկանիշները վերագրել են միմյանց՝ ստեղծելով դարձվածքներ, որոնք ներթափանցել են լեզու և ստացել են լայն կիրառություն: Այսօր էլ կենդանիների անվանումներով դարձվածքները շարունակում են լինել դարձվածաբանության ուսումնասիրության առարկան:

Աշխատության մեջ տեղ գտած դրույթները կարող են լայն կիրառություն գտնել իսպաներենի և հայերենի դարձվածաբանության բնագավառին առնչվող տեսական և գործնական խնդիրներով հետաքրքրվող մասնագետների, բուհերի բանասիրական ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների և ուսանողների համար:

ՀՏԴ 811.134.2:811.19
ԳՄԴ 81.472.1+81.51

ISBN 978-5-8084-2687-0
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426870>

© ԵՊՀ հրատ., 2024
© Օհանյան Հռիփսիմե, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

Առաջին գլուխ

ՀԱՅ ԵՎ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ..... 12

1.1 Հայ դարձվածաբանության համառոտ նկարագիրը..... 12

1.2 Դարձվածքների դասակարգումը..... 19

1.3 Իսպաներենի դարձվածաբանության մեջ առկա հիմնական պատկերացումներն ու միտումները..... 26

1.4 Կենդանիների անվանումները և դրանցով կազմված դարձվածքները..... 35

Երկրորդ գլուխ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԴԱՐՉՎԱԾԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ

ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ39

2.1 Կենդանիների անվանումների հոմանիշությունն

իսպաներենում և հայերենում39

2.2 Կենդանիների անվանումների հոմանիշության

ընդհանուր պատկերը իսպաներենում և հայերենում53

2.3 Դարձվածակազմության մի շարք

առանձնահատկություններ իսպաներենում և հայերենում....58

2.3.1 Կենդանիների անվանումներով դարձվածքների

դարձվածակազմական արդյունավետությունն

իսպաներենում և հայերենում65

2.4 Կենդանու անունների հոմանիշների

դարձվածակազմական արդյունավետությունն

իսպաներենում և հայերենում78

Երրորդ գլուխ	
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ	
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ	
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ	
ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	83
<i>3.1 Բազմանդամ հոմանիշություն.....</i>	<i>97</i>
<i>3.2 Բառային և բազմանդամ հոմանիշություն</i>	<i>100</i>
<i>3.3 Կենդանու անուն պարունակող դարձվածքների</i>	
<i>դարձվածային հոմանիշներ.....</i>	<i>104</i>
Չորրորդ գլուխ	
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱԿԱՆԱՑՄԱՆ	
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆ ԵՎ	
ՀԱՅԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՈՒՄ	128
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	146
Резюме	152
Summary	156
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	159

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարձվածքները լեզվի հարստությունն են, դրանցում արտացոլված են ժողովրդի լեզվամտածողությունն ու կենսափիլիսոփայությունը, կենցաղն ու սովորույթները: Դարձվածքները լեզվի առանձնահատուկ տարրեր են, որոնց ուսումնասիրությունը կարող է կատարվել ինչպես բառագիտական, այնպես էլ ձևաբանական կամ շարահյուսական տեսանկյուններից: Մեր օրերում լայն տարածում է ստացել նաև համեմատական դարձվածաբանությունը: Դրա մասին են վկայում վերջին տարիներին հրապարակված մի շարք աշխատանքներ, սակայն կան համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններին վերաբերող որոշ հարցեր, որոնք դեռևս պարզաբանման կարիք ունեն:

Ինչպես հայտնի է, դարձվածաբանությունը յուրաքանչյուր լեզվում առանձնահատուկ դեր ունի: Դարձվածքը լեզուն կրող ժողովրդի մշակութային հարստությունն է, ինչպես նաև լեզվամտածողության, կենսափիլիսոփայության, իմաստության, արժեհամակարգի, հոգեբանության, ավանդույթների և աշխարհայացքի առանձնահատկությունների բնութագրիչը: Դարձվածքները խոսքը դարձնում են ավելի արտահայտիչ և պատկերավոր, որով էլ բացատրվում է, որ խոսակցական, ժողովրդախոսակցական լեզվի և ազգային մտածողության կոլորիտ ստեղծելու նպատակով հաղորդակցության պահին խոսողը կամ գրողը դիմում է դարձվածքների գործածությանը՝ դարձնելով խոսքն ավելի արտահայտիչ, կուռ և պատկերավոր:

Սույն ուսումնասիրությունը կատարվել է իսպաներենում և հայերենում դարձվածաբանության համառոտ տեսության,

մասնավորապես՝ կենդանու անուն պարունակող դարձվածքների համեմատական քննության հիման վրա: Այս հարցի ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ, ի տարբերություն այլ բաղադրիչներով կազմված դարձվածքների, կենդանու անուն պարունակող դարձվածքներն աչքի են ընկնում առավել մեծ արտահայտչականությամբ և պատկերավորությամբ, քանի որ կենդանիների անունները փոխաբերական դաշտում արդեն իսկ օժտված են զգալի արտահայտչականությամբ և պատկերավորությամբ:

Ըստ էության, բոլոր կենդանիների անվանումներն էլ այս կամ այն չափով օժտված են փոխաբերական իմաստներով և որոշակի պատկերավորությամբ, սակայն տարբեր է դրանց դարձվածակազմական արդյունավետությունը: Շատ բան կախված է կենդանու տեսակից և նրան վերագրվող հատկանիշներից:

Աշխատությունում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դարձվածքներում առավելապես ներկայացված են ընտանի կենդանիների և թռչունների անունները: Համեմատաբար քիչ են վայրի կենդանիների և թռչունների անվանումները: Այս ամենն էլ պայմանավորվում է մարդու և կենդանիների առավել շփմամբ, որն էլ ինչ-որ առումով ունի նաև ճանաչողական և կենցաղային նշանակություն: Դարձվածքների մեծ մասը ժողովրդական ծագում ունի: Մեծաթիվ դարձվածքներ նախ առաջանում են ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում հաղորդակցության պահին, ապա նրանց մի մասը մասնագետների, գրողների ու անհատների կողմից մշակվելով՝ աստիճանաբար դառնում են համագործակցային ու անցնում լեզվին, ինչպես նաև ամրագրվում դարձվածաբանական և բացատրական բառարաններում:

Դարձվածաբանության մեջ մեծ տեղ են զբաղեցնում կենդանիների անվանումներով դարձվածքները: Ժողովուրդը կենդանիներին բնորոշ հատկանիշների օգնությամբ վերաիմաստավորված բնութագրում է մարդկանց, նրանց արարքները՝ խոսքին հաղորդելով պատկերավորության, նրբագեղության, հուզականության և ներգործության ուժը:

Ըստ էության, բոլոր կենդանիների անվանումներն էլ այս կամ այն չափով օժտված են փոխաբերական իմաստներով և որոշակի պատկերավորությամբ, սակայն տարբեր է դրանց դարձվածակազմական արդյունավետությունը: Շատ կարևոր է կենդանու տեսակը և դրան վերագրվող հատկանիշը դարձվածքի իմաստի բացատրության ժամանակ:

Այս աշխատության արդիականությունը պայմանավորված է համեմատական և տիպաբանական աշխատությունների նկատմամբ արդի հետաքրքրությամբ: Մասնագիտական գրականության մեջ իսպաներեն և հայերեն դարձվածքների համեմատության ուսումնասիրության հարցը բավարար չափով չի արծարծվել: Իսպանագիտական և հայագիտական աղբյուրներում գոյություն ունեն մեծաթիվ դարձվածագիտական աշխատություններ, բառարաններ և այլ ուսումնասիրություններ, սակայն այս ոլորտին առնչվող շատ հարցեր դեռևս ունեն լրացուցիչ պարզաբանման կարիք: Քանի որ դարձվածքները սերտորեն կապված են այս կամ այն ազգի լեզվամտածողության, կյանքի ու մշակույթի մեջ կարծրացած ավանդույթների հետ, լայն առումով ներկայիս հասարակական, քաղաքական, մշակութային զարգացումների պայմաններում դարձվածքների ուսումնասիրությունը կարող է մեծ չափով նպաստել այս կամ այն ժողովրդի ազգային նկարագիրն ամբողջացնելու գործին:

Սույն մենագրության գիտական նորույթը նախևառաջ բուն հարցադրման մեջ է: Ըստ էության, առաջին անգամ իսպաներենի և հայերենի փաստական նյութի զուգադրմամբ փորձ է արվում համեմատական քննության ենթարկել իսպաներեն և հայերեն դարձվածաբանական բառարաններում արձանագրված այն դարձվածքները, որոնց կազմում առկա են կենդանիների անուններ: Աշխատության մեջ առաջին անգամ համակողմանիորեն պարզաբանվում են իսպաներենում և հայերենում կենդանիների անվանումների հոմանիշության և հականիշության առանձնահատկությունները՝ մասնավորապես բառային և դարձվածային հոմանիշության հարցեր: Քննության են առնվում երկու լեզուներում դարձվածակազմական արդյունավետությանն առնչվող հարցեր: Առանձին ենթագլխում համեմատվում են իսպաներենի և հայերենի դարձվածակազմական կաղապարները, ցույց է տրվում, որ երկու լեզուների դարձվածակազմական կաղապարների միջև կան մեծ ընդհանրություններ, ինչպիսիք գոյություն չունեն ռոմանական մյուս լեզուներում: Խոսքը վերաբերում է հատկապես *hecho + zoonimo* (դարձած + կենդանու անվանում) կաղապարին, որի փոխարեն հայերենն ունի *կտրած* հարակատար դերբայով կազմված ձևը: Երկու լեզուների դարձվածակազմական կաղապարների համեմատությունը ցույց է տալիս, որ հայերենն աչքի է ընկնում առավել մեծ ճկունությամբ և դարձվածային տարբերակների հարստությամբ: Այդ համեմատությունների արդյունքներն առաջին անգամ են ներկայացվում գիտական շրջանակում:

Աշխատանքի տեսական արժեքն այն է, որ, հաշվի առնելով բառագիտական և դարձվածաբանական ուսումնասիրությունների բնագավառում հաստատված ավանդույթները, քնն-

վում է կենդանիների անուններ պարունակող դարձվածային միավորներն իսպաներենում և հայերենում, հանգամանալից անդրադարձ է կատարվում դրանց հոմանիշությանը վերաբերող հարցերին, դիտարկվում է դարձվածքների կազմության մեջ ընդգրկված կենդանիների անվանումների ուղիղ և փոխաբերական իմաստների հարաբերակցությանն առնչվող հարցեր: Աշխատությունում տեսական առումով կարևորվում է նաև այն դրույթը, որ մասնավորապես իսպաներենում դարձվածքի իմաստը երբեմն որոշակի կախվածություն է դրսևորում քերականական կարգից: Բանն այն է, որ գոյականի թվի և սեռի քերականական կարգերի ձևականացումները հանգեցնում են դարձվածքի իմաստային փոփոխության:

Լայն առումով հետազոտության նպատակն է իսպաներենի և հայերենի գուգադրական քննությամբ վեր հանել կենդանիների անուններ պարունակող դարձվածքների ընդհանրություններն ու տարբերությունները երկու լեզուներում: Այս նպատակին հասնելու համար աշխատության մեջ առաջ են քաշվում հետևյալ կոնկրետ խնդիրները.

- համակողմանիորեն քննության ենթարկել իսպանագիտական և հայագիտական ուսումնասիրությունների՝ դարձվածաբանությանն առնչվող ոլորտում առկա տեսությունները, հետազոտական սկզբունքներն ու մոտեցումները, որոնք կարող են տեսական հիմք դառնալ սույն մենագրության ուսումնասիրության համար,
- քննության առնել կենդանիների անվանումների բառային և դարձվածային հոմանիշության և հականիշության երևույթները իսպաներենում և հայերենում,
- քննել դարձվածային միավորի հնարավոր իմաստային կախվածությունը կենդանիների անվանումների քերականական կարգային յուրահատկություններից,

- ուսումնասիրել կենդանիների անվանումներին բնորոշ քերականական կարգային յուրահատկությունների մթագնման երևույթները դարձվածքներում երկու լեզուների տեսանկյունից,
- զուգադրել և համեմատական քննության ենթարկել իսպաներենի և հայերենի դարձվածային կապակցությունների կառուցվածքային յուրահատկությունները,
- ուսումնասիրել դարձվածակազմական յուրահատկությունների կապն ազգային, հասարակական և մշակութային ավանդույթների հետ,
- ուսումնասիրել և համեմատել իսպաներենում ու հայերենում առավել տարածում գտած դարձվածակազմական կաղապարները:

Ուսումնասիրության փաստական նյութն ընդգրկում է 1600 դարձվածք, որոնցում ներկայացված է 71 կենդանու անուն, իսկ դրանց հոմանիշների թիվը 676 է: Դրանցից իսպաներենին բաժին է ընկնում 326, իսկ հայերենին՝ 350 հոմանիշ տարբերակ, որոնք քննվում են գործածականության և դարձվածակազմական արդյունավետության տեսանկյունից: Փաստական նյութի համար հիմք են դարձել մի շարք դարձվածաբանական բառարաններ՝ թե՛ իսպաներենով և թե՛ հայերենով:

Գործնական նշանակությանը հիմքում ուսումնասիրության արդյունքներն են, որոնք կարող են լայն կիրառություն գտնել իսպաներենի և հայերենի դարձվածաբանության և իմաստաբանության բնագավառին առնչվող ուսումնական դասընթացների ու սեմինարների շրջանակում: Այն կարող է նաև օգտակար լինել իսպաներենից հայերեն և հայերենից իսպաներեն թարգմանություններ կատարելիս:

Աշխատության մեջ օգտագործված հիմնական մեթոդներն են զուգադրման և համեմատության մեթոդները, որոնք թույլ են տալիս կատարել որոշակի տիպաբանական եզրակացություններ: Ըստ անհրաժեշտության՝ կիրառվել են նաև իմաստային վերլուծության և վիճակագրական հաշվարկի մեթոդները:

Առաջին գլուխ

ՀԱՅ ԵՎ ԻՄՊԱՆԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դարձվածաբանություն եզրույթը երկիմաստ է, մի կողմից՝ այն նշանակում է որևէ լեզվի դարձվածային ամբողջությունը, մյուս կողմից՝ բառագիտության ճյուղերից մեկը, որը զբաղվում է դարձվածքների ուսումնասիրությամբ:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն դարձվածքի տարբեր սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրը հենվում է որոշակի հատկանիշների վրա, որոնք էլ, իրենց հերթին, շատ հաճախ հստակորեն տարրորոշված չեն և հնարավորություն չեն տալիս դարձվածքը սահմանազատելու այլ կապակցություններից:

Հայերենի դարձվածաբանությունը հիմնականում ձևավորվել է ռուսերենի դարձվածագիտության ազդեցությամբ, իսկ վերջինս էլ՝ զարգացել եվրոպական, մասնավորապես, ֆրանսերենի դարձվածագիտության հիման վրա:

1.1 Հայ դարձվածաբանության համառոտ նկարագիրը

Հայ իրականության մեջ դարձվածքների ուսումնասիրությանը նվիրվել են մի շարք մենագրություններ, բացի դրանից՝ դարձվածաբանական բառարանների առաջաբաններում քննարկվել են դարձվածաբանությանն առնչվող մի շարք հարցեր: Հայ լեզվաբանները դարձվածաբանության հարցերին ան-

րադարձել են նաև ընդհանուր լեզվաբանական, բառագիտական և այլ աշխատություններում¹:

Դարձվածաբանության հայկական դպրոցը, չնայած կողմնորոշված է դեպի ռուսական և եվրոպական մոտեցումները, հիմնվում է հայերեն դարձվածքների վրա: Հայագիտական աղբյուրներում գոյություն ունեն դարձվածքի մոտ մեկ տասնյակ սահմանումներ, որոնք թեև ընդհանուր առմամբ չեն հակասում միմյանց, սակայն առանձին մանրամասներում ունեն ուրոշ տարբերություններ. ա) Ա. Մուրվալյանը դարձվածքը բնորոշում է հետևյալ կերպ. «Դարձվածքները, որոնք բառիմաստի տեսակետից կայուն, անբաժանելի միավորներ են և արտահայտում են առանձին բառազադափարներ, խոսքի մեջ սովորաբար հանդես են գալիս նախադասության որևէ անդամի դերում և համարժեք են այս կամ այն բառին»:

Մուրվալյանը դարձվածքի սահմանների ճշտման համար ելակետային է համարում *բառիմաստի անբաժանելիությունը և նախադասության որևէ անդամի համարժեք լինելը*:

բ) Պ. Բեդիրյանի հարցին այլ տեսանկյունից է մոտենում՝ տալով հետևյալ սահմանումը՝ «Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակ-

¹ Տե՛ս մասնավորապես՝ Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բառակազմություն, Երևան, 1957, Ե. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, Ա. Սուքիասյան, Հումանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, Գ. Ջահուկյան, Ֆ. Խլդաթայան, Հայոց լեզու, Երևան, 1976, Ս. Աբրահամյան, Հայոց լեզու. Բառ և խոսք, Երևան, 1978, Հ. Պետրոսյան, Հայրենագիտական բառարան, Երևան, 1987, Խ. Բա տիկյան, Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000:

ցություն է, որում բաղադրիչ բառերի ինքնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած»²:

Պ. Բեդիրյանի տված սահմանումն ավելի լայն է և դարձվածքի *կառուցվածքային ամբողջությունը* չի անջատում *վերահիմաստավորվածությունից*, այսինքն՝ *իմաստային ամբողջականությունից*:

զ) Գ. Ջահուկյանի և Ֆ. Խլղաթյանի «Հայոց լեզու» դպրոցական դասագրքում դարձվածքի սահմանումը շատ ավելի նեղ է՝ «Դարձվածքները միասնական իմաստով կապված և նույնությամբ վերարտադրվող կայուն կապակցություններն ու նախադասություններն են»³:

Այս սահմանումը պայմանավորված է տվյալ գրքի գործնական բնույթով, քանի որ այս ձեռնարկը նախատեսված է միջնակարգ դպրոցի բարձր դասարանների աշակերտության և ուսուցիչների համար:

դ) «Լեզվաբանական բառարան»-ը⁴ տալիս է դարձվածքի հետևյալ մեկնաբանությունը. «Բառերի այն կապակցությունը, որը հանդես է գալիս իբրև իմաստային - արտահայտչական տարբերակ. ընդ որում՝ երբ բառակապակցության բաղադրիչների իմաստը կորչում է ընդհանուր (դարձվածային) իմաստի մեջ գործ ունենք *իդիոմի* (առանձնահատուկ արտահայտության) հետ, իսկ եթե բաղադրիչները դեռևս պահպանում են նշանակություն, ապա դրանց ամբողջությունը սովորական *դարձվածային կապակցություն* է: Այս է պատճառը, որ *դարձ-*

² Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973:

³ Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Երևան, 1976, էջ 98:

⁴ Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղաթաղույան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 81:

վածք եզրույթի սահմաններն ընդլայնվում կամ նեղանում են, լայն իմաստով դարձվածք են նաև *ասույթը, իմաստալից ասացվածքը (աֆորիզմը), թեւավոր խոսքը, շրջասույթը, որոշ առածներ, ասացվածքներ*, տարբեր *ռճեր*, բազմաթիվ *կայուն* (անազատ) *բառակապակցություններ* և այլն»:

Այսպիսով, նշված բառարանի հեղինակները չեն տալիս դարձվածքի ամփոփ սահմանումը, այլ նշում են դարձվածքները խոսքի այլ միավորներից տարանջատելու սկզբունքները և ընդհանրապես դարձվածքի սահմանման հարաբերականությունը:

ե) Մեկ այլ՝ «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի»⁵ առաջաբանում քննարկվում են դարձվածքի ըմբռնման, դարձվածաբանական միավորների սահմանների դասակարգման հետ կապված բազմաթիվ հարցեր: Բառարանի հեղինակները նշում են հետևյալը. «Դարձվածքները դիտելիս որպես լեզվում առկա կայուն կապակցությունների ամբողջություն՝ կարելի է սահմանել իբրև բառային այնպիսի անբաժան, իմաստով ամբողջական բառակապակցություններ, որոնք կրկնվում են խոսքում որպես խոսքային պատրաստի միավորներ: Դարձվածքը փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցություն կամ իդիոմատիկ նշանակությամբ կայուն կապակցություն է կամ կայուն արտահայտություն»: Դարձվածքի մեջ մասնագետները տեսնում են փոխաբերություն, պատկերավորություն, հուզաարտահայտչական գունավորում և այլն:

զ) Հետագայում Ա. Մուքիսայանը տալիս է դարձվածքի հետևյալ սահմանումը. «Դարձվածքը՝ կառուցվածքով երկու և

⁵ Ա. Մուքիսայան, Մ. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, 1975, էջ 2:

ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր»:

ե) Լ. Եզեկյանը 2005 թ. հրատարակված «Հայոց լեզու» աշխատությունում դարձվածքը սահմանում է հետևյալ կերպ. «Դարձվածքը երկու և ավելի բառերի այնպիսի կայուն, պատրաստի բառակապակցություն է, որի բաղադրիչները վերաիմաստավորված են, այսինքն՝ դարձվածքի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բառարանային բուն իմաստը և ձեռք է բերում նոր նշանակություն, ուրեմն և՛ տվյալ դարձվածքի արտահայտած ընդհանուր իմաստն այդ բաղադրիչների մեխանիկական գումարը չէ և ունի փոխաբերական իմաստ»:

ը) Դարձվածաբանության հարցերին անդրադարձել է նաև Հ. Պետրոսյանն իր «Հայրենագիտական բառարանում»: Ընդհանուր առմամբ դուրս չգալով դարձվածքի վերաբերյալ ավանդական պատկերացումների շրջանակներից՝ Հ. Պետրոսյանը դարձվածքի բնութագրությունն ամբողջացնելու համար առանձնացնում է հետևյալ հատկանիշները.

- ինքնին բառակապակցություն է. առանձին բառը հազվադեպ կարող է դարձվածքի արժեք ունենալ,
- պատկանում է կայուն բառակապակցությունների խմբին, բնորոշ է բաղադրիչների ուժեղ կամ պակաս սերտաճմամբ. ընդ որում՝ իմաստաբանական (բովանդակային) պլանում անտրոհելի է, արտահայտում է ամբողջացած, նոր գաղափար՝ ուրույն վերաիմաստավորումով, իսկ կառուցվածքային (արտահայտության) պլանում բաղադրիչները (կամ դրանցից որևէ մեկը) անփոխարինելի են,

- իբրև բաղադրություն, ի տարբերություն ազատ (շարահյուսական) բառակապակցության, ամեն անգամ չի ստեղծվում տվյալ իրադրության համար, այլ պատրաստի վերարտադրվում է (գործածության մեջ է դրվում) միևնույն բառաքերականական կազմով,
- ունի փոխաբերական իմաստավորում, որը նրան տալիս է պատկերավորություն. մեծ մասն արտահայտում է խոսողի հուզագգացական վերաբերմունքը, որով և պայմանավորված է նրա հուզարտահայտչական նշանակությունը և այս ամենը նրան դարձնում է լեզվական ոճավորման միջոց»⁶:

Հանրագումարի բերելով հայագիտական ուսումնասիրություններում արտահայտված կարծիքները՝ կարելի է նշել դարձվածքի հետևյալ հիմնական հատկանիշները.

- ❖ *մեկից ավելի բառերի առկայությունը,*
- ❖ *կառուցվածքի կայունությունը,*
- ❖ *իմաստային ամբողջականությունը,*
- ❖ *վերաիմաստավորվածությունը*
- ❖ *բաղադրիչների իմաստային ինքնուրույնության ձևականությունը*
- ❖ *փոխաբերությունը, պատկերավորությունը*
- ❖ *բառերի շարահյուսական կապի մթագնած լինելը:*

Վերջին կետը կարելի է բնորոշել նաև որպես դարձվածքի կազմի մեջ մտնող բառերի *քերականական կարգերի ձևականություն:*

Դարձվածքն ամենից առաջ *բառերի կապակցություն է*, սակայն, խոսվում է նաև բառ-դարձվածքների մասին: Պ. Բե-

⁶ **Հ. Զ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1986, էջ 175-176:

դիրյանն իր վերը նշված գրքում, օրինակ, նշում հետևյալ միտքը. «Երբ ասում ենք՝ դարձվածքը ամենից առաջ կապակցությունն է, չենք մոռանում, սակայն, մի կարևոր վերապահում անել. կապակցություն-դարձվածքների հսկայական պաշարի կողքին, ունենք նաև բառ-դարձվածքներ, որոնք որոշակի քանակ են կազմում, ուստի չեն կարող «հաշվից հանվել»: Տեղնուտեղն ասենք, որ դրանք այն դարձվածքներն են, որոնք, թեև առանձին բառեր, ունեն կապակցության, գերազանցապես նախադասության արժեք»: Այդպիսի դարձվածքներն են՝ ներդրոթյո՛ւն. ներեցե՛ք, կներե՛ք.= կներե՛ս (= ներո՛ղ կլինեք/ ներդրոթյո՛ւն կանեք), թքա՛ծ, *խսկց.* մեռա՛ծ, զարմանա՛ս, արևմտհ. հո՛գը (ի)ս և այլն»:

Ճիշտ է, բերված օրինակները պարունակում են դարձվածքներին բնորոշ առանձնահատկություններ՝ փոխաբերականություն, պատկերավորություն և այլն, սակայն, մյուս կողմից զուրկ են դարձվածքի էությունը պայմանավորող կառուցվածքային-իմաստաբանական կարևորագույն հատկանիշներից:

Դարձվածքի սահմանման և ազատ կապակցություններից տարանջատման տեսակետից մեծ նշանակություն ունի համատեքստը: Հաճախ հենց համատեքստից է կախված այն հարցը, թե տվյալ կապակցությունը դարձվածք է, թե՞ ազատ կապակցություն: Խոսելով դարձվածքի ըմբռնման և գործածության համար խոսքային միջավայրի դերի մասին՝ ակադ. Ս. Աբրահամյանը բերում է մի շարք օրինակներ, որոնցում դարձվածք-ազատ կապակցություն հակադրությունը հիմնվում է համատեքստի վրա: Օրինակ՝

Ազատ բառակապակցություն	Դարձվածք
Երբ անձրևն սկսվեց, նա գլխաշորը <i>գլխին կապեց</i> :	Այդ չվաճառվող ապրանքը խորամանկությամբ նրա <i>գլխին կապեց</i> :
Արամը ճաշելուց հետո <i>լվանում է ձեռքերը</i> :	Զարմանքով նկատեցինք, որ նա, տեսնելով այդ խառը վիճակը, <i>ձեռքերը լվանում է</i> ն մի կողմ քաշվում:
Թոռնիկը, չորեքթաթ տալով, բարձրացավ և պապիկի <i>գլխին նստեց</i> :	Եկել են <i>գլուխներինս նստել</i> , մեր ջուրը մեզ խնայում են:
Աստղիկը ճակատին կախված մազի երկար փունջը ետ տարավ ու <i>զցեց աջ ականջի ետևը</i> :	Նրանց ետևից վազում էր Վահանը՝ տատի հանձնարարությունը <i>ականջի հետևը զցած</i> :

«Ընդգծված կապակցությունները,- գրում է Ս. Աբրահամյանը,- ձախ շարքում ազատ կապակցություններ են, իսկ աջ շարքում՝ դարձվածքներ: Նշանակում է՝ դարձվածքի ըմբռնման և գործածության համար պետք է հաշվի առնել խոսքը, դարձվածքի կիրառության խոսքային միջավայրը»⁷:

1.2 Դարձվածքների դասակարգումը

Հայ լեզվաբանները մեծ ուշադրություն են դարձրել նաև դարձվածքների դասակարգման հարցերին: Ընդհանրապես, գոյություն ունեն դարձվածքների դասակարգման բազմաթիվ մոտեցումներ և սկզբունքներ, որոնք հիմնվում են դարձվածք-

⁷ Ս. Աբրահամյան, Հայոց լեզու. Բառ և խոսք, Երևան, 1978, էջ 135-136:

ների տարբեր հատկանիշների վրա՝ իմաստային, կառուցվածքային, գրքային, բարբառային և այլն:

Առավել տարածված դասակարգումը հենվում է դարձվածքների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունների վրա: «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի» առաջաբանում դարձվածքները բաժանվում են չորս հիմնական խմբի՝ *դարձվածային միակցություն, դարձվածային միասնություն, դարձվածային կապակցություն* և *դարձվածային արտահայտություն*:

Դարձվածային միակցությունը բնորոշվում է իմաստային բացարձակ սերտաճմամբ, այսինքն՝ դարձվածքի իմաստը չի բխում նրա բաղադրիչների բառային իմաստներից, ինչպես օրինակ՝ *զլիսի ընկնել, զլուխ տանել, համը հանել* և այլն: Այսինքն՝ սրանք իմաստային տեսակետից իմաստային այնպիսի անբաժանելի, միասնական բաղադրիչներ են, որոնց մեջ բառերը, կորցնելով արդեն իրենց ունեցած, հանրորեն ընդունված իմաստը, տվյալ բառակապակցության մեջ վերաիմաստավորվում են և արտահայտում են բոլորովին նոր իմաստ: Այս կապակցությամբ Ա. Սուքիասյանը նշում է, որ այս դարձվածքները որոշակի քերականական կարգերի (խոսքի մասերի) պատկանող բացարձակապես անբաժան, միաձույլ իմաստային միավորներ են: Նրանց բաղադրիչների մեջ կենդանի, գործող շարահյուսական կապի բացակայության պատճառով նախադասության մեջ հանդես են գալիս որպես մեկ ամբողջական, անբաժանելի անդամ: Դարձվածքի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր բառ ոչ միայն չունի հանրորեն գիտակցված և ընդունված իր բառային իմաստը, այլև ընդհանրապես զուրկ է որևէ ինքնուրույն, առանձին բառային իմաստից:

Պարձվածային միասնությունը մասամբ է տարբերվում դարձվածային միակցություններից, քանի որ այսօրինակ կազմություններում դարձվածային իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքի բաղադրիչների առանձին, փոխաբերական իմաստներով, ինչպես օրինակ՝ *աչք գցել, վիզ ծռել, գլխին նստել* և այլն: Այս դեպքում դարձվածքի իմաստը բխում է առանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից, բայց այն տարբերությամբ, որ բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, իսկ դարձվածքն ամբողջապես ստանում է վերաիմաստավորված, ընդհանրացված նշանակություն: Նմանօրինակ դարձվածքներին բնորոշ է պատկերավոր իմաստը, որով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցություններից: Այս խմբի դարձվածքները կոչվում են *իդիոմներ* կամ *իդիոմատիկ արտահայտություններ*:

Պարձվածային կապակցությունները կազմվում են ազատ և դարձվածաբանորեն կապված իմաստ ունեցող բառերով, որոնք հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով մնում են կախյալ վիճակում, ինչպես օրինակ՝ *նուրբ հարց, նուրբ վիճակ, քիթը ջարդել, կյանքի ընկեր* և այլն: Այլ կերպ ասած՝ սրանց ընդհանուր նշանակությունը լիովին կախված է բաղադրիչների նշանակությունից, ուստի և հաճախ կազմվում են ազատ և դարձվածաբանորեն կապված բաղադրիչներից:

Պարձվածային արտահայտությունները բնորոշվում են նրանով, որ կազմված են ամբողջապես ազատ իմաստ ունեցող բառերից. դրանց իմաստը բխում է դարձվածքը կազմող բաղադրիչների բառային իմաստից, ինչպես օրինակ՝ *ծառերի ետևում անտառը չտեսնել, լինել, թե չլինել, կենդանի դիակ* և այլն:

Դարձվածքները դասակարգվում են նաև՝ ըստ խոսքի-մաստային պատկանելության, այսինքն՝ ըստ այն բանի, թե տվյալ դարձվածքն ինչ խոսքի մասի է փոխարինում:

Ա. Սուքիասյանն իր «Հոմանիշները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ, հենվելով ռուս լեզվաբան Ն. Շանսկու տեսակետին, դարձվածքները բաժանում է երկու խմբի՝ *հաղորդակցական* և *անվանական*: «Հաղորդակցական տիպի դարձվածային արտահայտություններ են համարվում նախադասություններին համարժեք բայական բառակապակցությունները, - գրում է Սուքիասյանը, - որոնք տրամաբանորեն համագոր են դատողությանը»: Այս կարգի դարձվածքներից են՝ *դառը դատել՝ դատարկ նստել* «շատ աշխատել և քիչ ստանալ», *երկաթը տաք-տաք կծեծեն* «հարմար առիթը բաց չթողնել», *ճիշտ խոսք աչք կծակի* «մարդիկ չեն սիրում, երբ իրենց պակասությունները երեսին են ասում» և այլն:

Ինչ վերաբերվում են *անվանական* դարձվածքներին, ապա դրանք այն կապակցություններն են, որոնք հավասարազոր են նախադասության որոշակի մասին կամ բառային արժեք ունեն. կատարում են անվանական գործառույթ և տրամաբանորեն համապատասխանում են հասկացությանը, ինչպես օրինակ՝ *բաբելոնյան աշտարակաշինություն* «խառնաշփոթ», *աջ ձեռք* «գլխավոր օգնական», *աչքից սուրմա թոցնող* «գող» և այլն:

Իս. Բադիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարանի» առաջաբանում դարձվածքների այս դասակարգումը պահպանված է, սակայն դարձվածքների տեսակները նշված են հակառակ հերթականությամբ՝ առաջինը նշվում են *անվանական դարձվածային միավորները*, իսկ երկրորդը՝ *հաղորդակցական* դարձվածքները: Անվանական դարձվածային

միավորները, իրենց հերթին, ըստ իրենց իմաստային, բառաքերականական, ինչպես նաև գործառական հատկանիշների, բաժանվում են հինգ խմբի՝

1. գոյականական (*արջի ծառայություն, շան ու կատվի ընկերություն*),
2. ածականական (*աստծո գառ, շան մսի գին, հազար տաշտ ու մաղից հաց կերած*),
3. բայական (*գլխին նստել, խոսքը կտուրը գցել, ճիպոտը իր քուրից կտրել*),
4. մակբայական (*քթի տակ, ոտից գլուխ, մինչև արյան վերջին կաթիլը*),
5. եղանակավորող (*գլուխը քարը, խելքին նայիր, դու քո աստված*):

Մի քանի խոսք՝ **դարձվածք-նախադասություն** փոխհարաբերության մասին:

Եթե ելակետ են դարձվածքի վերը թվարկված հիմնական հատկանիշները, ապա եղանակավորող դարձվածքների և նախադասության միջև կան էական տարբերություններ, թեև ընդհանուր գծերն էլ քիչ չեն:

Այս կապակցությամբ, անհրաժեշտ է անդրադառնալ նաև **հնչերանգի** հարցին:

Ինչպես հայտնի է, նախադասության արտահայտված միտքը գոյանում է նրա անդամների արտահայտած իմաստների և քերականական հարաբերությունների ամբողջության հիման վրա, որոնց լրացնում է համապատասխան հնչերանգը: Ըստ էության, հնչերանգը պայմանավորում է նախադասության ավարտվածությունը՝ անկախ նախադասության անդամների քանակից և շարահյուսական կապերից: Մեծ է հնչերանգի հատկապես ռիթմերի դերը նաև առաձներում և ասաց-

վածքներում, որոնք արտահայտում են ավարտուն միտք, որն էլ մեծ մասամբ ձևավորվում է հանգավորման (իմա՝ հնչերանգի) շնորհիվ:

Գալով դարձվածքին՝ ապա այստեղ չի կարելի խոսել ավարտուն մտքի մասին, քանի որ դարձվածքները հիմնականում փոխարինում են ՝ նախադասության որևէ անդամի, ուստի դարձվածքի արտահայտածն ավելի շուտ *իմաստ* է, քան *միտք*: Այս պարագայում, թվում է, թե դարձվածաբանության մեջ հնչերանգը ոչ մի դեր չի խաղում, քանի որ այն չի կարող պայմանավորել դարձվածքի ավարտուն միտքը, ինչպես որ նախադասության պարագայում է: Սակայն առանձին դեպքերում հենց հնչերանգն է դառնում նախադասությունը դարձվածքից բաժանող հիմնական սահմանագիծ:

Օրինակ՝

Հայերենում շատ գործածական է *ինչ էք ասում* կառուցվածքը, որը կախված է հնչերանգից և կարող է արտահայտել միանգամայն տարբեր մտքեր.

- *ինչ էք ասում* - գիտեմ, թե դուք ինչ էք ասում,
- *ի՛նչ էք ասում* - հարցական,
- *ի՛նչ էք ասում* - ծաղրական,
- *ի՛նչ էք ասում* - զարմացական, հիացական,
- *ինչ էք ասո՞ւմ* - սպառնական:

Առաջին երկու տարբերակները սովորական նախադասություններ են՝ ունեն գեղջված ենթակա, ստորոգյալ և լրացում, որոնց շարահյուսական կապերը մթազնաձ չեն, իսկ պատմողական կամ հարցական հնչերանգը թույլ է տալիս խոսել ավարտուն մտքի մասին՝ պահպանելով բառերի իմաստային ինքնուրույնությունը:

Միանգամայն այլ պատկեր են ներկայացնում վերջին երեք կառուցվածքները. *ի՛նչ էք ասում*-ը կառուցվածքային և շարահյուսական տեսակետից ոչնչով չի տարբերվում նախորդ երկուսից, սակայն տվյալ դեպքում չենք կարող խոսել նախադասության մասին, քանի որ քննարկվող երեք բառերն արդեն կորցրել են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բացի դրանից՝ նրանց միջև շարահյուսական կապերը մթագնած են: Այլ կերպ ասած՝ *ի՛նչ էք ասում* ծաղրականում չկա գեղչված ենթակա, ստորոգյալ և լրացում կամ՝ որոշակի իմաստներով օժտված բառեր: Այդ բոլորը միաձուլվել են իրար և ստեղծել *կայուն կապակցություն և իմաստային ամբողջականություն*, որոնք բնորոշ են դարձվածքներին: Ասվածից երևում է, որ *ի՛նչ էք ասում* ծաղրականը պետք է թարգմանվի կամ վերարտադրվի որևէ պատրաստի կազմությամբ, ինչպես օրինակ՝ *ա՛յդ էր պակաս, է՛լ ինչ կուզեք* և այլն:

Նույն սկզբունքով էլ *ա՛յդ էր պակաս, է՛լ ինչ կուզեք* կառուցվածքները կարող են գործածվել առանց ծաղրական հնչերանգի և դառնալ սովորական նախադասություններ՝

- *այդ էր պակաս* (բոլոր բաները կային, միայն այդ էր պակաս),
- *էլ ինչ կուզեք* (չգիտեմ, թե էլ ինչ կուզեք):

Գալով *ի՛նչ էք ասում* զարմացական-հիացական և *ինչ էք ասո՞ւմ* սպառնական ձևերին, ապա սրանք նույնպես կարող են դիտվել որպես հնչերանգի հիման վրա ձևավորված կազմություններ՝ դարձվածքներ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն նախադասությունների, որոնցում հնչերանգը պայմանավորում է մտքի ավարտունությունը, դարձվածքների՝ որպես խոսքի կայուն և պատրաստի միավորների, դասակարգման

համար հնչերանգն էական գործոն չէ, սակայն որոշ դեպքերում կարող է դարձվածքը տարանջատել սովորական նախադասությունից, քանի որ բառակապակցության *վերախմաստավորումը* տեղի է ունենում հենց հնչերանգի շնորհիվ:

1.3 Իսպաներենի դարձվածաբանության մեջ առկա հիմնական պատկերացումներն ու միտումները

Կարելի է ասել, որ իսպանագիտական աղբյուրներում դարձվածաբանության հարցերին որևէ հիմնարար աշխատություն չի նվիրվել: Ճիշտ է առանձին լեզվաբանական աշխատություններում և համապատասխան բառարաններում հետազոտողներն այս կամ այն չափով անդրադարձել են դարձվածաբանությանը, սակայն չի կարելի խոսել իսպանական դարձվածաբանական դպրոցի մասին, որպիսին գոյություն ունի Ֆրանսիայում և Ռուսաստանում: Իսպանագիտական աղբյուրներում շեշտը դրվել է առաձների, ասացվածքների և բանավոր խոսքի ուսումնասիրությունների վրա, ուստի համեմատաբար քիչ են նաև իսպաներեն դարձվածաբանական բառարանները⁸:

Իսպանական դարձվածաբանական ամենամեծ բառարանը երկլեզվյան է և հրատարակվել է ոչ թե Իսպանիայում կամ Լատինական Ամերիկայում, այլ Ռուսաստանում: Ռուս իսպանագետներ Լևինտովայի, Վոլֆի, Մովշովիչի և Բուդնիցկայայի հեղինակած «Իսպաներեն-ռուսերեն դարձվածաբանական բառարանը» լույս է տեսել 1985 թվականին, Մոսկվայում

⁸ R. Caballero, Diccionario de Modismos de la Lengua Castellana, Buenos Aires, 1947.

և պարունակում է շուրջ 30.000 դարձվածաբանական միավոր⁹: Դրանից մեկ տասնամյակ անց Մադրիդում հրատարակվել է Ֆեռնանդո Վարելայի և Ուգո Կուբարտի «Ժամանակակից իսպաներենի դարձվածաբանական բառարանը», որը ներառում է 20-րդ դարի երկրորդ կեսի իսպաներեն դարձվածապաշարը: Եվ, վերջապես, 2000 թվականին հրատարակվել է Ա. Բույտ-րագոյի «Դարձվածքների և կայուն բառակապակցությունների բառարանը», որում հանրագումարի է բերված իսպաներենի հիմնական դարձվածապաշարը ¹⁰: Իսկ ահա իսպաներեն դարձվածքների թարգմանության խնդիրը համակողմանի քննության է ենթարկվել Հ. Բադդասարյանի աշխատություններում¹¹:

Իսպանագիտական աղբյուրներում «դարձվածաբանություն» իմաստով գործածվում է *fraseología* եզրույթը, որն ընդգրկում է կայուն բառակապակցությունների բոլոր տեսակները՝ ներառյալ դարձվածքները, ասացվածքները և թևավոր խոսքերը (*locuciones, frases proverbiales, refranes*): Որոշ գործածականություն ունի նաև *frases hechas - կայուն բառակապակցություններ* եզրույթը:

Իսպանական դարձվածաբանության ասպարեզում մեծ ներդրում ունի իսպանացի նշանավոր լեզվաբան Խուլիո Կասարեսը:

⁹ E. Levintova y otr. Dictionario franseológico español-ruso, Moscú, 1985.

¹⁰ F. Varela, H. Kubarth, Diccionario franseológico del español moderno, Madrid, 1994, A. Buitrago, Diccionario de dichos y frases hechas, Madrid, 2000.

¹¹ Sté u Baghdasarián H. Algunas consideraciones en torno a los procedimientos de traducción de refranes y proverbios en Alea: Estudios Neolatinos, vol. 19/3, Universidade Federal do Rio de Janeiro, 2017, pp. 494-509; Baghdasarián H. Algunas consideraciones sobre la traducción al italiano de las paremias de la novela Rinconete y Cortadillo de Cervantes en Paremia, 31, 2021, pp. 149-161 և այլն:

Դարձվածաբանության խնդիրներին Կասարեսն անդրադարձել է իր «Ժամանակակից իսպաներենի բառարանագրության ներածություն» աշխատությունում, որը լույս է տեսել 1950 թվականին: Վերլուծելով կայուն բառակապակցությունների զանազան տեսակները և դարձվածքը դիտարկելով որպես առանձին երևույթ՝ Կասարեսը դարձվածքը համարում է «*խոսքի մասի գործառությամբ օժտված և նախօրոք հայտնի միասնական իմաստ արտահայտող երկու կամ ավելի բառերի կայուն կապակցություն, որը չի հանդիսանում բաղադրիչների սովորական իմաստների սոսկական հանրագումարը*»¹²:

Այսինքն՝ Կասարեսը դարձվածքի սահմանման հիմքում դնում է իմաստի կայունությունը և ամբողջականությունը (*la estabilidad y la unidad de sentido*), որը չի կարող նույնացվել նախադասության արտահայտած մտքի հետ: Որպես օրինակ, Կասարեսը բերում է *noche toledana* դարձվածքը և նշում, որ *noche* «գիշեր» բառի կապը *Toledo* անվան հետ ոչ մի կերպ չի հիմնավորվում *noche toledana* դարձվածքի «աղմկոտ գիշեր» իմաստը:

Խոսելով դարձվածքների կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների մասին՝ Խ. Կասարեսը ելակետ է ընդունում այն, թե տվյալ դարձվածքն ինչ խոսքի մասի է փոխարինել: Ըստ այդմ՝ նա տարբերակում է ինը հիմնական տարատեսակ.

- անվանական (*nominales*)
- ածականական (*adjetivales*)
- բայական (*verbales*)
- դերբայական (*participales*)

¹² J. Casares, Introducción a la lexicografía moderna, Madrid, 1950, 224:

- մակբայական (*adverbiales*)
- դերանվանական (*pronominales*)
- բացականչական (*exclamativas*)
- շաղկապային (*conjuntivas*)
- նախդրային (*prepositivas*):

Այսպիսով, դարձվածքները կարող են փոխարինել ցանկացած խոսքի մասի, ներառյալ ձայնարկությունները և նախդիրները: Նկատելի է, որ բայը ներկայացված է երկու տարատեսակով՝ *բայական* (*verbales* և *դերբայական* (*participales*): Սրանցից առաջինում բայը հանդես է գալիս խոնարհված ձևերով, իսկ երկրորդում սկսվում է *hecho* «դարձած» հարակատար դերբայով՝ *hecho un mar de lágrimas* «արցունքի ծով դարձած», *hecho una sopa* «սաստիկ» թրջված և այլն¹³:

Կասարեսի օգտագործած եզրույթները հայերենում ունեն իրենց համարժեքները: Բացառություն է կազմում միայն *դերբայական դարձված* (*locución participial*) եզրույթը, որը հայերենում գործածվում է միանգամայն այլ իմաստով: Հայոց լեզվում *դերբայական դարձվածքը* ուղղակի իմաստով դարձված կամ կայուն բառակապակցություն չէ, այլ, ինչպես նշված է «Լեզվաբանական բառարանում», դերբայով և լրացումներով արտահայտված նախադասության անդամ: Հետևաբար, շփոթությունից խուսափելու նպատակով՝ ճիշտ կլինի Կասարեսի օգտագործած *locución participial* եզրույթը թարգմանել *հարակատար դերբայով կազմված դարձվածք*, առավել ևս, որ Կասարեսը այդ իմբում զետեղում է միայն հարակատար դերբայով կազմված դարձվածքները:

¹³ Casares, նշվ. աշխ., էջ 185:

Արդեն ասվել է, որ իսպաներեն առաջին դարձվածաբանական բառարանը լույս է տեսել ընդամենը 1994 թվականին, երբ Հայաստանում դարձվածաբանության ուսումնասիրությունը արդեն բավականին առաջադիմել էր: Ուշագրավ է, որ գրքի առաջաբանում հեղինակներն անհրաժեշտ են համարում հիմնավորել իսպաներեն դարձվածաբանական բառարանի գոյությունը: - Ինչո՞վ է արդարացվում դարձվածաբանական բառարանի գոյությունը,- հարցնում են նրանք և պատասխանում, որ սովորական բացատրական բառարաններում դարձվածքներին քիչ տեղ է հատկացված, և իրենց բառարանը նպատակ ունի գոնե մասամբ լրացնելու այդ բացը¹⁴:

Գալով դարձվածքի սահմանմանը և այլ բառակապակցություններից տարանջատմանը՝ Ֆ. Վարելան և Ու. Կուբարտը մնում են Խ. Կասարեսի դիրքերի վրա՝ ելակետային համարելով դարձվածքի կառուցվածքային և իմաստային *կայունությունն* ու *իդիոմայնությունը* (հատկաբանական բնույթը - *estabilidad e idiomatidad*):

Իսպանական դարձվածաբանության առավել համակողմանի ուսումնասիրություններից է ռուս լեզվաբաններ Ն. Կուրչատկինայի և Ա. Սուպրունի «Իսպաներեն լեզվի դարձվածաբանություն» աշխատությունը, որը լույս է տեսել 1981 թվականին, Մոսկվայում: Այս գրքում հեղինակները մեծ ուշադրություն են դարձնում հատկապես դարձվածքների առանցքային տարրերի՝ անփոխարինելի միավորների ուսումնասիրությանը: Սրանք այն բառերն են, որոնք ցուցաբերում են որոշ փոխաբերություն, հոմանիշություն և զգալի չափով պայմանավորում են դարձվածքի իմաստը: Ա. Կուրչատկինան և Ա. Սուպրունը նման բառերը բաժանում են յոթ խմբի՝ մարմնի մասեր,

¹⁴ F. Varela, H. Kubarth, նշվ. աշխ., էջ 4:

կենցաղի առարկաներ, հագուստ, բնակարան, նյութերի անուններ, բույսերի անվանումներ և կենդանիների անուններ:

Կենդանիների անուններով կազմված հոմանիշ դարձվածքներից նշվում են հետևյալ օրինակները.

- *Barbas de macho/de chivo* - այծի մորուք 2.սրածայր մորուք ունեցող մարդ,
- *Memoria de gallo/grillo* - հավի/ծղրիդի հիշողություն ունեցող,
- *Lengua de sierpe/vibora/escorpión* - օձի/իժի/կարիճի լեզու, խայթիչ,
- *Lengua serpentina/viperina* - օձի/իժի լեզու, խայթիչ¹⁵:

Իսպանական դարձվածագիտության հիմնական արդյունքները հանրագումարի են բերված ռուս նշանավոր իսպանագետ Վ. Ս. Վինոգրադովի «Իսպաններեն լեզվի բառագիտություն» աշխատությունում: Ամփոփելով դարձվածքի շուրջ արտահայտված կարծիքները՝ Վինոգրադովը դարձվածքի դասակարգման և խոսքի այլ տարրերից առանձնացման համար կարևոր է համարում հետևյալ գործոնները.

- *բառայնացվածությունը* (դարձվածքը իբրև որևէ խոսքի մաս հանդես գալը),
- *վերարտադրությունը*,
- *կայունությունը*,
- *իմաստային ամբողջականությունը*,
- *իդիոմայնությունը* (սրա էությունն այն է, որ դարձվածքի իմաստը չի հանդիսանում նրա կազմի մեջ մտնող բառերի իմաստների պարզ հանրագումարը),

¹⁵ Н. Курчаткина, А. Супрун, Фразеология испанского языка, Москва, 1981, 44-45:

- *բառերով արտահայտված ներքին ձևը* (վերախմաստավորվածությունը),
- *բառագիտական նշույթավորվածությունը* (պատկերավոր-արտահայտչական բնույթը):

«Վերը նշվածից բխում է,– գրում է Վինոգրադովը,– որ դարձվածաբանական միավորներն իրենց բնորոշ գծերով եւ պէս նմանվում են բառին. դրանք վերարտադրվում են լեզվում, ունեն ամբողջ դարձվածքին հատուկ իմաստ, կարող են քերականորեն հանգեցվել այս կամ այն խոսքի մասին, ունեն իրենց ներքին ձևը, բառի նման նախադասության անդամի դեր են կատարում, ոճական և ոճաբանական առումով նշույթավորված են և մտնում են բառային հոմանիշների շարքերի մեջ: Այդուհանդերձ, դարձվածքները մնում են իբրև լեզվի բառապաշարի առանձնահատուկ միավորներ, որոնք ունեն նաև իրենց՝ բառերից տարբերող գծերը: Կարևոր է նաև այն, որ ցանկացած բառ՝ պարզ թե բարդ, մշտապես *ամբողջապես ձևավորված* լեզվական միավոր է. բառի բաղադրիչները քերականական տեսակետից արդեն իսկ ամբողջապես ձևավորված են, մինչդեռ ցանկացած դարձվածաբանական միավոր, բառակապակցության նման քերականական տեսակետից ներկայանում է որպես *առանձնակիորեն ձևավորված* կազմություն: Սա նշանակում է, որ այն կազմված է առնվազն երկու բառից և որ բառերից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն քերականական ձևավորում, իր շեշտը և երբեք չի դադարում բառ լինելուց: Բառի գործածությունը դարձվածաբանական միավորում միայն նրա առանձնահատուկ գործառնությունն է: Դարձվածաբանական միավորների՝ առանձնակի ձևավորված լինելը ստեղծում է առանձնահատուկ՝ բառի համար գոյություն չունեցող հնարա-

վորություններ՝ հուզական-արտահայտչական նպատակներով օգտագործման համար¹⁶»:

Ակնհայտ է, որ, ըստ էության, դարձվածքի վերաբերյալ իսպանագիտության մեջ տարածված կարծիքներն ու պատկերացումները շատ չեն տարբերվում հայագիտության մեջ տարածված կարծիքներից և պատկերացումներից: Հայագետները և իսպանագետները հիմնականում համակարծիք են, որ *դարձվածքն ինքնուրույն լեզվական միավոր է, որն օժտված է որոշակի տարբերակիչ հատկանիշներով*:

Այդուհանդերձ անհնար է տալ դարձվածքի սպառիչ և ամբողջական սահմանումը, քանի որ դարձվածքն ինքնին շատ բարդ երևույթ է և շփման եզրեր ունի ինչպես բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, գործաբանության, այնպես էլ ռճաբանության հետ:

Առավել ամբողջական է թվում Խուլիո Կասարեսի՝ վերը հիշատակված սահմանումը՝ *«Խոսքի մասի գործառությամբ օժտված և նախօրոք հայտնի միասնական իմաստ արտահայտող երկու կամ ավելի բառերի կայուն կապակցություն, որը չի հանդիսանում բաղադրիչների սովորական իմաստների սուկկական հանրագումարը»*:

Այս սահմանման մեջ պակասում են դարձվածքի էական հատկանիշներից երկուսը՝ *վերարտադրելիությունը* և *հուզաարտահայտչականությունը*, ուստի կարելի է դրանք ներմուծել Կասարեսի տված ձևակերպման մեջ, որի արդյունքում կստացվի դարձվածքի հետևյալ սահմանումը՝ *«Դարձվածքը խոսքի մասի գործառությամբ օժտված և նախօրոք հայտնի միասնական իմաստ արտահայտող երկու կամ ավելի բառերի*

¹⁶ В. С. Виноградов, Лексикология испанского языка, Москва, 1994, 150-154:

կայուն և վերարտադրելի կապակցություն է, որը չի հանդիսանում բաղադրիչների սովորական իմաստների սոսկական հանրագումարը և օժտված է հուզաարտահայտչականությամբ»:

Անդրադառնալով դարձվածքի լեզվական այլ միավորներից տարանջատման հարցին՝ պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

ա. որպես բառակապակցություն, դարձվածքը մոտ է կանգնած ազատ կապակցությանը, ասույթներին, թևավոր խոսքերին և ասացվածքներին, սակայն դրանցից տարբերվում է երկու հիմնական առանձնահատկությամբ՝ *չի արտահայտում ամփոփ միտք և չունի ավարտուն հնչերանգ*.

բ. որպես բառագիտական միավոր, դարձվածքը մոտ է բառին, սակայն դրանից տարբերվում է իր կառուցվածքով՝ *բաղադրիչների քանակով և դարձվածքի կազմում հանդես եկող բառերի իմաստների մթազնմամբ*:

Հարկ է նշել նաև, որ շատ դեպքերում իսպաներեն և հայերեն լեզվաբանական եզրույթների միջև չկա ճշգրիտ համապատասխանություն: Այսպես, հայերենը տարբերակում է *իմաստ* և *միտք* եզրույթները, որոնցից առաջինը վերաբերում է բառին, իսկ երկրորդը՝ նախադասությանը: Իսպաներենում այդպիսի հակադրություն գոյություն չունի: Իսպաներենում գործածվում են *idea* «միտք, գաղափար», *significado* «իմաստ», *significación* «իմաստ» և *noción* «գաղափար, հասկացություն» եզրույթերը, որոնք չեն վերաբերում միայն բառին կամ նախադասությանը, ուստի կարելի է ասել *idea de la palabra* «բառի իմաստ», այնպես էլ՝ *idea de la oración* «նախադասության միտք»:

Ակնհայտ է նաև, որ դարձվածքի և լեզվական այլ միավորների տարանջատման հիմքում ընկած է նաև համատեքստը: Վերջին հաշվով, շատ դեպքերում հենց համատեքստն է վճռում տվյալ բառակապակցության՝ դարձվածք լինել կամ չլինելու հարցը:

1.4 Կենդանիների անվանումները և դրանցով կազմված դարձվածքները

Բառապաշարի թեմատիկ-իմաստային դաշտում կենդանիների անվանումները դասակարգվում են որպես առանձին խումբ: Վերջինս ընդգրկում է կենդանիների բոլոր տեսակները՝ կաթնասունները, սողունները, թռչունները, ձկները և միջատները: Հայ իրականության մեջ կենդանիների անվանումների ուսումնասիրությանը վերաբերող, մինչև օրս գոյություն ունեցող ուսումնասիրություններում գերազանցապես շոշափվել են ծագումնաբանական հարցեր: Ակադ. Գ. Բ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատությունում, օրինակ, ներկայացված է կենդանիների բնիկ հայերեն անունների ամբողջական ցանկը, որը հնարավորություն է տալիս վերականգնելու նախապատմական շրջանում հայերի մշակույթի և քաղաքակրթության ընդհանուր պատկերը՝ ներառելով նաև որսորդության, անասնապահության և ձկնորսության հետ կապված եզրույթները:

Մեկնաբանելով կենդանիների հայերեն անվանումները՝ Գ. Բ. Ջահուկյանը գրում է. «Հայերենը հարուստ է ինչպես վայրի, այնպես էլ ընտանի կենդանիներին բնիկ հնդեվրոպական անվանումներով: *Որս, երէ, (էրէ), թակարդ, թարփ* բառերը ցույց են տալիս որսորդության և ձկնորսության տարածվածու-

թյունը, սակայն ձկնորսությունը հավանաբար կապված է եղել ավելի շատ գետերի ու լճերի հետ, և ձկնատեսակների բնիկ հնդեվրոպական անվանումները շատ քիչ են: Զարգացած անասնապահության մասին են խոսում ոչ միայն *կով, եզն*. **հովի* «ոչխար» (*հովի* բառում), *այծ* բառերի և նրանց տարբեր հասակների անվանումների առատությունը՝ *հորթ, մոզի, երինջ, որոջ, գառն, ուլ* և այլն, այլն այնպիսի անասնապահական եզրույթները, ինչպիսիք են *հաւրան* «հոտ» *արածեմ, հովի, ստերջ, տուար*, թերևս նաև *գոմ*: Հայերին հայտնի են եղել *շունը, ձին* (բայց ոչ տարածված հնդեվրոպական անվանումով), *էշը*: Վայրի կենդանիների անուններից սովորական են *գայլ, արջ, աղվես, ինձ, լուսան, ոզնի*: *Առյուծ, կորիժոն* անվանումները կազմված են կամ մասնավորված են ավելի ուշ՝ հնդեվրոպական համապատասխան հիմքերի վրա: Բավական շատ են թռչունների, սողունների և միջատների անվանումները՝ *հավ, աքաղաղ, աղավնի, արծիվ, բու, լոր, ծիծառն, կաքավ, կկու, կռունկ, յուպոպ, որոր, ցին, ուրուր, անիծ, լու, մաթիլ, մլակ, մրջիռն, ո (ը), ջիլ, սարդ, տիգ, մեղու, բոռ, կետ, մուն, թիթեռն, այծ, իժ, քարք* և այլն: Եթե ճիշտ է *կրիա* բառի ստուգաբանությունը, և եթե այն իմաստային ուշ մասնավորեցման արդյունք չէ, ապա հայերը պիտի բավական վաղ ծանոթացած լինեին այդ կենդանուն»¹⁷:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ, բացի բնիկ հնդեվրոպական կենդանիների անվանումներից, հայերենն ունի նաև մեծ թվով փոխառյալ անվանումներ, ինչպես օրինակ՝ *փիղ, մատակ, հովազ, վարազ, բազե, կետ (կետաձուկ), առնետ* և այլն, որոնք նույնպես կազմում են հայերենի բառապաշարի

¹⁷ Գ. Բ. Զախուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 260:

անկապտելի մասը և զգալի չափով ներկայացված են հայերեն դարձվածքներում:

Եթե անտեսվի ծագումնաբանական հայեցակետը, ապա հայերեն կենդանիների անվանումների ողջ այս զանգվածը դեռևս առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել: Պարզված չեն, մասնավորապես, այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են կենդանիների անվանումների գործածության հաճախականությունը և բառակազմական արդյունավետությունը:

Տվյալ պարագայում առավել հետաքրքիր է կենդանիների անվանումների *դարձվածակազմական արդյունավետությունը*, որն ընդհանրապես ուսումնասիրված չէ:

Ուսումնասիրված աղբյուրներում հետազոտողները չեն անդրադարձել նաև *կենդանիների անվանումների հոմանիշության* և, սրա հետ կապված՝ *հոմանիշ անվանումների դարձվածակազմական արդյունավետության հարցին*, որի կարևորությունը չի կարելի թերագնահատել, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է արտաքին համեմատություններին:

Պատկերը մոտավորապես նույնն է նաև իսպանագիտական աղբյուրներում: Ճիշտ է, մասնագիտական բառարաններում կենդանիների անունները դասակարգված են ըստ առանձին տեսակների՝ կաթնասուններ, թռչուններ, սողուններ և այլն, սակայն հատուկ բառագիտական ուսումնասիրություններ դեռևս չեն կատարվել:

Դարձվածաբանական բառարանները, պարունակելով իսպաներենի և հայերենի դարձվածքների հիմնական զանգվածը, ներառում են նաև կենդանիների անուններով կազմված դարձվածքներ: Սակայն դարձվածաբանական բառարանները չեն անդրադառնում դարձվածքների կառուցվածքային-իմաս-

տաբանական խնդիրներին, բացի դրանից՝ դրանցում ամփոփված նյութը չի կարելի ամբողջական համարել, քանի որ շատ բան կախված է բառարանի հեղինակների որդեգրած մոտեցումներից ու դարձվածքի սահմանումների վերաբերյալ նրանց ունեցած պատկերացումներից:

Նշենք նաև իսպաներենի և հայերենի բարբառային տարբերակները, որոնք իրենց կնիքն են դնում դարձվածաբանական բառարանների կազմության վրա:

Ինչպես հայտնի է, իսպաներեն խոսվում է ոչ միայն Իսպանիայում, այլև բազմաթիվ այլ երկրներում, և դրանից յուրաքանչյուրում ստեղծվել է, այսպես կոչված, *լեզվական սեփական մշակույթ*, որի կարևոր բաղադրիչներից է նաև *դարձվածաբանական մշակույթը*: Իսպաներենի՝ նման առանձնահատուկ զարգացման հետևանքով, այդ լեզվում համընդհանուր տարածում գտած դարձվածքների կողքին կան դարձվածքներ, որոնք ձևավորվել և գործածվում են միայն մեկ կամ մի քանի երկրներում՝ Արգենտինայում, Մեքսիկայում, Ֆիլիպիններում և այլն: Որոշ դարձվածքներ ունեն համաամերիկյան տարածում, բայց գործածական չեն Իսպանիայում, իսկ զգալի թվով դարձվածքներ էլ բնորոշ են միայն Իսպանիայի որոշակի տարածքների, այսինքն՝ իրենց բնույթով բարբառային են:

Այս խառնաշփոթը պարզեցնելու նպատակով բառարաններում կատարվում են համապատասխան նշումներ՝ ճշտելով այս կամ այն դարձվածքի տարածվածության սահմանները:

Հայերեն դարձվածաբանական բառարաններում դարձվածքները տարբերակված չեն ըստ բարբառների, սակայն կան նշումներ այս կամ այն դարձվածքի բարբառային բնույթի մասին:

Երկրորդ գլուխ

ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀՈՄԱՆԻԶՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՐՁՎԱԾԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

2.1 Կենդանիների անվանումների հոմանիշությունն խապաներենում և հայերենում

Դարձվածքների հոմանիշության հարցը սերտորեն կապված է դրանց առանցքային տարրերի, այսինքն՝ դարձվածքի անփոխարինելի միավորների հոմանիշության հարցի հետ, քանի որ բազմաթիվ դեպքերում դարձվածքների հոմանիշության հիմքում ընկած է հենց անփոխարինելի միավորների հոմանիշությունը:

Մյուս կողմից՝ դարձվածքների կառուցվածքային և իմաստաբանական ուսումնասիրությունը չի կարող արդյունավետ և ամբողջական լինել, եթե չի զուգորդվում դարձվածքների անփոխարինելի միավորների բառագիտական ուսումնասիրությամբ: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ինչպես կենդանիների անվանումների հոմանիշությանը, այնպես էլ դրանց դարձվածակազմական արդյունավետության հարցերին:

Ներկա աշխատության մեջ «կենդանու անվանում» եզրույթի տակ նշվում է կենդանիների բոլոր տեսակների անվանումները, այսինքն՝ բուն կենդանիների, թռչունների և միջատների:

Հարկ է նշել, որ լեզվաբանության մեջ կենդանիների անվանումների հոմանիշության հարցը բավարար չափով ուսումնասիրված չէ: Ըստ էության, կարելի է խոսել միայն հո-

մանիշների բառարաններում տեղ գտած նյութերի մասին, որոնց ընտրության և դասակարգման սկզբունքները պարզ չեն: Կենդանիների անվանումների պարագայում գոյություն ունի հոմանիշության երկու հիմնական չափանիշ՝ *ուղղակի իմաստներ* (բուն կենդանիների անվանումներ) և *փոխաբերական իմաստներ* (տվյալ կենդանուն վերագրվող հատկանիշներ):

Առաջին խմբի բառերի հոմանիշության դաշտը շատ սահմանափակ է, քանի որ խոսքը վերաբերում է կոնկրետ կենդանիների, սակայն, այդուհանդերձ, լեզուն իր պատմական զարգացման ընթացքում ստեղծում է գուգահեռ ձևեր՝ օգտվելով ինչպես իր ներքին հնարավորություններից, այնպես էլ արտաքին փոխառություններից: Սրանց պետք է ավելացնել նաև նույն կենդանիների տարբեր տեսակների, տարիքային խմբերի անվանումները, որոնք նույնպես կոնկրետ են: Այս առումով, բուն կենդանիների անունների հոմանիշության սահմանները շատ հստակ են և չեն կարող խառնվել այլ բառերի հոմանիշության հետ:

Փոխաբերական իմաստների դեպքում պատկերը բոլորովին այլ է, քանի որ հաճախ այս կամ այն կենդանուն վերագրվող հատկանիշները կարող են արտահայտվել հոմանիշների շատ ընդարձակ շարքերով: Այսպես, կարելի է խոսել նապաստակի վախկոտության, փղի ուժի, ձիու արագավազության, մեղվի ժրաջանության կամ կրիայի դանդաղաշարժության մասին և յուրաքանչյուր դեպքում գործածել մեծ թվով հոմանիշ բառեր:

Եվ քանի որ կենդանիներն իրենց հատկանիշներով կարող են մոտենալ միմյանց կամ հակադրվել, ապա փոխաբերական վերացական դաշտում կարելի խոսել կենդանիների անվա-


նումների *հոմանիշության* և *հականիշության* մասին: Այսինքն՝ եթե *նապաստակի* վախկոտությունը հակադրվում է *առյուծի* քաջությանը, ապա, ըստ տրամաբանության, *նապաստակ* և *առյուծ* բառերը հականիշներ են: Նույն կերպ էլ վերացական դաշտում կարող են միմյանց հակադրվել *ձին* և *կրիան*, *արծիվն* ու *հավը* կամ *փիղն* ու *ճանճը*:

Այդուհանդերձ, փոխաբերական-վերացական դաշտում կենդանիների անվանումների հոմանիշությունը կամ հականիշությունը հարաբերական է և կապված է հիմնականում ոճական և հուզաարտահայտչական գործոնների հետ:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ կենդանիների անվանումների ուղղակի (ոչ փոխաբերական) դաշտում կարելի է խոսել միայն հոմանիշության մասին, մինչդեռ անուղղակի (փոխաբերական) դաշտը ներառում է ինչպես հոմանիշները, այնպես էլ հականիշները:

Իսպաներենում և հայերենում կենդանիների անվանումների հոմանիշության հարցը պարզելու նպատակով ստորև ներկայացված է այդ անվանումների ամբողջական ցանկը: Իսպաներեն բառերը քաղված են Սայնս Ռոբլեսի «Իսպաներենի հոմանիշների և հականունների բառարանից», հայերեն հոմանիշները՝ Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ից և Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»¹⁸-ից:

¹⁸ **Sainz de Robles**, Diccionario español de sinónimos y antónimos, La Habana, 1968, **Ա. Մ. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2003, **Պ. Բեդիրյանի** «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան», Երևան, 2011:



Կենդանու անվանում	Իսպաներենում	հայերենում
1. Ardilla - սկյուռ	<i>arda, petigris (2)</i>	<i>սմոռիկ (բրբ.), սվորիկ (բրբ.), մկըճեն (բրբ.) (3):</i>
2. Asno - էշ	<i>borrico, burro, jumento, rucio, ruche, pollino, onagro (8)</i>	<i>ավանակ, իշուկ, կախականջ (բրբ.), մոխրաթավալ, զռիկ (արու), չոշո (բրբ.), լոշտո (բրբ.), ցիռ (վայրի էշ), իշավայրի, ցռեշ (վայրի էշ) (11)</i>
3. Buey - եզ	<i>cabestro, manso, boyazo, boyanción, cotral, cutral (6)</i>	<i>արջառ, դամիկե (հզվդ.), բուլա (բրբ.) (3)</i>
4. Caballo - ձի	<i>corcel, alazán, bridón, palafren, frisón, percherón, trotón, alfarra, jaca, jamelgo, penco, cuartago, rocín, rocino, matalón, sotreta, chalate, gurrufiero, cuatropeo, potro, tusón, yegua (22)</i>	<i>զրաստ, ասպ (հին), անդրուար (կենտսաբակավորների կարգին, ձիագզիների ընտանիքին պատկանող ընտանի կենդանի), որձաձի, հովատակ, փահլ (հնգ.), այդր (բրբ.), զամբիկ, մատակաձի, մատյան, ճակ,</i>

		ճայիկ, զարմուհի, սարակ (հնգ.), մաղյան (բրբ.), նժույգ, ռահվար, արշավանի, արաբիկ (հեծնելու), վարգաձի, բոչո (մանր), բեռնաձի, երիվար, վարգանի, մտրուկ. (ըստ գույների) սև, աշխետ (շիկագույն), շառատ (թխակարմիր), ճանճկեն (սև և ճերմակախառն), ճարտուկ (սպիտակ սևախայտի), կոտրնտոտիկ (սպիտակախայտ ոտքերով). (չմալած) մատակախագ, մատակախանձ, (մալած) քաժավարուտ, թաղամսավոր (33)
5. Cabra - այծ	<i>ceaja, hirco, ibice, bicerra, pudú, musmón, ruminare</i> (7)	քաղ, քոշ, նոխագ, մաղ, խլամի (բրբ.), ալոջ, ամիկ, ամլիկ, չափիճ (բրբ.), ուլ (10)
6. Camello - ուղտ	-	շավառն (հնգ.), մալախ (արու), նառ (առջևից գնացող), ուղտաձագ, կուլոն,

		կուլոնակ, քոշակ, փոթուխ (8)
7. Cangrejo - խեցգետին	-	կարկինոս, աստակոս, քարճանկ, քարժանկ (4)
8. Caracol - խխունջ	<i>concha, conca (2)</i>	խղունջ, ըրոճ, շոդոտ, լորնտուկ (անպատյան), խոնջոյլ (հզվդ.), խալիզոն (բրբ.), խեռթոշ (բրբ.), կողլանջ (բրբ.), կողինջ (բրբ.), կողլեզ (բրբ.), սնկլականջ (բրբ.) (11)
	<i>varetón, gamo, paleto, gamuza, antilope, rupicabra (7)</i>	կխտար, այծյաւ, վիթ, եղջերու, մարալ, ջեյրան (6)
10. Cocodrilo - կոկոդիլոս	-	տիտենոն (հնգ.), նհանգ, խույթ, խիթ (4)
11. Comadreja - աքիս	-	մկնհարսուկ, ախազ (հզվդ.), կզաքիս (3)
12. Culebra - օձ	<i>serpiente, sierpe, culebrón, pitón, boa, crótalo, cascabela, cobra, áspid, vibora (10)</i>	իժ, քարբ, ծարբ, բասիլիկոս, բոա, լոդա, լորսու, ջրօձ, պյոթոն, եղջերիկ, վիշապ (11)
13. Elefante - փիղ	<i>proboscidio, mastodonte, mamut, dinoterio (4):</i>	-

14. Erizo - ոզնի	-	<i>էքինու (ծովային), ժուժիկ (բրբ.), կոզնի (բրբ.) (3)</i>
15. Gato - կատու	<i>morro, minito, morroño, morrongo, mizo, micho, bibicho, miau (8)</i>	<i>փիստ, փիսիկ, կուզ, կատվիկ, կատվակ (5)</i>
16. Hiena - բորենի	-	<i>մարդագայլ (1)</i>
17. Jirafa - ընձուղտ	-	<i>շտրպաղանգ (հզվդ.), ուղտինձ (հզվդ.), անալութ (հզվդ.), գուրափա (հզվդ.) (4)</i>
18. Lagarto - մողես	<i>fardacho (1)</i>	<i>խլեզ (բրբ.), սարու (կանաչ), մկլեզ (բրբ.), մողոզիկ (բրբ.), քարաթռթռ (տաք երկրների) (5)</i>
19. León - առյուծ	-	<i>շեր (բրբ.), ուշքան (բրբ.), ապան (բրբ.) (3)</i>
20. Lince - լուսան	<i>rayo, aguila, genio (3)</i>	<i>լուսան, քավթար (հնգ.) (2)</i>
21. Pantera - հովազ	<i>yaguar (1)</i>	<i>ինձ, հո, յագուար փագառյուծ, ընձառյուծ (4)</i>
22. Tigre - վագր	-	<i>բըլընգ (բրբ.) (1)</i>
23. Liebre - նապաստակ	<i>conejo, gazapo, cuy, cobayo, acuti, cunículo (6)</i>	<i>ճագար, խոզիկ (հզվդ.), սվորիկ (բրբ.), խոյան (հնգ.), շղիկ, երկարականջ (6)</i>

24. Lobo - գայլ	<i>lobato, lobezno, coyote (3)</i>	-
25. Marmota - արջամուկ	<i>dormillón (1)</i>	<i>մկնարջ (1)</i>
26. Mono - կապիկ	<i>antropoide, simio, mico, macaco, cuadrúmano, gorilla, orangután, chimpancé, mandril, cepo, zambo, cuatí, congo, gringo, cay, araguato (16)</i>	<i>սպուզնա (հզվդ.), մայմուն (բրբ.) (2)</i>
27. Mulo - ջորի	<i>macho, burdégano, burreño, muleto, mohino, cebadero (6)</i>	<i>կիսեշ, իշակես, կիսազրաստ, բաշկտուր (բրբ.) (4)</i>
28. Oso - արջ	-	<i>ծուռթաթ, բրդոտ (2)</i>
29. Oveja - ոչխար	<i>carnero, cordero, borrego, ternasco, atona, artuna (6)</i>	<i>խաշն, միլոն (հնգ.), մաքի, պատրուճակ, ամարու (էզը), խոյ (արու), մալ (կրտած), թոխլու, արդի, օղիք (10)</i>
30. Perro - շուն	<i>chucho, can, cuzo, gozcue, tuso, galgo (6)</i>	<i>սկունդ (հնգ.), գամփո, գալաշուն, քած (էզը), բարակ, քերծե, պառական, սպականի (որսի), ցերբեր (կերբեր), քութի (բրբ.), քուչի (բրբ.) (11)</i>

31. Pez - ձուկ	<i>pez, peje, jara, ugo, pescado, pizco, ictiolito (6)</i>	<i>լողակ, մանրաձուկ, ճապալ, ցռիկ (4)</i>
32. Puerco - խոզ	<i>cerdo, cebón, guarro, gorrino, gocho, cocho, cochino, lechón, marrano, tunco, tocino, gruñeta, jabalí (13)</i>	<i>զոճամայր, մերուն (էզր), տախ (արու), խոճկոր, զոճի, վա- րագ, կինճ (7)</i>
33. Rana - գորտ	<i>sapo (1)</i>	<i>դողդոջ, գետնագորտ, ճոպաղու (բրբ.), սի- կիլ (բրբ.) (4)</i>
34. Rata - առնետ	<i>ratona, laucha, roedor (6)</i>	<i>մուկ, առսպոլ (բրբ.) (2)</i>
35. Ratón - մուկ	<i>rata, mur, tunduque, guarén, pericote, roedor (6)</i>	<i>առնետ, ջրիմուկ, դաշտամուկ, կրճան (4)</i>
36. Tortuga - կրիա	<i>carey, quelonido, calape, morrocoyo (4)</i>	<i>տաշտե կռնակ (բրբ.), կրիանկոտ, թակոտ, թակուր, կռ- նակոտ, կրիա, տաշ- տիկ (6)</i>
37. Topo - խլուրդ	-	<i>գետնամուկ, դաշ- տամուկ, խլմուկ (հնգ.), ամբևտ, ամ- բույտ, քոռ մուկ (6)</i>
38. Vaca - կով	<i>toro, cornúpeta, astado, bovino, becerro, ternero (6)</i>	<i>երինջ, քավեջ (բրբ.), ցուլ, մոզի, հորթ, ըն- ջուղ (6)</i>

39. Zorro - աղվես	<i>raposo, vulpécula, vulpeja, vulpino, zorruno, raposuno, camándulas, camastrón, zorrón, zorrocloco, astuto, taimado, ladino, disimulado, trampos, cauteloso, pícaro, sagaz (18)</i>	<i>խորամանկ, խարդախ, նենգ, աղվեսաբարո, հնարագետ, ճարտար, ծածկավիտ (7)</i>
Բ. Թռչունների անվանումներ	խսպաներեն	Հայերեն
40. Abubila - հուպոպ	-	<i>բուբու (բրբ.), սանտրգործի (բրբ.), սանտրեզլուի (բրբ.), սանտիկ (բրբ.), պուպու (բրբ.), պուպունկ (բրբ.), երուսաղեմի խորոզիկ (բրբ.) (7)</i>
41. Águila - արծիվ	<i>rapaz, rapiña, aguilón, aguilucho, gavián, guaraguao, gerifalte, alforre, borní, halcón, buitre, neblí, caricari, terzuelo (14)</i>	<i>արծվի (եջ), կանդ (արու), գիլիավք (բրբ.), անգդ, գիշանգդ, բագե, ուրուր, ճուռակ, շահե, ցին (10)</i>
42. Avestruz - ջայլամ	-	<i>իշտրմուղ (1)</i>
43. Canario - դեղձանիկ	-	<i>կանարյակ, քանա-</i>


		բիկ (2)
44. Cigüeña - արագիլ	<i>cigñal, manivela</i> (2)	տառեղ, լազլազ (բրբ.) (2)
45. Cotorra - թռչնակ	<i>papagayo, urraca, parlanchín</i> (3)	պապկա (հզվդ.), բուլթ (բրբ.) (2)
46. Codorniz - լորս-մարզի	<i>guarnición</i> (1)	լոր, լորսմարզ, թոզընեկ (բրբ.), ճոլոր (բրբ.), դոլոն (բրբ.), բտբտիք (բրբ.) (7)
47. Cuevo - ագռավ	-	արջնագռավ, գայլագռավ, որի (սև ագռավ), կռիկ (բրբ.) (4)
48. Gallina - հավ	<i>pollo, pita, ceneca, gallipava, gallineta, soma, gomarra, gallo</i> (8)	մարի, վառեկ, աքլոր, չտիկ (բրբ.), թխսկան, թխսմայր, թուխս, զրոթան (բրբ.) (8)
49. Ganso - սագ	<i>ánsar, ánade, anadeja, ansarón, ansarino, quetro, carraco, curro, parro, pato, lavancho, oca, auca, fusca, juta, navarro, conquén</i> (17)	դագ (բրբ.), բաղ (2)
50. Golondrina - ծիծեռնակ	<i>progne, golondrino, peregrino, agamundos, ambulante,</i>	ծիծեռ, ծիծառ, ծներդք (հզվդ.), ծծոկիկ (հզվդ.) (4)

	<i>mochilero, romero</i> (7)	
51. Gorrión - ծիս, ճնճ- դուկ	<i>pardal, pájaro</i> (2)	ճնճդուկ, ճնճուջ, ւ- ռունձ (բրբ.), հելհել (բրբ.) (4)
52. Pájaro - թռչուն 2. ճնճդուկ, ծիս	<i>ave, volátil, avecilla, pajarillo</i> (4)	հավք, հավ, թև (3)
53. Grulla - կռունկ	-	խորդ, գրե (2)
54. Muciélago - չղջիկ	<i>vespertillo, murciguillo, panique, vampiro, macrófilo, quiróptero</i> (6)	գիշերամուկ, հոլա- մուկ, սեկեմուկ, մշ- կաթև, մշկաթելուկ, բազկաթև, չիդջ (հզվ.), վաթվաթ (հզվ.), կաշեթև, գի- շերահավ, գիշերնուկ (11)
55. Paloma - աղավնի	<i>palomo, torcazo, sisella, zura, gura, collareja, pichón, palomino</i> (8)	աղունակ, աղունիկ, հավկիալ (վայրի), ա- ղավնաձագ, դոխ (բրբ.), դոկդոկ (բրբ.) (6)
56. Pavo - հնդուհավ	<i>pavezno, pavipavo, gallipavo, guajalote, guanjero, soso, incauto, estupido, imbecil</i> (9)	հնդկահավ, հնդակա- դաք, ճուրճուր (բրբ.), գոռել (բրբ.), կուռկուռ (բրբ.), մսրահավ (բրբ.), քելքել (բրբ.), ճուլուխ (բրբ.) (8)
57. Pavo real - սիրա- մարգ	-	սինամահավք, զմ- րուխտահավ, սքի (հզվ.) (3)

58. Ruiseñor - սոխակ	<i>filomela, filomena, roncal</i> (3)	<i>փիլոմել (հզվդ.), բլ-բուլ (բրբ.)</i> (2)
59. Tordo - կեռնեխ	<i>berrendo</i> (1)	<i>ճարեկ, սարյակ, սարեկ, պորշուկ, սա-րասմա, տորդիկ</i> (6)
60. Tortola - տատրակ	-	<i>աղավնի</i> (1)
61. Urraca - կաչաղակ	<i>picaza, marica, pega</i> (3)	<i>անծեղ, ճղարտ, չա-չանակ</i> (3)

Գ. Միջատների անվա-նումներ	Խսպաներեն	Հայերեն
62. Abeja - մեղու	<i>Abeja, obrera, zángano, abejón, abejorro, abejarrón, avispa, avispción</i> (8)	<i>ճանճ, մեղրաճանճ, մեղվաճանճ, դգեգ (բրբ.), մեղուկ, կրետ, իշամեղու, բոռ, բրետ, գոռեխ, շնա-ճանճ</i> (11)
63. Araña - սարդ	<i>Arañuela, tejedora, arácnido, alacrán, arraclán, tarántula, arador, capulina, escorpión, sangredo, uña, pito</i> (12)	<i>մամուկ, մանողակ, մորմ, գործարար, փաղեժ (բրբ.), ջուկ-հիկ (բրբ.), սանտրա-գործ (բրբ.)</i> (7)
64. Chicharra - ճպուռ, ծղրիդ	<i>cigarra</i> (1)	<i>ճռեկ, ճռիկ, գիշեր-հավուկ (բրբ.), խոտ-հասուկ (բրբ.), ճղուկ (բրբ.)</i> (5)
65. Chinche - մլակ, մծ-ղուկ	<i>mosquito, cínife, cenzero, violero</i> (4)	<i>մլակ, մոծակ, մժիկ</i> (5)
	<i>verme, lombriz,</i>	<i>ճիճու, անձրևաորդ,</i>

66. Gusano - որդ	<i>oruga, gusarapo, helminto, tecol, tenia, larva, cogollero, equinococo, sanguijuela, milo, miñosa, tórsalo, rotífero, triquina, filarial</i> (17)	<i>թրթուր, երիզորդ, զեռուն, ուտիճ, երկ-րամայր, ուտիճ, ցեց, շերամ, մետաքսա-ճիճու</i> (11)
67. Garrapata - տիզ	<i>caparra</i> (1)	<i>գառնասիրունկ, ան-թել, մունիճ (ոչխա-րի)</i> (3)
68. Hormiga - մրջյուն	<i>hormigüela, salpuga, anay, soplillo, vivifagua, aluda, ala-dica, formiga</i> (8)	<i>(հնց.), մրջմունկ (հնց.), մոծիկ, մոր-մունջ</i> (4)
69. Liendre - անիծ	<i>parásito, piojo, cáncano, carángano, picón, pulga</i> (6)	<i>մնիկ, մուն, մանրո-ջիկ, մաթիկ, մնեղ, մղերիկ, ոջիկ, լու</i> (8)
70. Mariposa - թիթեռ	<i>alevilla, átropos, palomilla, falena, polilla, pajarilla</i> (6)	<i>թիթեռնիկ, թթրմաղի (բրբ.), ալակոշկոշ (բրբ.), ալյուրմաղիկ, մաշկաթիթեղ, խլ-պիկ (բրբ.)</i> (6)
71. Mosca - ճանճ	<i>moscón, mosquito, tsetse</i> (3)	<i>մեղու, ձիաստաց (ձի-ու), շնաճանճ (շան), գարավ (թունավոր), մսաճանճ (մսի)</i> (5)



Ներկայացված հոմանիշների շարքերը հնարավորություն են տալիս կատարելու մի շարք ուշագրավ համեմատություններ և հանգեցնում որոշակի եզրակացությունների: Առանձին-առանձին դիտարկենք կենդանիների անվանումները, թռչնանունները ու միջատների անունները՝ հաշվի առնելով շարքերի քանակական և որակական առանձնահատկությունները:

2.2 Կենդանիների անվանումների հոմանիշության ընդհանուր պատկերը խապաներենում և հայերենում

Ընդհանուր առմամբ՝ ներկայացվեց 71 կենդանու անվանում: Իսպաներենում հոմանիշների թիվը կազմում է 326, հայերենում՝ 350:

Հատկանշական է, որ երկու լեզուներում էլ կենդանիների անունների հոմանիշները սահմանափակված են իրենց ուղղակի իմաստային դաշտերով, այսինքն՝ նշված հոմանիշները չեն արտահայտում անուղղակի կամ փոխաբերական իմաստներ: Բացառություն են կազմում միայն «ձի», «աղվես» և

«հնդուհավ» անվանումների հոմանիշները, որոնց մասին կխոսվի ստորև:

Չուտ քանակական տեսանկյունից, զարմանալի զուգադիպությամբ, առաջին տեղը զբաղեցնում են «ձի» անվան հոմանիշները, իսպաներենում՝ 22, հայերենում՝ 33: Հոմանիշ տարբերակների առատությամբ աչքի է ընկնում նաև «աղվես» անվանումը, որն իսպաներենում ունի 18, իսկ հայերենում՝ 7 հոմանիշ: Ի տարբերություն «ձի» բառի, իսպաներեն 18 հոմանիշներից 3-ն ունի ուղղակի (*raposo, vulpeja, vulpécula* - աղվես), իսկ 15-ը՝ փոխաբերական իմաստներ (*astuto* - խորամանկ, *taimodo* - նենգ և այլն): Հայերեն հոմանիշներից ոչ մեկը կենդանու անվանում չէ, և դրանց արտահայտած իմաստներն անուղղակի (փոխաբերական) են: Այս խմբի մյուս էական հատկանիշն այն է, որ հոմանիշների շարքում մեծ թիվ են կազմում ածականները, ընդ որում՝ ածական են հայերենի ցանկի բոլոր հոմանիշները՝ *խորամանկ, խարդախ, նենգ* և այլն, մինչդեռ իսպաներենում կան *raposo, vulpeja, vulpécula* - աղվես բառերը, որոնք կենդանիների անվանումներ են:

Որոշ անհամապատասխանություն է նկատվում «կապիկ» անվան հոմանիշների շարքում իսպաներեն 16 հոմանիշների դիմաց հայերենն ունի ընդամենը երկու զուգահեռ ձև, որոնցից մեկը (*ասյուզնա*) հազվադեպ է, մյուսը (*մայմուն*) բարբառային: Հարկ է նկատել, սակայն, որ իսպաներեն ցանկում տեղ են գտել կապիկների տեսակների անվանումներ՝ *մակակո, գորիլա, շիմպանզե*, որոնք տարածված են տարբեր լեզուներում և կարող էին գետնից լինել նաև հայերեն ցանկում:

Ուշագրավ է նաև «խոզ» իմաստով հոմանիշների շարքը, որտեղ իսպաներենն ունի 12, իսկ հայերենը՝ հինգ հոմանիշ:

Ձկան անվումները իսպաներենում ներկայացված են 6, իսկ հայերենում՝ 4 հոմանիշներով: Ի դեպ, իսպաներենն ունի *pez* - ձուկ կենդանին և *pescado* - ձկով պատրաստված կերակուր հոմանիշները, որոնցից երկրորդը թեև նշանակում է «ձուկ» (հմմտ. *ձուկ ուտել* = *ձկով պատրաստված ճաշ ուտել*), սակայն ուղղակի իմաստով ձկան անվանում չէ: Հայերենում նման տարբերակում չկա, և նշված երկու իմաստներն էլ արտահայտվում են միևնույն *ձուկ* բառով: Ընդհանրապես, ձկնանունների հոմանիշության և դարձվածակազմության հարցերը ունեն մի շարք ուշագրավ առանձնահատկություններ, որոնց կանոնադաշտանք դարձվածքների քննության ժամանակ¹⁹:

Թռչնանուններից նաև կարելի է հիշատակել «սագ» անվանումը, որի հոմանիշներն իսպաներենում հասնում են 17-ի, մինչդեռ հայերենն ունի ընդամենը երկու հոմանիշ տարբերակ:

Հակառակ պատկերն է ներկայացնում «հոպոպ» թռչնանունը, որը հայերենում ներկայացված է յոթ հոմանիշներով, մինչդեռ իսպաներենը չունի ոչ մեկը:

Մի փոքր այլ է «հավ» թռչնանվան հարցը: Բանն այն է, որ իսպաներենում «հավ» իմաստով գործածվում է երկու հիմնական բառ՝ *gallina* և *pollo*, որոնցից առաջինը նշանակում է «հավ թռչունը», իսկ երկրորդը՝ 1. «հավ կենդանին» 2. «հավով ճաշատեսակ, եփած հավ»: Այս տարբերակումը, ինչպես կտեսնենք դարձվածքների քննության ժամանակ, որոշ հարստություն է հաղորդում իսպաներենին:

¹⁹ Հմմտ. **Չ. Օհանյան**, Ձկնանուն պարունակող դարձվածները իսպաներենում և հայերենում, Ռուսական բանասիրության հանդես, հ. 1, 2004թ., Երևան, 2004, էջ 78-85:

Չնայած «հնդուհավ» թռչնանվան հոմանիշների շարքերի մոտավոր հավասարությանը (իսպաներենում՝ 9, հայերենում՝ 8), իսպաներեն բուն թռչնանունների կողքին տեղ են գտել որոշ ածականներ (*imbécil* - հիմար, *estúpido* - ապուշ, տխմար և այլն), որոնք ներկայացնում են անուղղակի (փոխաբերական) դաշտը:

Միջատների անվանումներից ամենամեծաքանակն է «որդ» բառի հոմանիշների շարքը՝ իսպաներեն՝ 17, հայերեն՝ 11 հոմանիշ: Աչքի է զարնում նաև «մրջյուն» անվան հոմանիշների առատությունն իսպաներենում, որտեղ ունենք ութ հոմանիշ, իսկ հայերենում դրանք չորսն են:

Մի քանի խոսքով անդրադառնանք իսպաներենում և հայերենում այս կամ այն հոմանիշի բացակայության հարցին: Այստեղ ունենք մոտավորապես հետևյալ պատկերը:

Իսպաներենը չունի *camello* - *ուղտ*, *cangrejo* - *խեցգետին*, *cocodrilo* *կոկոռդիլոս*, *camadreja* - *աքիս*, *erizo* - *ոզնի*, *hiena* - *բորենի*, *jirafa* - *ընձուղտ*, *león* - *առյուծ*, *tigre* - *վագր*, *oso* - *արջ*, *topo* - *խլուրդ*, *abubilla* - *հոպոպ*, *avestruz* - *ջայլամ*, *canario* - *դեղձանիկ*, *cuervo* - *ագռավ*, *grulla* - *կռունկ*, *pavo real* - *սիրամարգ*, *tórtola* - *տատրակ* բառերի հոմանիշները, մինչդեռ դրանք բոլորն այս կամ այն տարբերակներով (բարբառային կամ հնացած) առկա են հայերենում:

Հայերենում հոմանիշներ չունեն միայն *փիղ* և *գայլ* բառերը:

Այս համեմատությունից հետևում է, որ իսպաներենում հոմանիշներ չունեն 18 կենդանու անվանումներ, իսկ հայերենում՝ ընդամենը երկուսը: Այս տարբերության պատճառն այն է, որ հայերենի շփումը շատ է տարբեր լեզուների հետ, որի արդյունքում կատարվել են զանազան փոխառություններ, բա-

ցի դրանից՝ հայերենին զգալի հարստություն և ճոխություն են տալիս բազմաթիվ բարբառային տարբերակները, որոնցից գուրկ է իսպաներենը:

Ուշագրավ է, որ հայերենում *դեղձանիկ* թռչնանունն ունի երկու հոմանիշ՝ *կանարյակ*, *քանարիկ*, որոնք ծագում են իսպաներեն *canario* բառից (Կանարյան կղզիներից բերված), այսինքն՝ հայերեն երկու հոմանիշներն անուղղակիորեն փոխառվել են:

Ընդհանրապես, հայերենն աչքի է ընկնում տարաշխարհիկ կենդանիների անունների հոմանիշների առատությամբ, ինչպես օրինակ՝ *ջայլամ-իշտրմուղ*, *սիրամարգ-սինամահավ-գմրուխտահավ*, *կոկորդիլոս-տիտեն-նհանգ-խիթ* և այլն:

Ինչ խոսք, չի կարելի ասել, թե իսպաներեն և հայերեն հոմանիշների շարքերի քանակական հարաբերակցությունը ճշգրիտ է: Դժվար չէ նկատել, որ որոշ անվանումներ կրկնվում են տարբեր շարքերում: Այսպես, իսպաներենում *rata* «առնետ» և *ratón* «մուկ» անվանումների հոմանիշների թվում է *roedor* «կրծող» հոմանիշը, մինչդեռ հայերենում ունենք միայն *կրծան* ձևը, որը հիշատակվում է իբրև *մուկ* բառի հոմանիշ: Մյուս կողմից՝ հայերենում *առնետ* և *մուկ* անվանումները համարվում են հոմանիշներ, իսկ իսպաներենում *rata* «առնետ» բառի կողքին դրված է միայն *ratona* «էգ մուկ» տարբերակը:

Հայերենում *երկարականջ* բարբառային ձևը զետեղված է միաժամանակ երկու շարքում՝ «էշ» և «նապաստակ»: Նույն կերպ էլ *դաշտամուկ* բառը կրկնվում է «առնետ» և «խլուրդ» շարքերում:

Այդուհանդերձ, ուսումնասիրությունն արված է հենվելով իսպաներեն և հայերեն բառարանների վրա՝ անկախ այն բանից, թե որքան են միմյանց համապատասխանում դրանցում

որդեգրված մոտեցումներն ու սկզբունքները: Վերջին հաշվով, խոսքը վերաբերում է այնպիսի բարդ ոլորտի, որտեղ անհնար է գտնել բացարձակ ճշգրտություն:

Կատարված քանակական և որակական վերլուծությունները նպատակ ունեն պարզելու երկու լեզուներում կենդանիների անվանումների հոմանիշների *ընդհանուր պատկերը, նմանություններն ու տարբերությունները*, որոնք էլ, իրենց հերթին, ճանապարհի կհարթեն դարձվածքների համեմատական քննության համար:

2.3 Դարձվածակազմության մի շարք առանձնահատկություններ իսպաներենում և հայերենում

Ըստ Պ. Բեդիրյանի՝ դարձվածքի կազմում կան ազատ անդամներ, որոնք կոչվում են կամընտիր անդամներ, և դրանք փոփոխական են, սակայն առանց այս անդամների դարձվածքը թերի է կամ պարզապես չկա: Կարելի է ասել, որ դարձվածքի կամընտիր անդամներն ամբողջացնում են դարձվածքի կազմն ու իմաստը: *Կրակը գցել* և *կրակից հանել* ազատ կապակցություններ են, իսկ ***մեկին կրակը գցել*** սա արդեն դարձվածք է՝ *փորձանքի մեջ գցել, գլխին օյին բերել* (խոսկց.) իմաստով: ***Մեկին կրակից հանել*** սա արդեն հականիշ է ***մեկին կրակը գցել*** -ի: Ուստի հարկ է նշել, որ դարձվածքի կամընտիր անդամներն իմաստատարբերակիչ դեր են խաղում: Բառարաններում դրանց փոխարինում են հայերենում՝ ***մի քան, մեկը, մի տեղ, այսինչ*** և այլն, իսկ իսպաներենում՝ ***uno, una cosa*** և այլ բառերն ու արտահայտությունները:

Ըստ Պետրոս Բեդիրյանի՝ հայերենում դարձվածքի կամընտիր անդամները կարող են լինել՝

- անձ ցույց տվող տարբեր բառեր՝ տարբեր հոլովներով,
- իր ցույց տվող բառեր՝ տարբեր հոլովներով,
- հատկություն ցույց տվող բառեր, որոնք հայերենում հիմնականում դրվում են գոյականների վրա և խոսքի մեջ ածականներ են, դերանուններ կամ էլ սեռական հոլովով գոյականներ՝ հատկանիշի իմաստով,
- տեղ ցույց տվող բառեր՝ տարբեր հոլովներով,
- գործողություն ցույց տվող բառեր:

Հարկ է նշել, որ տարբեր դարձվածքների մեջ նույն իմաստային դաշտի բառերը համատեքստում կարող են տեղադրվել առանց սահմանափակումների կամ սահմանափակումներով: Այսպես՝ *...լն ու ...լը մեկ լինել, ...անել* դարձվածքներում կախման կետերին կարող են փոխարինել բոլոր բայերը, միայն թե դրանք իրար հաջորդող գործողություններ ցույց տան, մինչդեռ *լեզուն չպտտել // չբռնել* ու...*լու* դարձվածքի մեջ ամեն բայ չի կարող տեղ բռնել, այլ միայն, այսպես կոչված, ասացական բայերը (ասելու, պատմելու, հաղորդելու, նկարագրելու ...):

Մի բան մեկի վրայից կաթել, վազել, թափվել հեգնական իմաստ ունեցող դարձվածքի կազմի մեջ, *մեկի* բառի փոխարեն, կարելի է կիրառել անձ ցույց տվող ցանկացած բառ, ներառյալ բոլոր հատուկ անունները, մինչդեռ *մի բան*-ին կարող են փոխարինել իր ցույց տվող ոչ բոլոր բառերը, այլ վերացական գոյականները, այն էլ բարոյական դրական հատկություններ կամ զգացում նշանակողները (քաղաքավարությունը, համեստությունը, պարկեշտությունը, սեռ ... *այսինչի վրայից կաթում է, վազում է, թափվում է*): Եթե *մի բանի սերմեր ցանել* - սկիզբ դնել, հիմք դնել, ներշնչել դարձվածքի կամընտիր ան-

դամ կարող են լինել մարդկային հարաբերություններ, ինչպես նաև վերաբերմունք ցույց տվող բառեր (դրական կամ բացասական՝ բարկության, թշնամանքի, օր.՝ բարության և առաքինության սերմերը ցանել կամ ստորության սերմերը ցանել ...) ապա, **մի քանի որում ցանել**-ի մեջ մուտք կարող են գործել այդ նույն իմաստային դաշտի միայն բացասական նշանակությամբ բառեր (թշնամանքի, չարության, երկպառակության ...):

Դարձվածքների մի քանի օրինակ հայերենում և իսպաներենում:

Հայերենում	Իսպաներենում
Անձ ցույց տվող բառեր	
մեկի սիրտը բաց անել - մխիթարել, մեկին սիրտը բացել - հոգում եղածը մեկին ասել	cerrársele a uno la esperanza - հույսը կորցնել, dar a uno la espalda - ինչ-որ մեկին մեջքով կանգնել
Իր ցույց տվող բառեր	
մի քան ձեռքը գցել- ճարել, ձեռք բերել, մի քանի ձեռք գցել - ձեռնամուխ լինել	hacer referencia a una cosa - ինչ-որ մի քանի վերաբերել, estar muy metido a una cosa - ինչ-որ բանում չափազանց շատ հետաքրքրված լինել
Հատկություն ցույց տվող բառեր	
մի գեղեցիկ օր - <i>բըբ</i> ՝ բարեպատեհ ժամանակ, հաշված օրերում – շատ կարճ ժամանակահատվածում	nace uno con mala suerte- ձախողակ լինել, tener uno mucha voluntad - ուժեղ կամքի տեր լինել
Բնագավառ, ասպարեզ, զբաղմունք ցույց տվող բառեր	
մի գործում շուն լինել/դառնալ	desempeñar una cosa - մի քանի

– շատ հմուտ, գիտակ լինել, իր լուման դնել/ներմուծել մի գործի մեջ/բնագավառում - ներդնել	դերը խաղալ, hallarse uno bien con una cosa - ինչ-որ մի բանից գոհ լինել
Տեղ ցույց տվող բառեր	
մի բան տեղ հասցնել - ըմբռնելի ձևով հաղորդել, իրազեկել, մատուցել ում, որ հարկն է,	meter a uno donde no vea el sol- բանտարկել, poner a uno en el mal lugar - մեկին անհարմար իրավիճակի մեջ գցել
Գործողություն ցույց տվող բառեր	
մեկի հոգին ուտել - նեղություն տալ, ձանձրացնել, հոգին մեկին տալ – անմնացորդ նվիրվել	echar la mano a alguien -օգնության ձեռք մեկնել, no dejarle a uno ni a sol ni a sombre - ինչ-որ մեկին օր ու արև չտալ

Աղյուսակում տեղ գտած օրինակներից ինքնըստինքյան հասկանալի է, որ թե՛ իսպաներենում, թե՛ հայերենում դարձվածքի կամընտիր անդամը կարող են լինել.

- անձ ցույց տվող բառեր,
- իր ցույց տվող բառեր,
- հատկություն ցույց տվող բառեր,
- բնագավառ, ասպարեզ, զբաղմունք ցույց տվող բառեր,
- տեղ ցույց տվող բառեր,
- գործողություն ցույց տվող բառեր:

Մրանից բնավ չի բխում, որ չկան տարբերություններ: Խոսքը վերաբերում է մասնավորապես հոլովառությանը և ինդրառությանը: Հայերենում դարձվածքի կախվածությունը քերականական կամ շարահյուսական հարաբերություններից

ավելի մեծ է, քան իսպաներենում, թեև իսպաներենում նույնպես ձևաբանական և շարահյուսական հարաբերությունները կարող են նպաստել դարձվածքի իմաստի փոփոխության, ինչպես որ ունենք *estar uno al caer* և *estar una cosa al caer* օրինակներում: Այստեղ երկու դեպքում էլ կամընտիր անդամը գործողությունն ցույց տվող բառ է, սակայն մի դեպքում **uno** կամընտիր անդամն արտահայտված է անձ ցույց տվող բառով, իսկ մյուսում՝ **una cosa** իր ցույց տվող բառով:

Հայերենում, ինչպես նախորդ օրինակներում, **իր ցույց տվող** բառերն արտահայտված են տարբեր հոլովներով և իմաստատարբերակիչ դեր են կատարում (**մի բան ձեռք գցել** - ճարել և **մի բանի ձեռք գցել** - ձեռնամուխ լինել): Իսպաներենում նույնպես կամընտիր անդամը հանդես է գալիս կապերի հետ միասին: Այստեղ, ըստ իսպանացի նշանավոր լեզվաբան Պաստոր Կարպասի դարձվածքների դասակարգման, հանդիպում ենք բայ+գոյական+կապ+գոյական (v.+sust.+prep.+sust.) և բայ+մակր+կապ+գոյակ. (v.+adv.+prep.+sust.) կաղապարներին: Այս կաղապարներում առկա են կապեր, որոնց միջոցով արտահայտում ենք դարձվածքի կամընտիր անդամին փոխարինող այս կամ այն գոյականի այնպիսի քերականական հարաբերություն, որը կարող է արտահայտվել, օրինակ, հոլովառությամբ (*hacer referencia a una cosa* - ինչ-որ մի բանի վերաբերել, *estar muy metido en una cosa* - ինչ-որ բանում չափազանց շատ հետաքրքրված լինել):

Անձ ցույց տվող բառերը հայերենում հանդես են գալիս տարբեր հոլովներում: **Մեկի** սիրտը բաց անել - մխիթարել և **մեկին** սիրտը բացել – հոգում եղածը **մեկին** ասել: Այս օրինակներում, ինչպես տեսնում ենք, կամընտիր անդամի հոլովի փոփոխությամբ դարձվածքը նոր իմաստ է ստանում: Իսպաներեն-

նում նմանօրինակ քերականական հարաբերություններն արտահայտվում են կապերի միջոցով. օրինակ՝ *cerrársele a uno la esperanza* - հույսը կորցնել, բացի դրանից՝ իսպաներենում կարելի է հանդիպել նաև առանց կապերի կամընտիր անդամի գործածության. օրինակ՝ *dar uno la espalda* - ինչ-որ մեկին մեջքով կանգնել: Անձ ցույց տվող բառերը դարձյալ հանդես են գալիս տարբեր հոլովներով, սակայն իսպաներենում անձ ցույց տվող բառերը հանդես են գալիս կապերի հետ միասին (*quedarse uno a espaldas* - անհաջողության մատնվել, *no dejar a nadie quieto* - ոչ մեկին հանգիստ չթողնել):

Երկու լեզուներում էլ կան դարձվածքներ, որոնց կամընտիր անդամը հավասարապես կարող է լինել թե՛ **անձ**, թե՛ **իր** ցույց տվող բառ (**մեկից** կամ **մի բանից** երես թեքել): Երբեմն էլ կարող են այդ դարձվածքներին պատկանող բառերը հանդես գալ միևնույն դարձվածքի կազմում (**մի բանի** կամ **մի տեղի** ճանապարհը բաց լինել **մեկի** համար): Հայերենում քիչ չեն նաև այն դեպքերը, երբ իրենց նշանակությամբ տարբեր են դարձվածքի կամընտիր անդամները. այսինքն՝ եթե կամընտիր անդամն անձ է ցույց տալիս, դարձվածքը մի իմաստ է արտահայտում, իսկ եթե իր՝ նրան մոտ իմաստ (**մեկի** երեսը չտեսնել - հանդիպած չլինել, **մի բանի** երեսը չտեսնել - գուրկ լինել): Նման դեպքեր կարող են հանդիպել նաև իսպաներենում. *estar una cosa al caer* - շուտով կգա (ժամանակի համար), *estar uno al caer* - ոտքի վրա չմնալ:

Հասկություն ցույց տվող բառեր հայերենում կարող են լինել այն կամընտիր անդամին փոխարինող բառերը, որոնք սովորաբար լրացնում են գոյականներին կամ էլ սեռական հոլովով գոյականներին հատկանիշի իմաստով (մի գեղեցիկ, արտառոց, տոնական ... օր): Մինչդեռ իսպաներենում հատկու-

թյուն ցույց տվող կամընտիր անդամները գոյականներ են. օրինակ՝ *nacer uno con mala estrella* – ձախողակ լինել, *tener uno mucha voluntad* – ուժեղ կամքի տեր լինել:

Տեղ ցույց տվող բառերը հայերենում նույնպես արտահայտված են տարբեր հոլովներով. *մի բան տեղ հասցնել* – ըմբռնելի ձևով հաղորդել, *տեղն եկած տեղը* – հարմար, պետքն եկած միջոցին: Բսպաներենում **տեղ** ցույց տվող բառերը կրկին հանդես են գալիս կապերի հետ միասին (*meter a uno donde no vea el sol* – բանտարկել, *poner a uno en mal lugar* – ինչ-որ մեկին անհարմար իրավիճակի մեջ գցել): Նշված օրինակներում, ըստ Պաստոր Կորպասի դասակարգման, արդեն առկա է *v.+prep.+sust.+v.+sust.* (բայ+ կապ+գոյակ.+բայ+գոյակ.) կադապարը: **Բնագավառում, ասպարեզում գրադմունք ցույց տվող** բառեր ունեցող դարձվածքները հայերենում ունեն հետևյալ կադապարը՝ գոյակ.+բայ, օր.՝ շուն լինել – որևէ բնագավառում իր լուման դնել, հմուտ լինել, մինչդեռ իսպաներենում այս դարձվածքներն ունեն հետևյալ կադապարը՝ *v.+sust.obj.* (բայ+գոյակ.+խնդիր), որտեղ, ըստ Պաստորի, սովորաբար գոյականները պատկանում են միևնույն իմաստային դաշտին. օր.՝ *desempeñar una cosa* – **մի բան** խաղալ, որտեղ **una cosa** – **մի բան** կամընտիր անդամին կարող են փոխարինել մի բանի դերը (*papel*), պաշտոնը (*cargo*), գործառույթը (*función*) բառերը:

Վերը նշված տիպաբանական – համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ իսպաներենում և հայերենում, ելնելով յուրաքանչյուր լեզվի առանձնահատկություններից, տարբեր են քերականական հարաբերությունները: Ինչպես արդեն նշվել է, հայերենում մեծ դեր է կատարում հոլովառությունը, մինչդեռ իսպաներենում գոյություն չունի հոլովա-

ռություն և նման քերականական հարաբերություններն արտահայտվում են կապերի միջոցով: Ուստի կարելի է ասել, որ հայերենում դարձվածքի կամընտիր անդամի հոլովված ձևերի դիմաց իսպաներենն ունի կապերի միջոցով արտահայտված կամընտիր անդամներ: Հարկ է նշել նաև, որ իսպաներենում երբեմն դարձվածքի կամընտիր անդամը կարող է հանդես գալ նաև առանց կապի, ինչպես արդեն նշվեց բերված օրինակներում: Գալով դարձվածքի կառուցվածքին՝ կարելի է ասել, որ իսպաներենում դարձվածքի կառուցվածքում երբեմն ի հայտ են գալիս դերանվանական անդամ կառույցներ (*declararse una cosa* – ինչ-որ բան հայտարարել), երբեմն էլ դարձվածքի «ազատ» անդամն արտահայտված է լինում անորոշ դերանուններով (*echar la mano a alguien* – ինչ-որ մեկին օգնության ձեռք մեկնել, *no dejar a nadie quieto* – ոչ մեկին հանգիստ չթողնել):

2.3.1 Կենդանիների անվանումներով դարձվածքների դարձվածակազմական արդյունավետությունն իսպաներենում և հայերենում

Դարձվածքների կառուցվածքային և իմաստաբանական ուսումնասիրությունը չի կարող արդյունավետ ու ամբողջական լինել առանց դարձվածքների բաղադրիչների բառագիտական ուսումնասիրության: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է կենդանիների անվանումների դարձվածակազմական արդյունավետությանը:

Հարկ է նշել, որ իսպաներեն և հայերեն դարձվածքներում կենդանիների անվանումների ներկայացվածության, այսինքն՝ դրանց *դարձվածակազմական արդյունավետության*

հարցին անդրադառնալու նպատակով տարբեր բառարաններից դուրս են գրվել իսպաներեն և հայերեն բոլոր դարձվածքները, որոնք պարունակում են որևէ կենդանու անվանում:

Իսպաներեն և հայերեն ցանկերի համեմատությունը վեր է հանում առաջին հերթին քանակական հսկայական տարբերություններ. իսպաներեն շուրջ 1200 դարձվածքների դիմաց հայերենն ունի ընդամենը 400 տարբերակ:

Եթե այս տվյալները համեմատենք կենդանիների անվանումների հոմանիշների թվի հետ, ապա պարզ կդառնա, որ հոմանիշների թվով հայերենը որոշ գերակշռություն ունի իսպաներենի նկատմամբ (350 հոմանիշ՝ իսպաներեն 326-ի դիմաց), մինչդեռ դարձվածքների ընդհանուր քանակով իսպաներենը, ըստ մեր օգտագործած բառարանների տվյալների, շուրջ երեք անգամ գերազանցում է հայերենին: Սա շատ մեծ տարբերություն է, որն ունի իր բացատրությունը:

Քանակական տարբերություններն ունեն երեք հիմնական պատճառ՝ *բառարանագրական սկզբունքներ, երկու լեզուների միջև բառապաշարի տարբերություններ և դարձվածակազմական առանձնահատկություններ:*

Ահա այդ երեք պատճառների էությունը.

Ա) Բառարանագրական սկզբունքների տարբերությունները շատ էական են, որոնցից էլ մեծապես կախված է երկու լեզուներում կենդանու անվանում պարունակող դարձվածքների ընդհանուր քանակի հարցը:

Այսպես, իսպաներեն բառարաններում չափազանց մեծ թիվ են կազմում *համեմատական* դարձվածքները, որոնք հիմնականում կազմված են *como* - պես, ինչպես, որպես, նման բառերով, ինչպես օրինակ՝ *como bueyes* - խոշոր, գիրուկ, *correr como un corcel* - լավ վազորդ լինել, արագաշարժ լինել,

como un erizo - ծակող, փշոտ, *como los perros rabiosos* - կատաղած շան պես և այլն:

Հաճախ համեմատական դարձվածքներն իրենց կառուցվածքով ավելի ամբողջական են՝ *más chiquito que un ratón* - շատ փոքր, փոքրիկ, *más sucio que una rata* - կեղտոտ, զզվելի, *beber menos que un pájaro* - ծոխց ավելի քիչ ուտել, *pesar menos que un pájaro* - նիհարած, հյուծված լինել և այլն:

Դարձվածքների մեկ այլ խումբ կազմված է *hecho* - եղած, դարձած հարակատար դերբայով՝ *hecho un marrano* - խոզ կտրած, կեղտի մեջ կորած, *hecho una rana* - մինչև ոսկորները թրջված, *hecho un toro* - կատաղած, ցուլ կտրած, *hecho un pollo* - սաստիկ թրջված և այլն:

Հայերենում այս կարգի դարձվածքների թիվն անհամեմատ քիչ է: Եթե իսպաներեն դարձվածաբանական բառարաններին հատուկ մոտեցումները կիրառվեն նաև հայերենում, ապա հայերեն դարձվածքների թիվը կարող է ավելանալ: Բավական է ասել, որ հայերեն *պես, նման, ինչպես, որպես* և *հանց* հոմանիշներից յուրաքանչյուրը կարող է դրվել որևէ կենդանու անվան կողքին՝ ծնունդ տալով նորանոր դարձվածքների՝ *առյուծի պես, առյուծի նման, հանց առյուծ, որպես առյուծ, ինչպես առյուծ* և այլն:

Անհնար չէ նաև ամբողջական համեմատությունների ներմուծումը՝ *ավելի քաջ, քան վագրը, ավելի վախկոտ, քան նապաստակը* և այլն:

Նույն եղանակով կարելի է մեծացնել *դարձած* և *կտրած* հարակատար դերբայների դարձվածակազմական արդյունավետությունը՝ *առյուծ դարձած/կտրած, նապաստակ դարձած/կտրած, փիղ դարձած/կտրած* և այլն:

Այստեղ մոտեցումների տարբերությունն այն է, որ իսպաներեն բառարաններում գետեղված են առավել մեծ թվով կառույցներ, մինչդեռ հայերեն բառարաններից բացակայում են շատ մեծ քանակությամբ զուգահեռ ձևեր, որը, ըստ երևույթին, հիմնավորված է, քանի որ նպատակահարմար չէ բառարանը ծանրաբեռնել *պես, նման, ինչպես, որպես* կամ *հանց* հոմանիշներով կազմված զուգահեռ տարբերակներով:

Բ) Իսպաներեն և հայերեն դարձվածքների քանակական տարբերության մյուս պատճառը, ինչպես ասվեց, գալիս է երկու լեզուների միջև բառապաշարի տարբերություններից:

Առհասարակ, լեզուներում այս կամ այն կենդանու անվան առկայությունը, գործածականությունը, բառակազմական և դարձվածակազմական արդյունավետությունը կախված են տվյալ ժողովրդի կյանքում այս կամ այն կենդանու խաղացած դերից, այս կամ այն կենդանու անվան առկայությունից, նրա գործածականությունից, տնտեսական և մշակութային նշանակությունից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից:

Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում ձկների անվանումներ պարունակող դարձվածքների խումբը, որը ներկայացված է ստորև:

Ձկների անվանումների առկայությունը ենթադրելի է աշխարհի բոլոր լեզուներում. ձկներն ապրում են ջրում՝ գետերում, լճերում և ծովերում, իսկ ջուրը մարդու կյանքի կարևորագույն նախապայմանն է: Բացի դրանից՝ ձուկը բոլոր ժողովուրդների շրջանում տարածված սննդամթերք է, որից էլ գալիս է ձկների անվանումների լայն տարածվածությունը ինչպես լեզուների բառապաշարում, այնպես էլ դարձվածքներում:

Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում» հայերեն *ձուկ* բառի կողքին նշված է մեկ

հոմանիշ՝ *լողակ (ղողակ - ջրում ապրող կենդանի)*, որը, սակայն, լայն գործածություն չունի: Ձկների անվանումների հետ կապված հոմանիշների առատությամբ աչքի է ընկնում *բախտակ* բառը, որն ունի վեց հոմանիշ՝ *իշխան, ամար, գեղարքունի, կարմրախայտ, աշնջան (բրբ.)* և *բոջակ - Սևանի իշխանների չորս տեսակներից մեկը*:

Չնայած հայոց լեզվում ձկների անվանումների առատությանը՝ դրանց հիմնական զանգվածը դուրս է մնացել դարձվածակազմության շրջանակներից: Ըստ էության, հայերեն դարձվածքների կազմում հանդես է գալիս միայն *ձուկ* բառը, որով կազմված դարձվածքների թիվը չի հասնում մեկուկես տասնյակի:

Ահա դրանց ցանկը:

- *Ձուկը գլխից բռնել* - գործը հիմնականից, գլխավորից սկսել
- *Ձուկը գլխից է հոտում* - վատ, սխալ գործերը, ապօրինությունները, զեղծարարությունները վերններից են սկսվում
- *Ձուկը ծառը ելնել* - անհնար՝ անիրագործելի լինել
- *Ձուկը ծառը հանել* - ասելիքը չափազանցնել, չիրականացվող բաներ ասել, շատ գունազարդել
- *Ձուկը ծովում (ջրում) բազար անել* - հիմնական հարցը դեռ չլուծած, գործը չարած, դրա օգուտի մասին խոսել, անհիմն խոսակցություն վարել
- *Ձուկը կարթին կաշել* - նպատակին հասնել, ասված խոսքը կամ կատարված արարքն իր նպատակին ծառայել
- *Ոչ ձուկ, ոչ միս* - բնորոշ հատկություններից զուրկ
- *Բնչպես ձուկը ջրում* - իր տարերքում լինել, իրեն ազատ ու անկաշկանդ զգալ

- *Ձկան պես համր* - գաղտնիք պահող, համառորեն լռող
- *Պղտոր ջրում ձուկ որսալ* - խառնաշփոթից՝ իրարանցումից օգտվելով իր նպատակներին հասնել, օգուտ քաղել
- *Ջրից դուրս ընկած ձուկ* - ասվում է հատկապես հայրենիքից դուրս գտնվող մարդու մասին:

Խոսակցական լեզվում և բարբառներում կան բազմաթիվ այլ տարբերակներ, որոնք բառարաններից դուրս են մնացել, սակայն մեր ուսումնասիրությունը հիմնվում է միայն բառարաններում տեղ գտած դարձվածքների վրա, որոնք մեծաքանակ չեն և կազմված են միևնույն *ձուկ* բառով:

Իսպանացի լեզվաբան Սայնս դե Ռոբլեսի «Իսպաներեն հոմանիշների և հականունների բառարանում» գետեղված է «ձուկ» իմաստով վեց հոմանիշ՝

- *pez* - ձուկ կենդանին
- *peje* - ձուկ կենդանին
- *jaramungo* - մանրաձուկ
- *pescado* - տապակած կամ եփած ձուկ, ձկնով ճաշատեսակ
- *pizco* - մանրաձուկ
- *ictiolito* - քարացած, բրածո ձուկ:

Ակնհայտ է, որ ցանկում բերված բառերը միմյանց հետ կապված են տարբեր աստիճանների հոմանիշությամբ: Եթե *pez* և *peje* բառերն արտահայտում են միևնույն «ձուկ » իմաստը, ապա *jaramungo* և *pizco* ձևերում ակնհայտ է «մանրաձուկ» նշանակությունը: Գալով *pescado* և *ictiola* կազմություններին, ապա սրանցից առաջինը հանդես է գալիս որպես ճաշատեսակի անվանում՝ ձուկ պարունակող կերակրատեսակ, իսկ երկրորդը՝ եզրույթ է (հնագիտական): Հարկ է նշել նաև, որ ներ-

կայացված հոմանիշներից իրենց գործածականությամբ և դարձվածակազմական արդյունավետությամբ աչքի են ընկնում *pez* և *pescado* ձևերը:

Բացի դրանից՝ վեց հոմանիշներից, որոնք այս կամ այն չափով արտահայտում են «ձուկ» ընդհանուր իմաստը, իսպաներենն ունի ձկների տարբեր տեսակների բազմաթիվ անվանումներ, ինչպես օրինակ՝ *bacalao* - ձողաձուկ, *besugo* - փակրոս, *tiburón* - շնաձուկ և այլն: Ստորև ներկայացնում ենք *Pescado* և *pez* հոմանիշներով կազմված դարձվածքների ցանկը.

Pescado - տապակած կամ եփած ձուկ, ձկով ճաշատեսակ

1. *Ahumársele a uno el pescado* - պոռթկալ, բռնկվել, գայլահանալ

Pez - ձուկ

1. *Buen pez* - ազդեցիկ մարդ, մեծահարուստ կամ պաշտոնյա

2. *Pez gordo* - ազդեցիկ մարդ, մեծահարուստ

3. *Cogerle pez a un alumno* - համոզվել աշակերտի տգիտության մեջ

4. *Estar uno pez* - վատ պատրաստված լինել/ձկան պես համր լինել

5. *Picar el pez* - կարթը կուլ տալ, թակարդն ընկնել

6. *Salga pez o salga rana* - կլինի կամ չի լինի, սառույցի վրա գրված բան է

7. *Salga pez o salga rana, a la capacha* - շնից մազ պոկելն էլ օգուտ է

8. *Encontrarse (estar, sentirse, hallarse, vivir) como el pez en el agua* - իրեն զգալ ինչպես ձուկը ջրում

9. *Nadar como un pez* - ձկան պես լողալ

10. *Nadar como un pez de plomo* - վատ լողալ, լողալ չիմանալ
11. *Pez con pez* - ամբողջովին դատարկ
12. *Dar uno pez* - մինչև սահմանը՝ վերջը հասնել

Այստեղից հետևում է, որ քանակական տեսանկյունից հայերեն և իսպաներեն դարձվածքները ներկայացնում են գրեթե նույն պատկերը՝ հայերենում՝ 11, իսպաներենում՝ 12 դարձվածք: Այդուհանդերձ, հայերենը տարբերություն չի դնում «կենդանի ձուկ» և «ձկով ճաշատեսակ» հասկացությունների միջև, քանի որ երկուսն էլ արտահայտվում են միևնույն *ձուկ* բառով, մինչդեռ իսպաներենը գործածում է երկու տարբեր բառ՝ *pescado* և *pez*, որոնցից յուրաքանչյուրն ունի կիրառության իր ոլորտը: Այս հանգամանքը որոշ հարստություն և ճկունություն է հաղորդում իսպաներենին:

Ձկների անունների դարձվածակազմական արդյունավետության տեսակետից իսպաներենի գերազանցությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ խոսքը վերաբերվում է կոնկրետ անվանումների: Իսպանիան ծովային երկիր է, ունի հարուստ ձկնարդյունաբերություն, այստեղ կան բազմաթիվ ձկնատեսակներ, որոնք էլ իրենց արտացոլումն են գտել ինչպես իսպաներենի բառապաշարում, այնպես էլ դարձվածաբանության մեջ: Ընդ որում, իսպաներենում որոշ ձկնանուններ աչքի են ընկնում դարձվածակազմական բացառիկ արդյունավետությամբ, ինչը չենք կարող ասել հայերենի մասին:

Ներկայացնենք նմանօրինակ դարձվածքների մի քանի խումբ:

Ձկների անվանումներ	Դարձվածքներ
Atún - թոն, թյուննոս	1. <i>Por atún y a ver al duque</i> - մի կրակոցով երկու երկու նապաստակ սպանել, մի ձեռքով երկու ձմերուկ բռնել:
Bacalao - ձողածուկ	1. <i>Cortar el bacalao</i> - իշխել, ղեկավարել, իշխանության լծակները ձեռքում պահել, 2. <i>Barato anda el bacalao</i> - էժան ապրանք (գովազդի ձև), 3. <i>¿Cómo anda el bacalao?</i> - ինչպե՞ս ես, գործերդ ինչպե՞ս են, 4. <i>Te conozco, bacalao (aunque vienes disfrazado)</i> - ինձ չես խաբի, քեզ լավ եմ ճանաչում, 5. <i>Ya está el bacalao vendido</i> - ամեն ինչ կարգին է, ավարտված է, 6. <i>Seco como (más seco que) el bacalao</i> - 1. նիհար, սմբած, 2. մոռյլ, անտրամադիր, 7. <i>Dejarle a uno más seco que el bacalao</i> - մեկին նախատել, խիստ հանդիմանել:
Besugo - փակրոս	1. <i>Ya te veo, besugo que tienes el ojo claro</i> - քեզ լավ եմ ճանաչում, ինձ չես խաբի, 2. <i>Hecho un besugo</i> - սառած, ցրտից կուչ եկած:
Salmón - սաղմոն	1. <i>Comer salmón</i> - ծաղկել, բարգավաճել, 2. <i>Hecho un salmón</i> - կարմրած, կարմիր կտրած:
Sardina - սարդինա- ծուկ	1. <i>La última sardina de la canasta</i> - մանր ձուկ, երկրորդական մարդ, 2. <i>Echar otra sardina</i> - գործը փչացնել, հաշիվները խառնել, 3. <i>Como sardines</i> - իրար սեղմված, նեղվածքի մեջ 2. չափից ավելի աղի,

	4. <i>Más prensado que sardines en banasta</i> - բերնեբերան լցված, ճիտած, 5. <i>Vivir como sardines en canasta</i> - նեղ-վածքի մեջ ապրել, 6. <i>Más frío que sardina en escabeche</i> - սառույցի պես սառը, 7. <i>Como sardina en tierra</i> - վտանգավոր վիճակում, դժվար դրության մեջ, 8. <i>Más salado que sardina asada</i> - չափից ավելի աղի, 9. <i>Quedarse como una sardina</i> - նիհարել, սմբել, չորանալ:
Tiburón - շնաձուկ	1. <i>Como tiburones</i> - շնաձկների պես (վրա հասնել)
Trucha - քաղցրահամ ջրերում ապրող ձուկ, իշխան	1. <i>Buscar (coger, pescar) truchas en secor</i> - 1. հեշտ ճանապարհի փնտրել, 2. առանց չարչարվելու շահույթ ստանալ, 2. <i>Comer truchas</i> - հարուստ լինել, ապահովված կյանքով ապրել, 3. <i>Ser uno un trucha muy largo</i> - փորձված խարդախ, խաբեբա լինել, 4. <i>Ayunar o comer trucha</i> - ամեն ինչ, կամ ոչինչ, ոչ մի տարբերություն, 5. <i>Como truchas</i> - 1. մինչև ոսկորները թրջված 2. անընդհատ լողացող, ջրից դուրս չեկող, 6. <i>Más frío que trucha escabechada</i> - սառույցի պես սառը, 7. <i>Como la trucha al trucha</i> - անմնացորդ սիրել, անդառնալիորեն սիրահարվել:

Այս ցանկերում ներկայացված ձկների անվանումներ գոյություն ունեն նաև հայերենում, սակայն հայերեն դարձվածաբանական բառարաններում չի նշված դրանցով կազմված որևէ դարձվածք: Այլ կերպ ասած՝ իսպաներեն շուրջ երեք տասնյակ դարձվածքների դիմաց հայերենը չունի բացարձակապես ոչ մի գուգահեռ ձև:

Այդուհանդերձ, չի կարելի ասել, թե հայերենը ձկների անվանումների և ձկան հետ կապված եզրույթների առատությամբ և բազմազանությամբ անհուսալիորեն զիջում է իսպաներենին: Ճիշտ է, ձկների հայերեն անվանումներն օժտված չեն դարձվածակազմական արդյունավետությամբ, սակայն, փոխաբեր, հայերենն աչքի է ընկնում բառակազմական բացառիկ հնարավորություններով: Բավական է ասել, որ ակադ. Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» *ձկնա-* հիմքով կազմված բառերի թիվը հասնում է հարյուրի՝ *ձկնաբուծություն, ձկնարդյունաբերություն, ձկնակերություն* և այլն: Հ. Բարսեղյանի «Հայերենի ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանում» դրանց թիվը շատ ավելի մեծ է, մինչդեռ իսպաներենի ակադեմիական բառարանում *pesca* - հիմքով կազմված բառերի քանակը չի հասնում մեկ տասնյակի²⁰:

Երևանի պետական համալսարանի «Բանբերում» լույս է տեսել Ա. Պետրոսյանի ուշագրավ հոդվածը՝ «Ձկան և ձկնորսության հետ կապված բառեր, բառակապակցություններ ու դարձվածքներ» վերնագրով, որտեղ հեղինակը ի մի է բերում առկա նյութը և շրջանառության մեջ դնում ձկան և ձկնորսու-

²⁰ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հտ. 1, էջ 924-925, **Հ. Բարսեղյան**, Հայերն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

թյան հետ կապված նորահայտ բառեր, դարձվածքներ և արտահայտություններ, որոնք գրի են առնվել Հայաստանի Հանրապետության տարբեր պատմագագագրական շրջաններից: «Տարբեր բնույթի բառարաններում,– գրում է հեղինակը,– ձկանն ու ձկնորսությանը վերաբերող դարձվածքները չեն անցնում երկուսուկես տասնյակից, իսկ բառերն ու բառակապակցությունները՝ չորս տասնյակից, որոնց մի մասի բացատրությունն անընդունելի է և կարիք ունի համապատասխան ճշգրտումների և լրացումների: Ըստ դաշտային ազգագրական նյութերի՝ ձկնորսությամբ պայմանավորված բառերը, բառակապակցություններն ու դարձվածքները բավականին առատ են, որոնք, սակայն, մինչև այսօր գիտական շրջանառության մեջ չեն դրվել»²¹:

Պետրոսյանի բերած օրինակները հիմնականում բարբառային բնույթի են, սակայն ցույց են տալիս, որ լեզվում ձկնանուններին վերաբերող դարձվածաբանական նյութը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ:

Գ) *Դարձվածակազմական առանձնահատկությունների* հարցը շատ բարդ է և պարունակում է բազմաթիվ շերտեր: Զխորանալով մանրամասների մեջ՝ ստորև ներկայացնենք մի քանի նկատառում:

Հայտնի է, որ դարձվածք կարող է համարվել բառերի որոշակի խումբը կամ, ավելի ճիշտ, դարձվածքի կազմի մեջ մտնող տարրերի թիվը պետք է լինի առնվազն երկուսը, այլապես չի կարելի խոսել դարձվածքի մասին: Սակայն իսպաներենում մեծ թիվ են կազմում այն դարձվածքները, որոնք ներկայաց-

²¹ **Ա. Ս. Պետրոսյան**, Ձկան և ձկնորսության հետ կապված բառեր, բառակապակցություններ ու դարձվածքներ, Բանբեր Երևանի պետական համալսարանի, հ. 3, էջ 214-225:

նում են *նախդիր + որևէ գոյական* կադապարը, ինչն այնքան էլ հատուկ չէ հայերենին:

Այսպես՝ *a caballo* - ձիով, ձի հեծած և *a paso de buey* - եզան քայլով, դանդաղ դարձվածքներում *a* նախդիրը դարձվածքի բաղադրիչ է, թեև իր բուն գործառնությամբ համապատասխանում է գործիական հոլովով դրված ձևի պարագային: Ստացվում է, որ իսպաներենում *a caballo* կապակցությունը, զուտ հոլովական հարաբերությունն արտահայտելով հանդերձ, նաև դարձվածք է, քանի որ պարունակում է երկու տարր, մինչդեռ հայերենում *ձիով* գործիականը չի կարող համարվել դարձվածք: Կամ՝ իսպաներեն *de marranas* - կոպիտ, խոզի, խոզեր դարձվածքը ոչ այլ ինչ է, քան՝ *marrana* - էգ խոզ բառի հոգնակի սեռականը, որը կազմված է *de* նախդիրի միջոցով: Այս կառուցվածքի փոխարեն հայերենն ունի *խոզերի* հոգնակի սեռականը, որը նույնպես դարձվածք չէ:

Այստեղ հարկ է նկատի ունենալ նաև հայերենի դարձվածակազմական լայն հնարավորությունները, որոնցից զուրկ է իսպաներենը: Բազմաթիվ դեպքերում իսպաներենի վերլուծական կառույցների փոխարեն հայերենն ունի մեկ բառով արտահայտված համարժեքներ, ինչպես օրինակ՝ *como perro* - շան պես – հայ. *շնավարի*, *a lo burro* - էշի պես, կոպտորեն, բրտորեն – հայ. *իշավարի*, *volverse burro* - խելքը թոցնել, հիմարանալ – հայ. *էշանալ*, *como sapos* - գեր, տոգած, փքված – հայ. *գորտանման*, *como un mono* - նմանակող – հայ. *կապկող* և այլն:

Սա նշանակում է, որ բազմաթիվ դեպքերում իսպաներենի վերլուծական կառույցների փոխարեն հայերենն ունի մեկ բառով արտահայտված համարժեքներ, օրինակ իսպաներենում՝ *շան պես* - հայերենում՝ *շնավարի*, իսպաներենում՝ *խելքը թոցնել*, *հիմարանալ* - հայերենում՝ *էշանալ*:

Այս վերլուծությունները ցույց են տալիս, որ իսպաներենում և հայերենում գործում են դարձվածակազմական և քերականական տարբեր օրինաչափություններ, որոնցից էլ մեծապես կախված է երկու լեզուներում դարձվածքների քանակական տարբերության հարցը: Հետևաբար, չի կարելի խոսել իսպաներենի դարձվածապաշարի հարստության կամ հայերենի աղքատության մասին, պարզապես ամեն լեզու ունի արտահայտչական իր ուրույն միջոցներն ու հնարավորությունները:

Այս երեք հիմնական պատճառներին պետք է ավելացնել նաև այն, որ իսպաներեն դարձվածքներում կենդանիների անվանումները երբեմն հանդես են գալիս տարբեր սեռերով՝ արական և իգական՝ *mono-mona* - կապիկ, էգ կապիկ, *zorro-zorra* - աղվես, էգ աղվես և այլն: Նմանօրինակ դարձվածային գուգաձևությունները, որոնք լայնորեն ներկայացված են իսպաներեն դարձվածաբանական բառարաններում, արհեստականորեն մեծացնում են կենդանու անուն պարունակող իսպաներեն դարձվածքների ընդհանուր քանակը:


Այսպիսով՝ կարելի է ասել, որ կենդանիների անուններով կազմված դարձվածքները բնութագրվում են տիպաբանական ընդհանրություններով, ինչպես նաև երկու լեզուների բառապաշարի և քերականական կառուցվածքի որոշ տարբերություններով:

2.4 Կենդանու անունների հոմանիշների դարձվածակազմական արդյունավետությունն իսպաներենում և հայերենում

Այստեղ, ըստ էության, պետք է կենդանիների անվանումների հոմանիշների շարքերը համեմատվեն համապատաս-

խան դարձվածքների շարքերի հետ: Հասկանալի է, որ անհնար է հանգամանալի վերլուծել շուրջ երկու հազարի հասնող դարձվածքները, ուստի կարելի է սահմանափակվել առավել ընդարձակ խմբերի քննությամբ:

Ա) Առավել մեծաքանակ մնացած խմբերը ներկայացնում են հետևյալ պատկերը.



Կենդանիների անուններից դարձվածակազմական արդյունավետությամբ առաջին տեղը զբաղեցնում է շուն բառը, որը հայերենում ներկայացված է 77, իսկ իսպաներենում՝ 57 դարձվածքով: Իսպաներեն ցանկին պետք է ավելացնել *chucho* - խսկց. շուն և *galgo* - քերծե, վազան շուն հոմանիշ անվանումներով կազմված ձևերը՝ 11 օրինակ, որով կունենանք 68 դարձվածք: Հայերեն դարձվածքներում շուն բառի ոչ մի հոմանիշ չի ներկայացված:

Հայերեն դարձվածքներում խոզ բառի որևէ հոմանիշ չի ներկայացված, մինչդեռ իսպաներենում ունենք 8 հոմանիշ անվանում՝ *puereo* - խոզ (8 դարձվածք), *cebón* - խոզ (5 դարձվածք), *cerdo* - խոզ (5 դարձվածք), *gocho* - բտած խոզ (4 դարձվածք), *gorrino* - խոճկոր (3 դարձվածք), *guarro* - խոզ (2 դարձ-

վածք), *lechón* - խոճկոր, խոզ (3 դարձվածք) և *marrano* - խոզ (16 դարձվածք):

Իսպաներենում մեծ է նաև *ձի* անվան հոմանիշների ներկայացվածությունը դարձվածքներում՝ ընդհանուր առմամբ՝ 7 հոմանիշ՝ *caballo* - ձի (38 դարձվածք), *corcel* - ձի, նժույգ (2 դարձվածք), *jaca* - գաճաճ ձի (2 դարձվածք), *penco* - անճոռնի ձի (1 դարձվածք), *potro* - քուռակ, մտրուկ (5 դարձվածք), *yegua* - մատակ, էգ ձի (3 դարձվածք):

Իսպաներեն դարձվածքներում *asno* - էշ բառը ներկայացված է չորս հոմանիշներով՝ *asno*, *borrico*, *burro* և *jumento*, բոլորն էլ նույն իմաստով: Սրանցով կազմված դարձվածքների ընդհանուր թիվը հասնում է 60-ի: Հայերեն դարձվածքներում ունենք միայն *էշ* և *ավանակ* հոմանիշները, որոնցից էլ երկրորդը շատ հազվադեպ է հանդիպում: Ինչպես ցույց կտրվի հաջորդ գլխում, իսպաներեն դարձվածքների թվում կան բազմաթիվ կրկնություններ՝ դարձվածային զուգաձևություններ:

Իսպաներենում, *culebra* - օձ բառից, դարձվածակազմական որոշ արդյունավետություն ունեն նաև *babosa* - լորտու, *serpiente* - օձ և *víbora* - իժ հոմանիշները՝ կազմելով ընդհանուր առմամբ 22 դարձվածք: Հայերեն դարձվածաբանական բառարաններում նշված է միայն *իժ* հոմանիշով կազմված մեկ դարձվածք՝ *իժի լեզու*: Այդուհանդերձ, *օձ* և *իժ* հոմանիշների ընդհանուր թվով հայերենը գերազանցում է իսպաներենին՝ 35 դարձվածք, իսկ իսպաներենում 22 դարձվածք:

Հայերեն դարձվածքներում *կատու* բառին զուգահեռ գործածվում է նաև *փիսիկ* հոմանիշը (1 դարձվածք), իսկ իսպաներեն դարձվածքներում հոմանիշ անվանումներ չկան:

Բ) Թռչնանուններից առավել արդյունավետն է *թռչուն* բառը, որն իսպաներենում ներկայացված է 62, իսկ հայերենում՝

12 դարձվածքով, *աքլոր* բառով կազմված դարձվածքներն իսպաներենում 45-ն են, հայերենում՝ 5-ը: Հայերենում *ծիտ* և *ագռալ* բառերը ներկայացված են 11-ական դարձվածքներով, իսկ իսպաներենում՝ համապատասխանաբար 8 և 3:

Գ) Միջատների անվանումներից աչքի է ընկնում *ճանճ* բառը, որով կազմված դարձվածքների թիվն իսպաներենում հասնում է 47-ի, իսկ հայերենում՝ 8-ի: *Լու* և *մրջյուն* բառերը ներկայացված են համապատասխանաբար 19 և 13 դարձվածքներով: Հայերեն դարձվածքներում *մրջյուն* բառն ընդհանրապես չի ներկայացված, իսկ *լու* անվանումով կա ընդամենը 4 դարձվածք:

Այս համեմատություններից հետևում է, որ *իսպաներեն և հայերեն դարձվածքներում ակնհայտորեն գերակշռում են ընտանի կենդանիների անվանումները՝ շուն, կատու, էջ, ձի, ցուլ և ջորի*: Այստեղ աչքի է զարնում իսպաներեն *mulo* «ջորի» բառի դարձվածակազմական արդյունավետությունը՝ 31 դարձվածք, իսկ հայերենում՝ 1:

Հայերենում *ցուլ* բառով կազմված է ընդամենը մեկ դարձվածք, իսկ *էզ* հոմանիշով՝ 10 դարձվածք: Իսպաներենը վերոնշյալ փոխարեն ունի համապատասխանաբար՝ 37 և 14 դարձվածք, ընդհանուր առմամբ՝ 51 օրինակ, որը մի քանի անգամ գերազանցում է հայերեն օրինակներին:

Վայրի կենդանիների անվանումներից որոշ արդյունավետություն են ցուցաբերում *օձ* և *զալլ* բառերը: Դժվար է բացատրել իսպաներենում *mono* - կապիկ բառով կազմված շուրջ հինգ տասնյակ դարձվածքների առկայությունը: Հիշենք միայն, որ «կապիկ» իմաստով բառերն իսպաներենում ներկայացված են 16 հոմանիշներով, իսկ հայերենն ունի ընդամենը երեք տարբերակ:

Եվ որպես եզրակացություն կարելի է նկատել, որ կենդանիների անվանումների հոմանիշների ընդհանուր թվով հայերենը գերազանցում է իսպաներենին, սակայն դարձվածքներում հոմանիշ տարբերակների ներկայացվածության տեսակետից ակնհայտ գերազանցություն ունի իսպաներենը:

Մասամբ սրանով է պայմանավորված նաև իսպաներեն և հայերեն դարձվածքների միջև քանակական մեծ տարբերությունը:

Երրորդ գլուխ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՈՒՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ինչպես նշվել է աշխատության երկրորդ գլխում, հոմանիշությունը խորթ չէ կենդանիների անվանումներին, չնայած վերջիններիս արտահայտած ուղղակի իմաստները մեծ մասամբ ճշգրիտ են և ունեն իրենց հստակ սահմանները: Ասվել է նաև, որ այդ անվանումների հոմանիշության շրջանակներն ընդարձակվում են հատկապես անուղղակի՝ փոխաբերական դաշտում, քանի որ որքան լայն է բառի արտահայտած իմաստը, այնքան մեծ է հոմանիշներ ունենալու հնարավորությունը:

Վերադառնալով դարձվածային հոմանիշությանը՝ պետք է նկատել, որ այստեղ ևս գործում են նույն օրինաչափությունները. դարձվածային իմաստի պատկերավորությունը և հուզաարտահայտչականությունը լայն հնարավորություններ են ստեղծում հոմանիշության ձևավորման համար: Եվ եթե բառային հոմանիշությունը մեծապես կախված է բառի փոխաբերական իմաստից, ապա փոխաբերականությունը և պատկերավորությունը դարձվածքի հիմնական հատկանիշներն են:

Հայոց լեզվի դարձվածաբանությանը նվիրված իրենց աշխատություններում Ա. Մուրվալյանը և Պ. Բեդիրյանն առանձին չեն անդրադարձել դարձվածային հոմանիշության հարցերին: Ս. Աբրահամյանի «Հայոց լեզու. բառ և խոսք» գրքում կան հոմանիշ դարձվածքներին վերաբերող ուշագրավ նկատառումներ: «Այսպիսով,- գրում է Ս. Աբրահամյանը,- դարձվածք-

ներին հատուկ է հոմանիշությունը, որով արտահայտվում են իմաստային ու ոճական տարբեր երանգներ: Այդ տարբերությունները երբեմն հասնում են այնպիսի նրբության, որ դժվար է զգացվում: Այսպիսի դեպքերում դարձվածային հոմանիշները մոտենում են նույնանիշության, սակայն բոլոր դեպքերում դրանց միջև մի նուրբ տարբերություն (եթե ոչ իմաստային, ապա գոնե կիրառական) լինում է: Հոմանիշ դարձվածքներով հարուստ են հատկապես խոսակցական լեզուն, բարբառները, որոնցից էլ հաճախ անցնում են գրական լեզվին»²²:

Հայ լեզվաբաններից դարձվածքների հոմանիշության հարցի ուսումնասիրությամբ առավել հետևողականորեն զբաղվել է Ա. Սուքիասյանը: Հոմանիշ դարձվածքների սահմանումը և կառուցվածքային - իմաստաբանական առանձնահատկությունները ներկայացված են Ա. Սուքիասյանի «Հայոց լեզու» և «Հոմանիշները ժամանակակից հայերենում» աշխատություններում: Ա. Սուքիասյանը հոմանիշ դարձվածքների սահմանման համար ելակետ է ընդունում բառային հոմանիշությունը. «Բառային հոմանիշների նման՝ հոմանիշներ պետք է համարել այն դարձվածային միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց կարող են տարբերվել ոճական տարբեր կիրառություններով ու հուզաարտահայտչական գունավորումներով (երանգավորումներով) և որոշակի համատեքստերում կարող են փոխարինվել իրարով»²³:

Ընդ որում՝ Ա. Սուքիասյանը հատուկ ուշադրություն է դարձնում *բառային արժեք ունեցող հոմանիշ դարձվածքների վրա՝* գրելով հետևյալը. «Դարձվածքային հոմանիշների մեջ

²² Նշվ. աշխ., էջ 158:

²³ **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 210:

իրենց ծավալով և կառուցվածքային առանձնահատկությամբ առանձին խումբ են կազմում բառային արժեք ունեցող կամ, ինչպես ընդունված է ասել, տրամաբանական հասկացություն արտահայտող դարձվածային միավորները: Դրանք ծավալով ամենաբազմազանն են լեզվում: Ունենալով բառային արժեք՝ այդ դարձվածքները փաստորեն օժտված են բառիմաստային, քերականական և ռճական այն բոլոր առանձնահատկություններով, որոնք հատուկ են բառային միավորներին: Այս կարգի դարձվածային միավորների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք հոմանիշների շարքեր կարող են կազմել ինչպես իրար, այնպես էլ իրենց համարժեք բառերի հետ: Վերոհիշյալ կարգի դարձվածային հոմանիշները հիմնականում կարելի է բաժանել *անվանական* (գոյականական, ածականական) և *բայական հոմանիշներ*»²⁴:

Իհարկե, այս դասակարգումը ելակետ է ընդունում այն հանգամանքը, թե ինչ խոսքի մասի է փոխարինում այս կամ այն դարձվածքը: Տեղին է հիշել, որ իսպանացի լեզվաբան Խուլիո Կասարեսը դարձվածքները դասակարգում էր նույն սկզբունքով՝ տարբերակելով ինը հիմնական խումբ՝ *անվանական (nominales)*, *ածականական (adjetivales)*, *բայական (verbales)* և այլն, ինչպես որ նշվել է առաջին գլխում:

Մեր ժամանակներում իսպաներեն դարձվածքների հոմանիշության հարցին անդրադարձել է նշանավոր իսպանագետ Վ. Ս. Վինոգրադովը: Հենվելով հոմանիշ դարձվածքների կառուցվածքային առանձնահատկությունների վրա՝ ռուս լեզվաբանը տարբերակում է հոմանիշ դարձվածքների երեք տեսակ.

²⁴ Նույն տեղում:

ա. նույն կառուցվածքն ունեցող, ինչպես օրինակ՝ *besar la correa – doblar la cerviz* - ենթարկվել, հնազանդվել, *tomar el olivo – perder el hato* - փախչել, ծլկել, *burro de carga – cabeza de turco* - քավության նոխազ և այլն:

բ. մերձավոր կառուցվածք ունեցող, ինչպես օրինակ՝ *ganar las palmas – cosechar laurels* - պարգևի արժանանալ, *pasar el Rubicón – quemar sus naves* - վճռական քայլ կատարել, *apretar las talons – tomar viñas* - փախչել, ծլկել և այլն:

գ. տարբեր կառուցվածք ունեցող, ինչպես օրինակ՝ *cruzar la cara – dar de bofetadas* - ապտակել, դեմքին հարվածներ հասցնել, *a banderas desplegadas – a claras* - բաց սրտով, անկեղծորեն, *a la chita calando – por debajo de la cuerda* - գաղտնի կերպով, տակից և այլն²⁵:

Արդ՝ եթե հաշվի առնենք դարձվածքների հոմանիշության նշված առանձնահատկությունները, ապա ակնհայտ է, որ կենդանու անուն պարունակող իսպաներեն և հայերեն դարձվածքների քննությունը կարող է կատարվել ամենատարբեր դիրքերից: Մյուս կողմից՝ հարկ է նկատի ունենալ նաև իսպաներեն և հայերեն ցանկերի միջև հսկայական քանակական տարբերությունները, որոնք շատ դեպքերում թույլ չեն տալիս կատարել ուղղակի համեմատություններ և ինչ-ինչ խմբավորումներ:

Ելնելով նշվածից՝ անհրաժեշտ է մի փոքր նեղացնել համեմատական քննության շրջանակները և սահմանափակվել միայն կառուցվածքային և իմաստաբանական այն հայեցակետերով, որոնք կարող են դառնալ կենդանիների անվանումների հոմանիշների շարքերի տրամաբանական շարունակությունը:

²⁵ Վ. Վինոգրադով, նշվ. աշխ., էջ 156:

Ըստ այդմ՝ այս գլխում դիտարկվում են հետևյալ խնդիրները.

ա. *անվանական (գոյականական, ածականական, մակբայական) և բայական արժեք ունեցող դարձվածքների տեսակարար կշիռն իսպաներենում և հայերենում,*

բ. *կենդանու անուն պարունակող դարձվածքների բառային և բազմանդամ (դարձվածային) հոմանիշությունը,*

գ. *դարձվածակազմական կադապարների արդյունավետությունը:*

Ա. անվանական (գոյականական, ածականական, մակբայական) և բայական արժեք ունեցող դարձվածքների տեսակարար կշիռն իսպաներենում և հայերենում:

Ըստ ներկայացված ցանկի՝ բառային արժեք ունեցող իսպաներեն դարձվածքներից ամենամեծաքանակն են բայականները՝ շուրջ 500 դարձվածք, երկրորդ տեղում են ածականական դարձվածքները՝ շուրջ 400 դարձվածք, մակբայական դարձվածքների թիվը հասնում է 100-ի, իսկ գոյականականներինը՝ 70-ի:

Մնացածները բաժին են ընկնում որպես նախադասություն հանդես եկող դարձվածային միավորներին, եղանակավորող արժեք ունեցող դարձվածքներին և խառը կառուցվածքներին:

Այս հաշվարկները, անշուշտ, մոտավոր են, քանի որ այս կամ այն դարձվածքի բառային արժեքը շատ դեպքերում կախված է համատեքստից:

Մանրամասները կներկայացվեն հետագա շարադրանքում: Մի քանի օրինակ յուրաքանչյուր տեսակից:

Ա. Բայական

1. *Salirle a uno la borrica respondona* - անսպասելի մերժում՝ հակահարված ստանալ,

2. *Caer uno de su burrico* - գիջել, չհամառել, տեղի տալ,
3. *Hacer uno el burro* - չարություն անել, իրեն լավ չպահել,
4. *Hacer el caracol* - կաշել, պոկ չգալ, խնդրանքներով զգվեցնել,
5. *Armarle a uno culebra* - անհարմար դրության մեջ դնել, գլխին խաղ խաղալ,
6. *Tener gato encerrado* - թաքնված բան՝ գաղտնի պարունակել,
7. *Buscar otro pie al gato* - պատճառ բռնել, անուն կպցնել,
8. *Cazar gazapos a uno* - թակարդը՝ ծուղակը զցել,
9. *Hacer uni la mula* - գործից խուսափել, ծուլանալ, զլանալ,
10. *Cazar uno los pájaros volando* - ճարպիկ, գործունյա լինել:

Բ. ածականական

1. *Como borrica sin polillo* - խեղճացած, կծկված, կուչ եկած,
2. *Como bueyes* - խոշոր, գիրուկ, լիքը,
3. *Como un erizo* - ծակող, փշոտ,
4. *Como gato mojado* - սաստիկ թրջված,
5. *Más fiero que una pantera* - հովազից էլ ավելի կատաղի,
6. *Como mula de alquiler* - նիհար, ոսկրոտ, հյուծված,
7. *Como sardinas* - իրար սեղմված,
8. *Más chiquito que un ratón* - շատ փոքր, փոքրիկ,
9. *Más ciego que un topo* - խլուրդից էլ խուլ,
10. *Como el murciélago* - անքուն, գիշերները թափառող:

Գ. մակբայական

1. *A lo burro* - կոպտորեն, բրտորեն,
2. *Trabajar como un buey* - եզան պես աշխատել,
3. *Correr mas que un caballo cojo* - դանդաղ գնալ,
4. *Saltar como una cabra* - շատ ճարպիկ, արագաշարժ լինել,
5. *Como matar culebra* - անխնա, անգթորեն,
6. *A lo gato* - թաքուն, գաղտագողի,
7. *Trabajar a lo lobo* - անկանոն, անկապ աշխատել,
8. *Encogerse como una rana* - կծկվել, գորտի նման գունդուկծիկ լինել,
9. *En menos que canta un pollo* - իսկույն, անմիջապես,
10. *Pesar menos que una golondrina* - շատ թեթև լինել, ծտից թեթև լինել:

Դ. Գոյականական

1. *Burri blando* - զգվելի մարդ, գարշելի արարած,
2. *Buey de agua* - ջրի առատ հոսանք, հզոր շիթ,
3. *Caballo blanco* - կասկածելի ձեռնարկություններ ֆինանսավորող մարդ,
4. *Caballos de fuego* - այտուցներ,
5. *Potro de tormento* - տանջանք, տառապանք, գլխացավանք,
6. *Serpiente de mar* - աղմուկ հանած իրադարձություն,
7. *Cabeza de lobo* - պատրվակ, առիթ,
8. *Cabeza de oso* - երկարամազ, քրջոտ, թափթփված մարդ,
9. *Perra chica* - մանր մետաղադրամ,
10. *Toros y cañas* - թունդ վեճ, բանակոխիվ:

Հայերեն ցանկում նույնպես ամենամեծաքանակն են բայական արժեք ունեցողները՝ շուրջ 280 դարձվածք, գոյականական և ածականական արժեք ունեցող դարձվածքները ներկայացված են մոտավորապես 50-ական դարձվածքներով, իսկ մակբայականների թիվը հասնում է 15-ի: Ի դեպ, ըստ Ա. Սուքիասյանի դիտարկումների, դարձվածաբանական մյուս միավորների համեմատությամբ, բայական դարձվածքները ժամանակակից հայերենում ամենաշատն են²⁶, ուստի թերևս պատահական չէ, որ դրանք գերակշռում են նաև կենդանու անուն պարունակող դարձվածքներում:

Դիտարկենք յուրաքանչյուր տեսակից տասական օրինակ.

Ա. Բայական

1. *Էջը խելքին քացի տալ* - հիմարություն անել, չարաչար սխալվել,
2. *Էջը ցեխում մնալ* - գործը տեղից չշարժվել,
3. *Ձին թարս նստել* - հակառակվել, կամակորություն անել,
4. *Ուղտը գդալով ջրել* - փոքր բանով մեծ կարիք հոգալ,
5. *Օձը բնից հանել* - ճարտար լեզու ունենալ,
6. *Թրջված կատու դառնալ* - շատ խեղճանալ, ընկճվել
2. սաստիկ թրջվել,
7. *Գայլի սիրտ ուտել* - անվախ, աներկյուղ լինել,
8. *Շան քթից ջուր խմել* - սաստիկ տանջվել, չարչարվել,
9. *Բուբու թռցնել* - անգործ լինել, պարապ-սարապ թրնել,
10. *Լուն ուղտ շինել* - մի չնչին բանին մեծ կարևորություն տալ:

²⁶ Ա. Սուքիասյան, Հումանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 276-277:

Բ. Ածականական

1. *Էջից ընկած* - պաշտոնից, դիրքից գրկված,
2. *Աստծու եզ* - խեղճ, թշվառ, տխմար, հիմար,
3. *Սարի այծ* - խենթ, անմիտ թռչկոտող,
4. *Ուղտի ականջում քնած* - անտեղյակ, միամիտ, անմասն,
5. *Շան բերան* - հայհոյախոս, չարախոս,
6. *Շան մսի գին* - չափազանց էժան,
7. *Թանն ընկած մուկ* - խեղճացած, կուչ եկած,
8. *Օձի կծած* - սաստիկ չար, անգութ,
9. *Մարտի կատու* - անհագ կիրք ունեցող, վավաշոտ,
10. *Ծտի սիրտ* - սաստիկ վախկոտ, երկչոտ:

Գ. Մակբայական

1. *Իծահագ տալ* - կեղծ ու թույլ հազալ,
2. *Էջի գատկին* - երբեք, ոչ մի դեպքում,
3. *Եզան պես աշխատել* - առանց հոգնելու, շատ աշխատել,
4. *Ձիու ականջը մտած քշել* - ձին արագ քշել,
5. *Կատվալվա անել (տալ)* - թեթև՝ կիսատ-պռատ լվացվել,
6. *Կատվամեռու տալ* - կատվի նման կեղծ սատկած ձևանալ,
7. *Օձի պես սողալ* - ստորաքարշություն անել,
8. *Շան պես պոչ խաղացնել* - ինչ-որ բանի ակնկալություն մեկին քծնել, շողոքորթել,
9. *Թութակի պես կրկնել* - մի բան առանց հասկանալու կրկնել,

10. *Տգի պես կպչել* - պոկ չգալ, շարունակ մեկի, մի բանի հետ լինել:

Դ. Գոյականական

1. *Աստծու ավանակ* - ապուշ՝ բթամիտ մարդ,
2. *Օձի ձու* - չճարվող, դժվարությամբ ձեռք բերվող բան,
3. *Մոլորյալ ոչխար* - ճիշտ ճանապարհից շեղված, փուչ, անառակ մարդ,
4. *Առյուծի կաթ* - ոգելից խմիչք, գինի, օղի,
5. *Գայլի ավետարան* - ապարդյուն խրատ, զուր խոսքեր,
6. *Մկների ժողով* - խառնաշփոթ, աղմկոտ և անպտուղ հավաք,
7. *Կթու կով* - եկամտի աղբյուր,
8. *Ծեր աղվես* - փորձված և խորամանկ հասակավոր մարդ,
9. *Ագռավի ճանկեր* - անվարժ, տգեղ գիր,
10. *Սպիտակ ագռավ* - շատ հազվագյուտ, համարյա չհանդիպող բան:

Անդրադառնալով իսպաներեն և հայերեն ցանկերի քանակական համեմատությունների հարցին՝ կարող ենք նկատել, որ երկու լեզուներում էլ ակնհայտորեն գերակշռում են բայական արժեք ունեցող դարձվածքները՝ իսպաներենում՝ 500, հայերենում՝ 280: Մնացած տարբերակները վեր են հանում շատ էական անհամապատասխանություններ:

Եթե ինչ-որ չափով իրար մոտ են գոյականական դարձվածքների քանակները (իսպաներենում՝ 70, հայերենում՝ 50), նույնը չի կարելի ասել ածականական (իսպաներենում՝ 400,

հայերենում՝ 50) և մակբայական (իսպաներենում՝ 100, հայերենում՝ 15) դարձվածքների մասին:

Այս տարբերությունները, ինչպես արդեն նշվել է, իսպաներեն և հայերեն ցանկերի ընդհանուր քանակից է կախված, որն էլ իր հերթին պայմանավորված է բառարանագրական տարբեր սկզբունքներով և մոտեցումներով:

Այլ կերպ ասած՝ բերված տվյալներն ամեննին չեն արտացոլում երկու լեզուների դարձվածապաշարի իրական պատկերը, քանի որ հենվում են միայն բառարաններում տեղ գտած նյութերի վրա: Իսկ վերջիններս չեն կարող ներառնել լեզվի դարձվածային ողջ հարստությունը: Բացի դրանից՝ բառարաններում դարձվածքները ներկայացված են հիմնականում *քաքացած* ձևով, մինչդեռ կենդանի խոսքում դրանք կարող են ենթարկվել ամենատարբեր փոփոխությունների:

Սրանից հետևում է, որ դարձվածքների հոմանիշների դասակարգումը, ըստ բառային արժեքի, նույնպես հարաբերական է և կախված է ինչպես համատեքստից, այնպես էլ դարձվածքի գործածության առանձնահատկություններից:

Վերևում արդեն խոսվել է ածականական և մակբայական արժեք ունեցող դարձվածքների ընդհանուր գծերի մասին, ուստի, հաշվի առնելով երկու լեզուներում բայական դարձվածքների մեծաքանակությունը, դիտարկենք դրանց հետ կապված մի քանի առանձնահատկություններ:

Բայական արժեք ունեցող դարձվածքները կազմավորված են կամ անորոշ դերբայի, կամ էլ բայի խոնարհված ձևերի հիմքի վրա, ինչպես օրինակ՝ *Caer uno se su borrico* «գիջել, չհամառել, տեղի տալ»: Այս դարձվածքը բառացի նշանակում է «իր էշից ընկնել» և հայերեն *էշից իջնել* «դիրքերը զիջել, մի քիչ մեղմանալ, փոխադարձ համաձայնության գալ» դարձվածքի

կառուցվածքային և իմաստային բացարձակ գուգահեռն է: Ընդ որում, երկու դարձվածքներն էլ ունեն բայական արժեք:

Այդուհանդերձ, կենդանի խոսքում բայը կարող է հանդես գալ այնպիսի խոնարհված ձևերով, որոնք բառարաններում արտացոլված չեն, ինչպես օրինակ.

Իսպ. *Cayendo de su burro* - էշից ընկնելով = զիջելով, չհամառելով,

Habiendo caído de su burro - էշից ընկած լինելով = զիջած լինելով,

Cayó de su burro - էշից ընկավ = զիջեց, տեղի տվեց,

Caído de su burro - էշից ընկած = մեղմացած, կակղած և այլն:

Հայ. *Էշից իջնելով* - զիջելով, չհամառելով,

Էշից իջած լինելով - զիջած՝ տեղի տված լինելով,

Էշից իջավ - զիջեց, տեղի տվեց,

Էշից իջած - մեղմացած, կակղած և այլն:

Այս չորս տարբերակներից յուրաքանչյուրը կարող է գործածվել կենդանի խոսքում, և եթե դրանք արձանագրվեն դարձվածաբանական բառարաններում, ապա այլևս չենք կարող խոսել միայն բայական արժեք ունեցող դարձվածքների մասին, քանի որ բերված չորս տարբերակներից առաջին երկուսը մակբայական են, երրորդը՝ բայական, իսկ չորրորդը՝ ածականական:

Կասկածից վեր է, որ *իջնել* բայը դարձվածքների կազմում կարող է հանդես գալ նաև այլ, խոնարհված ձևերով՝ *էշից կիջնի* «չի համառի, կկակղի» (իսպ. *Caerá de su burro*), *էշից իջել է* «զիջել է, մեղմացել է» (իսպ. *ha*), *էշից իջած կլինի* (իսպ. *Habrá caído de su burro*) և այլն:

Մյուս կողմից՝ հարկ է նկատել, որ ածական արժեք ունեցող դարձվածքների մի զգալի մասը կազմված է հարակատար դերբայի հիմքի վրա: Այս կարգի օրինակներից է իսպաներեն *como gato mojado* «թրջված կատու» դարձվածքը, որը բառացի նշանակում է «թրջված կատվի պես»: Այս կազմության դիմաց հայերեն բառարաններն ունեն բայական դարձվածք՝ *թրջված կատու դառնալ* «խեղճանալ, ընկճվել», 2. «սաստիկ թրջվել», մինչդեռ կարող էին ունենալ նաև *թրջված կատու* տարբերակը: Սրանից բնավ չի բխում, որ իսպաներեն դարձվածքը բացառապես ածականական է, իսկ հայերենը՝ միայն բայական, քանի որ երկու դարձվածքներն էլ ունեն փոփոխվելու լայն հնարավորություններ, ինչպես օրինակ.

Իսպ. *Como gato mojado* «թրջված կատվի պես» = «սաստիկ թրջված»,

Hecho un gato mojado «թրջված կատու դարձած» = «սաստիկ թրջված»,

Se mojó como gato «կատվի պես թրջվեց» = «սաստիկ թրջվեց»,

Mojándose como gato «կատվի պես թրջվելով» = «սաստիկ թրջվելով» և այլն:

Հայ. *Թրջված կատվի պես* - 1. «խեղճացած», 2. «սաստիկ թրջված»,

Թրջված կատու դարձած - 1. «խեղճացած», 2. «սաստիկ թրջված»,

Թրջված կատու դարձավ - 1. «խեղճացավ», 2. «սաստիկ թրջվեց»,

Թրջված կատու դառնալով - 1. «խեղճանալով», 2. «սաստիկ թրջվելով» և այլն:

Այս շարքերը նույնպես ցույց են տալիս դարձվածքների՝ ըստ բառային արժեքի դասակարգման հարաբերականությունը, քանի որ առաջին երկու օրինակներում ունենք ածականական դարձվածքներ, երրորդում՝ բայական, չորրորդում՝ մակբայական: Բացի այդ՝ առաջին երկու տարբերակները որոշակի համատեքստում կարող են վերածվել մակբայական դարձվածքների՝

Temblar como gato mojado - թրջված կատվի պես դողալ,

Temblar hecho un gato majado - թրջված կատու դարձած՝ դողալ:

Բ. Կենդանու անուն պարունակող դարձվածքների բառային և բազմանդամ (դարձվածային) հոմանիշությունը:

Դարձվածքների բառային հոմանիշությունն այն է, որ դարձվածքը կարող է փոխարինվել մեկ բառով: Սակայն սա հոմանիշության միայն մեկ տեսակն է, քանի որ շատ դեպքերում դարձվածքի հոմանիշ կարող է լինել մեկ այլ դարձվածք կամ ազատ բառակապակցություն: Կենդանու անուն պարունակող դարձվածքները նույնպես կարող են դասակարգվել՝ ըստ բառային կամ բազմանդամ հոմանիշության:

Արդեն ասվել է, որ կենդանիների անվանումների հոմանիշությունն առավել արդյունավետ է դրսևորվում հատկապես անտողակի փոխաբերական իմաստային դաշտում: Նույնը կարելի է ասել նաև դարձվածքների մասին: Այստեղ հարկ է պարզել, թե ինչ տեսակի հոմանիշությամբ են աչքի ընկնում վերը նշված անվանական, բայական և մակբայական դարձվածաբանական միավորները, և որոնք են գերիշխող միտումները:

Այս դիտումները ցույց են տալիս, որ կենդանիների անուն պարունակող դարձվածքների հոմանիշությունը չի ենթարկվում որոշակի կայուն օրինաչափությունների, քանի որ կենդանի խոսքում և կախված համատեքստից կարող են գործածվել բազմաթիվ հոմանիշ տարբերակներ՝ ներառնելով ինչպես բառային, այնպես էլ բազմանդամ ձևերը: Այդուհանդերձ, առկա նյութը թույլ է տալիս կատարել հետևյալ ընդհանուր դասակարգումը.

- ❖ *բազմանդամ հոմանիշություն,*
- ❖ *բառային և բազմանդամ հոմանիշություն,*
- ❖ *կենդանու անուն պարունակող դարձվածային հոմանիշներ:*

3.1 Բազմանդամ հոմանիշություն

Ակնհայտ է, որ այստեղ ներկայացված են հիմնականում բայական և որպես նախադասություն հանդես եկող դարձվածային միավորները, որոնց թիվը, ինչպես նշվել է, բավականին մեծ է: Սրանք այն դարձվածքներն են, որոնց իմաստն անհնար է վերարտադրել մեկ բառով, քանի որ շատ դեպքերում խոսքը վերաբերում է բավականին երկար և ամբողջական կապակցությունների:

Օրինակ՝

1. *Marchársele a uno el borrico al centeno* - ուշ խելքի գալ, սխալ թույլ տված լինել,
2. *Buena burra hemos comprado* - բախտներս չբերեց, վատ ապրանք առանք,
3. *Sacar uno bien el caballo* - ջրից չոր դուրս գալ, էժան պրծնել,

4. *Cargarle las cabras a uno* - մեղքը ուրիշի վրա գցել, քավության նոխսագ դարձնել,
5. *Pescarle a uno el conejo* - սիրելի բանը՝ խաղալիքը խլել, ձեռքից վերցնել,
6. *Saber una cosa como yo de capar monos* - որևէ գործից չհասկանալ, շատ հեռու լինել,
7. *Hacerse uno el cordero* - անմեղ տեսք ընդունել, միամիտ՝ անմեղ գառ ձևանալ,
8. *Como los perros, oliendo donde guisan* - ուտելիքի հոտ առած, ձրի ուտելիք փնտրելով,
9. *Por atún y a ver al duque* - մի կրակոցով երկու նապաստակ սպանել, մի ձեռքով երկու ձմերուկ բռնել,
10. *Cogerle a uno el toro* - հանցանքի վայրում՝ գողությունը ձեռքին բռնել:

Նմանօրինակ դարձվածքների թիվը շատ ավելի մեծ է, սակայն, բերված օրինակներն էլ պարզորոշ ցույց են տալիս բազմանդամ հոմանիշության առանձնահատկությունները: Իսպաներենում այս և նման դարձվածքները չունեն բառային հոմանիշներ, ուստի կարող են փոխարինվել միայն բառակապակցություններով:

Օրինակ հայերենից՝

1. *Այծերը ոչխարներից ջոկել* - մեղավորին անմեղից ջոկել,
2. *Ուղտը գղալով ջրել* - փոքր բանով մեծ կարիք հոգալ,
3. *Ծոցում օձ տաքացնել* - թշնամուն, չար մարդուն հովանավորել,

4. *Գայլի գլխին ավետարան կարդալ* - ապարդյուն կերպով ջանալ ինչ-որ մեկին ուղիղ ճանապարհի բերել՝ խրատել,
5. *Արջը կալին լծել* - ոչ հարմար գործի դնել, տգետին պաշտոն կամ աստիճան տալ,
6. *Շնից մազ պոկել* - անսպասելի կողմնակի բանից, ժլատից օգտվել,
7. *Ձուկը գլխից բռնել* - գործը հիմնականից, գլխավորից սկսել,
8. *Հավ մորթած չլինել* - ոչ մեկին վնաս, վատություն արած չլինել,
9. *Լուսն ուղտ շինել* - մի չնչին բանի մեծ նշանակություն տալ,
10. *Մորեխ ցանել (գլխի վրա)* - տխուր մարդուն ավելի տխրեցնել:

Ակնհայտ է, որ բերված դարձվածքներից ոչ մեկը չի կարող ունենալ բառային հոմանիշ: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ դարձվածքների դիմաց դրված բացատրություններն ընդամենը *մեկնաբանություններ* են, և կարող են հոմանիշներ համարվել որոշ վերապահությամբ, քանի որ դրանցում բացակայում են դարձվածային իմաստի կարևորագույն հատկանիշները՝ պատկերավորությունը և հուզաարտահայտչականությունը: Մակայն, երբ դարձվածքի դիմաց ունենք ոչ թե ազատ կապակցություն կամ պարզ մեկնաբանություն, այլ հոմանիշ դարձվածք, ապա պատկերավորության կորուստը ավելի քիչ կլինի: Այստեղից հետևում է, որ *դարձվածային հոմանիշության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ դարձվածը փոխարինվում է դարձվածքով:*

3.2 Բառային և բազմանդամ հոմանիշություն

Բնորոշ է հատկապես ածականական, մակբայական և բայական դարձվածքներին և հազվադեպ է գոյականական դարձվածքներում: Վերջիններս առավելապես բնորոշվում են բազմանդամ հոմանիշությամբ, ինչպես օրինակ՝ *buen pez* - ազդեցիկ մարդ, մեծահարուստ կամ պաշտոնյա, *toro corredor* - փորձված, կյանք տեսած, ընկած-ելած մարդ, *culo de gallo* - անհաջող կարկատան և այլն:

Պետք է նկատել, որ բազմաթիվ դեպքերում բառային և բազմանդամ հոմանիշները գուգորդվում են, այսինքն՝ միևնույն դարձվածքը կարող է ունենալ ինչպես բառային, այնպես էլ բազմանդամ հոմանիշներ:

Այսպես, իսպաներեն *puesto en el borrico* - վճռականորեն, վճռական տրամադրվածությամբ դարձվածքը, ինչպես ցույց է տալիս հայերեն թարգմանությունը, կարող է ունենալ և բառային և բազմանդամ հոմանիշներ. առաջին դեպքում կարող է փոխարինվել *resueltamente* - վճռականորեն մակբայով, իսկ երկրորդում՝ *con resolución* - վճռական կերպով հոմանիշ բառակապակցությամբ: Նույնը կարելի է ասել նաև *morcharse como el gato escaldado* - ծլկել, ճողոպրել դարձվածքի մասին, որի բառային հոմանիշը կլինի *huirse* «փախչել», իսկ բազմանդամը՝ *ponerse en fuga* - փախուստի դիմել կապակցությունը: Հայերենում սրանց հետ կարելի է համադրել համապատասխանաբար *ճողոպրել, ծլկել* մենաբառայինները և *փախուստի դիմել, արանքը ճղել* կապակցությունները:

Ըստ էության, ածականական, մակբայական և բայական դարձվածքների հիմնական մասը չի բացառում բառային և բազմանդամ հոմանիշության գուգակցումը, որը գալիս է այս

կարգի դարձվածքների կառուցվածքային առանձնահատկություններից, քանի որ այդ դարձվածքների իմաստները կարող են արտահայտվել ինչպես առանձին բառերով՝ խոսքի մասերով, այնպես էլ՝ դրանց զուգահեռ բաղադրյալ տարբերակներով:

Այստեղ ներկայացվում են ածականական, մակբայական և բայական մի քանի դարձվածք՝ կցելով համապատասխան բառային և բազմանդամ հոմանիշ ձևերը:

1. *Echarle los caballos encima a uno* - մեղադրել, քննադատել,

Բառային հոմանիշ՝ *criticar* - քննադատել, կշտամբել,

Բազմանդամ հոմանիշ՝ *poner tibio a uno* - նախատել, կշտամբել:

2. *Como matar culebra* - անխնա, անզթորեն:

Բառային հոմանիշ՝ *cruelmente* - դաժանորեն:

Բազմանդամ հոմանիշ՝ *sin piedad* - անզթորեն, դաժանորեն,

3. *A topa de carnero* - հանկարծ,

Բառային հոմանիշ՝ *inesperadamente* - անսպասելիորեն,

Բազմանդամ հոմանիշ՝ *de improviso* - անսպասելիորեն,

4. *Zumbarle los perros* - ծեծել, քոթակել,

Բառային հոմանիշ՝ *zurrar* - ծեծել, քոթակել,

Բազմանդամ հոմանիշ՝ *dar una paliza* - ծեծել, քոթակել:

5. *Ahumarsele a uno el pescado* - պոռթկալ, բռնկվել, զայրանալ,

Բառային հոմանիշ՝ *irritarse* - զայրանալ, բարկանալ,

Բազմանդամ հոմանիշ՝ *ponerse furioso* - կատաղել, մոլեգնել:

6. *Como sapos* - գեր, տոգած, փքված,

Բառային հոմանիշ՝ *barrigudo* - գեղ, ցմփոք,
Բազմանդամ հոմանիշ՝ *metido en carnes* - գեղ, մսոտ:

7. *Mas calvo que codorniz enjaulada* - մազաթափ, ճաղատ,
Բառային հոմանիշ՝ *Encalvecido* - ճաղատացած,
Բազմանդամ հոմանիշ՝ *Sin pelo* - անմազ, մազաթափ:

8. *Como las colondrinas en verano* - առատ, մեծ քանակությամբ,
անթիվ-անհամար,

Բառային հոմանիշ՝ *Sinnumero* - անթիվ, անհամար,

Բազմանդամ հոմանիշ՝ *En gran cantidad* - մեծ քանակությամբ:

9. *Tener uno mucho pavo* - սաստիկ վախենալ, երկյուղել,

Բառային հոմանիշ՝ *Temer* - վախենալ,

Բազմանդամ հոմանիշ՝ *Tener miedo* - վախենալ, երկյուղել:

10. *No poder uno con una hormiga* - թուլանալ, ուժը կորցնել,

Բառային հոմանիշ՝ *Debilitarse* - թուլանալ,

Բազմանդամ հոմանիշ՝ *Perder fuerza* - ուժը կորցնել:

Ածականական, գոյականական, մակբայական և բայական հոմանիշների քանակական հարաբերակցության տեսանկյունից հայերենը շատ չի տարբերվում իսպաներենից: Հայերենում նույնպես գերակշռում են ածականական, մակբայական և բայական հոմանիշները, և սակավաթիվ են գոյականականները:

Մի քանի օրինակ համեմատության համար:

1. *Ձիու ականջը մտած* - ձին արագ քշելով,

Բառային հոմանիշ՝ *սլանալով*,

Բազմանդամ հոմանիշ՝ *քամու արագությամբ*:

2. *Էջի դրախտն ուղարկել* - սպանել, ոչնչացնել,
Բառային հոմանիշ՝ *վերացնել*,
Բազմանդամ հոմանիշ՝ *զլուխն ուտել*:
3. *Օձի փուշ ուտեցնել* - չարաչար նեղել, խստությամբ
վարվել,
Բառային հոմանիշ՝ *տանջել*,
Բազմանդամ հոմանիշ՝ *հոգին հանել*:
4. *Օձի պէս սողալ* - ստորաքարշություն անել,
Բառային հոմանիշ՝ *քծնել*,
Բազմանդամ հոմանիշ՝ *կեղծավորություն անել*:
5. *Ասեղ կերած շուն* - սաստիկ նիհար կամ նիհարած,
Բառային հոմանիշ՝ *սնքած*,
Բազմանդամ հոմանիշ՝ *չոփ դարձած*:
6. *Ձկան պէս համր* - գաղտնիք պահող, համառորեն լռող,
Բառային հոմանիշ՝ *գաղտնապահ*,
Բազմանդամ հոմանիշ՝ *բերանը ջուր առած*:
7. *Մուկ մորթել* - քիչ ծախսել, փող խնայել,
Բառային հոմանիշ՝ *տնտեսել*,
Բազմանդամ հոմանիշ՝ *ասեղ մաշկել*:
8. *Ծոխ սիրտ* - սաստիկ վախկոտ, երկչոտ,
Բառային հոմանիշ՝ *փոքրոգի*,
Բազմանդամ հոմանիշ՝ *տակը լցնող*:

9. *Բլբուլ կտրել* - շատ խոսել, ճարտարախոս դառնալ,
Բառային հոմանիշ՝ *բլբլացնել*,
Բազմանդամ հոմանիշ՝ *լեզուն բացվել*:

10. *Պոչի տակի ճանճ* - ուրիշի կամքին ենթարկված, ստո-
րադրյալ,
Բառային հոմանիշ՝ *կամակատար*,
Բազմանդամ հոմանիշ՝ *ձեռքի խաղալիք*:

Դժվար չէ նկատել, որ իսպաներեն և հայերեն դարձվածք-
ների բազմանդամ հոմանիշությունը հիմնականում սահմա-
նափակվում է պարզ մեկնաբանությամբ, որը, ինչպես ասվել է,
չի հաղորդում դարձվածքի պատկերավորությունը: Ուստի
բերված օրինակներում հոմանիշությունը հարաբերական է և
հուզաարտահայտչականության տեսակետից ամբողջական
չէ: Հոմանիշության բնույթն էապես փոխվում է, երբ դարձված-
քի փոխարեն գործածվում է մեկ այլ՝ առավել ևս՝ կենդանու
անուն պարունակող դարձվածք: Այս դեպքում կարելի է խոսել
իսկական և ամբողջական դարձվածային հոմանիշության մա-
սին:

3.3 Կենդանու անուն պարունակող դարձվածքների դարձվածային հոմանիշներ

Դարձվածային հոմանիշության հարցը քննելիս անհրա-
ժեշտ է իրարից տարբերել երկու տարբեր երևույթներ՝ դարձ-
վածային գուգաձևությունը և դարձվածային հոմանիշությունը,
չնայած նմանօրինակ տարանջատումը դժվարությունների
առիթ է դառնում: Դարձվածային գուգաձևությունը, ըստ էու-

թյան, նույն դարձվածքի գուգահեռ տարբերակն է՝ դարձվածքի կազմի մեջ մտնող տարրերից մեկի փոփոխությամբ:

Օրինակ հետևյալ գուգաձևությունների դիտարկումը.

1. *Apearse (caer) uno de su asno* - զիջել, չհամառել, տեղի տալ,
2. *Apearse (caer) uno de su burra* - նույն նշ.,
3. *Apearse (caer) uno de su burro* - նույն նշ.,
4. *Apearse (caer) uno de sujumento* - նույն նշ.:

Այս չորս դարձվածքներում մենք ունենք գուգաձևության մի շարք տարբերակներ, որոնց մի մասը ձևավորվել է *asno* - էշ բառի հոմանիշների (*burro, jumento*) և *apearse* - իջնել ու *caer* - ընկնել բայերի հիման վրա: Ընդ որում՝ հոմանիշներից երկուսի հիմքում ընկած է սեռի տարբերակումը (*apearse de su burra* – *apearse de su burro*), որը դարձվածքի հոմանիշության համար էական նշանակություն չունի:

Հայերենում կա *էշից իջնել* - դիրքերը զիջել, մի քիչ մեղմանալ դարձվածքը, որը ներկայացված իսպաներեն շարքի բացարձակ գուգահեռն է: Միաժամանակ, *էշից ընկած* դարձվածքը, իր կառուցվածքով համապատասխանելով իսպաներեն *caer de su asno* - (բառացի՝ «իր էշից իջնել») ձևին, չի արտահայտում «զիջել, տեղի տալ» իմաստը, այլ ունի «պաշտոնից, դիրքից զրկված» նշանակումը:

Նույնակերպ էլ հայերեն դարձվածքներում *էշ* բառը կարող է փոխարինվել *ավանակ* հոմանիշով, որից բերված դարձվածքների էությունը չի փոխվի (հմմտ. նաև *ավանակի գլուխ* - *էշի գլուխ* - հիմար, ապուշ մարդ գուգաձևությունները):

Կարելի է ասել, որ սրանք սույն կենդանու անվան հոմանիշների հիմքի վրա կազմավորված դարձվածային գուգահեռ

ձևեր են, որոնք հեշտությամբ կարող են միմյանց փոխարինել, այնքանով, որքանով միմյանց փոխարինում են էշ և *ավանակ* հոմանիշ բառերը:

Շատ ավելի բարդ և ուշագրավ են այն դեպքերը, որոնցում հոմանիշությունը ձեռք է բերվում ոչ թե նույն կենդանու անվան հոմանիշ տարբերակի, այլ ուրիշ կենդանիների անվանումների և դարձվածային ընդհանուր իմաստի հաշվին: Ինչ խոսք, պարտադիր չէ, որ կենդանու անուն պարունակող դարձվածքի հոմանիշ դարձվածքը նույնպես պարունակի կենդանու անվանում: Ամեն բան կախված է դարձվածային իմաստից, որն էլ ձևավորվում է դարձվածքի կազմի մեջ մտնող բառերի իմաստներից: Ամեն դեպքում, առաջադրված ցանկում ներկայացված դարձվածքները հնարավորություն են տալիս կատարել հոմանիշության հետ կապված որոշ դասակարգումներ և խմբավորումներ՝ վեր հանելով առավել մեծաքանակ հոմանիշային խմբերը:

Իսպաներեն ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացված դարձվածքները խմբավորվում են՝ ըստ որոշակի իմաստների, անկախ նրանից, թե տվյալ դարձվածքը ինչ կենդանու անուն է պարունակում: Մեծ թիվ են կազմում հատկապես ածականական դարձվածքները, որոնք հիմնված են պարզ համեմատության վրա, ինչպես օրինակ՝ *gordo como una vaca* - կովի պես գեր, տոգած, *sucio como un gocho* - խոզի պես կեղտոտ, *más valiente que un león* - առյուծից ավելի քաջ և այլն: Այս կարգի կառուցվածքները չի կարելի անվերապահորեն դարձվածք համարել, և դրանք բացակայում են հայերեն դարձվածաբանական բառարաններում:

Մնացած հոմանիշային խմբերից իրենց տեսակարար կշռով աչքի են ընկնում - 1. «փախչել, ծլկել, գլուխը պրծացնել»,

2. «հանդիմանել, կշտամբել» և 3. «վրիպել, ձախողվել, անհաջողության մատնվել» իմաստներով դարձվածքները, որոնք ներկայացնում են հիմնականում բառային հոմանիշություն:

Ահավասիկ առավել բնորոշ օրինակները:

ա. «փախչել, ծլկել, գլուխը պրծացնել»

1. *Escurrirse como el caracol* - ծլկել, ճողոպրել, գլուխը պրծացնել,
2. *Marcharse como el gato escaldado* - նույն նշ.,
3. *Marcharse como gato con cuerno* - ծլկել, ճողոպրել,
4. *Escurrirse como las culebras* - լարծուն լինել, ձեռքից դուրս պրծնել,
5. *Salir uno a gatas* - գլուխը պրծացնել, ծլկել,
6. *Escaparse (escurrir, huir) como una lagartija* - ծլկել, ճողոպրել, գլուխը պրծացնել,
7. *Correr como un caballo desbocado* - գլխապատառ փախչել,
8. *Correr (escaper, huir, irse) como perro con conerro (con cuerno, con maza, con vejiga)* - գլխապատառ փախչել, ճողոպրել,
9. *Escapar (huir, salir asustado) de alguien como chucho con cuerno* - գլխապատառ՝ խուճապահար փախչել,
10. *Correr (ir) como el ratón en su agujero* - փախչել, թաքնվել, ծակը մտնել,
11. *Huir como el ratón del gato* - սարսափահար փախչել, գլուխը պրծացնել,
12. *Escaparse (volar) el pájaro* - փախչել, ծլկել, ճողոպրել,
13. *Saltar el pájaro del nido* - փախչել, ծլկել, ճողոպրել,
14. *Volverse uno pájaro* - փախչել, ծլկել,

15. *Andar uno en zancas como araña* - խուսափել, փախչել, ծլկել,

16. *Aletear como las mariposas* - մի կերպ դուրս պրծնել:

Ակնհայտ է, որ «փախչել, ծլկել, գլուխը պրծացնել» հոմանիշային խումբը ներկայացված է ամենատարբեր կենդանիների անվանումներով և բայերով: Նման արդյունավետությունը բխում է, անշուշտ, այս կամ այն կենդանուն վերագրվող որոշակի հատկությունից: Այստեղ իմաստային դաշտը բավականին կոնկրետ է, տարբեր կենդանիներ օժտված են նույն հատկությամբ, որը և պայմանավորում է հոմանիշ դարձվածքների մեծաքանակությունը: Այլ կերպ ասած, բերված դարձվածքներում կենդանիների հատկությունն արտահայտվում է ուղղակի իմաստով, որը դեռևս ամբողջապես մթագնած չէ:

Հայերեն ցանկում «փախչել, ծլկել, գլուխը պրծացնել» իմաստով դարձվածքներ չեն ներկայացված, կան մի քանի հոմանիշ տարբերակներ, սակայն դրանք քանակ և որակ չեն կազմում, ինչպես իսպաներենում: Այդուհանդերձ, իսպաներեն դարձվածքների մի մասը կարող է պատճենվել և գործածվել հայերեն բանավոր խոսքում, ինչպես օրինակ՝ *huir como el raton del gato* - փախչել ինչպես մուկը կատվից, *correr como el raton en su agujero* - մկան պես ծակը մտնել, փախչել, *aletear como las mariposas* - թիթեռի պես թռչել, փախչել և այլն:

Հայերեն դարձվածաբանական բառարաններում առավել մեծաքանակ են «վախենալ, երկյուղել, վախկոտ լինել» իմաստներով հոմանիշ դարձվածքները, որոնց թիվը, սակայն, չի հասնում մեկ տասնյակի.

1. *Այծայծ լինել* - վախենալ, խրտնել,

2. *Փոխանը կատու ընկնել* - սաստիկ վախենալ,

3. *Նապաստակի սիրտ ունենալ* - երկչոտ, խեղճ լինել,
4. *Նապաստակ փախցնող* - երկչոտ, խեղճ մարդ,
5. *Գայլի աչք* - երկյուղ, սարսափ, վախ,
6. *Մկան սիրտ ունենալ* - վախկոտ լինել,
7. *Ծտի լեղի ունենալ* - վախկոտ, երկչոտ լինել,
8. *Ծտի սիրտ* - սաստիկ վախկոտ, երկչոտ,
9. *Աղավնու լյարդ* - վախկոտ, երկչոտ:

բ. «հանդիմանել, կշտամբել»

1. *Echarle loscaballos encima a uno* - հանդիմանել, կշտամբել, քննադատել,
2. *Dejarle a uno más eco que el bacalao* - նախատել, հանդիմանել, կշտամբել,
3. *Poner a uno de marrano* - անպատվել, խիստ հանդիմանել,
4. *Echarle las vacas a uno* - քննադատել, հանդիմանել,
5. *Echarle (soltarle) a uno el toro* - անպատվել, խիստ հանդիմանել,
6. *Soltarle el pavo a uno* - կոպտել, վիրավորել,
7. *Soltarle a uno el mochuelo* - կոպտել, անպատվել:

Այս խումբը թեև մեծաքանակ չէ, բայց աչքի է ընկնում դարձվածքի կազմի մեջ մտնող բառերի իմաստների առավել ամբողջական մթագնմամբ: Այսինքն՝ այս դարձվածքներում մենք չունենք կենդանիներին վերագրվող հատկանիշներ, և ընդհանրապես կենդանիների անուններն այստեղ ոչ մի դեր չեն խաղում: Այսպես, *echarle los caballos encima a uno* դարձվածքը բառացի նշանակում է «մեկի վրայով ձիեր անցկացնել», մինչդեռ դարձվածային «հանդիմանել, կշտամբել» իմաստը ոչ

մի կապ չունի *caballo* «ձի» բառի հետ, իսկ *dejare a uno más seco que el bacalao* դարձվածքի բառացի թարգմանությունն է «մեկին ձողաձկնից ավելի չոր թողնել», որը ընդհանուր ոչ մի բան չունի «հանդիմանել, կշտամբել» իմաստի հետ, իսկ վերջինս՝ ձողաձկանը վերագրվող որևէ հատկության հետ:

Հայերեն շարքում նույնպես այս խումբը մեծ չէ և ներկայացված է ընդամենը հինգ հոմանիշ դարձվածքներով.

1. *Մե կշին նստեցնել* - անարգել, խայտառակել,
2. *Մեկի կշին չոշ ասել* - վիրավորել, նեղացնել,
3. *Օձի պես խայթել* - վիրավորել, վատ բան ասել,
4. *Գլխին շան լափ թափել* - խիստ հանդիմանել, նախատել,
5. *Հավին քշա անել /ասել/* - նեղացնել, վիրավորել:

գ. «վրիպել, ձախողվել»

1. *Volverse a uno la jaca* - ձախողվել, անսպասելի ընթացք ստանալ,
2. *Marcharse a uno las cabras al cabrero* - վրիպել, ձախողվել,
3. *Cazar gato por liebre* - վրիպել, ձախողվել,
4. *Escaparse a uno una liebre* - վրիպել, ձեռքից բաց թողնել,
5. *Andar (estar, salir) una cosa como la mona* - գործը թարս գնալ, չստացվել,
6. *Salirle a uno la mula falsa* - ձախողվել, անհաջողության հանդիպել, խոփը քարին առնել,
7. *Salir con una pata de gallo* - վրիպել, սխալվել,
8. *Irsele el pájaro a uno* - մեկի գործը տապալվել, հաստատ գործը ձեռքից գնալ:

Այս խմբում նույնպես դարձվածային իմաստները կապ չունեն կենդանիների հատկությունների հետ, ուստի կարելի է խոսել դրանց իմաստների լիակատար մթագնման մասին: Ընդհանրապես, որքան մթագնած են դարձվածքի բաղադրիչների իմաստները, այնքան պատկերավոր և արտահայտիչ է դարձվածքը: *Cazar gato por liebre* դարձվածքը, օրինակ, ըստ էության, նշանակում է «նապաստակի փոխարեն կատու բռնել» և օժտված է զգալի արտահայտչականությամբ, մինչդեռ *más valiente que un león* - առյուծից ավելի քաջ կառուցվածքում դարձվածային իմաստն ավելի թափանցիկ է և նվազ արտահայտիչ:

Ինչպես հայտնի է, հոմանիշությունն անբաժանելի է *հականիշությունից*, և եթե խոսում ենք կենդանու անուն պարունակող դարձվածքների հոմանիշության մասին, ապա կարող ենք խոսել նաև դրանց հականիշության մասին: Ընդ որում, հոմանիշ-հականիշ հակադրությունն առավել վառ է դրսևորվում այն դարձվածքներում, որոնք կապված են կենդանիների հատկությունների հետ: Ըստ այդմ՝ մի խումբ կենդանիների հատկություններ կարող են միավորվել մեկ հոմանիշային դաշտում և հակադրվել մեկ այլ խմբի՝ դառնալով վերջինիս հականիշները:

Իսպաներեն դարձվածքների քննությունը ցույց է տալիս, որ հոմանիշ-հականիշ հակադրության ամենից ավելի մեծաքանակ դրսևորումները կապված են «արագաշարժ, ճարպիկ» և «դանդաղաշարժ, ծույլ» իմաստների հետ: Այս կարգի հականիշությունը հենվում է կենդանիների՝ միմյանց հակադրվող հատկությունների վրա. Կենդանիների մի մասը ճարպիկ է, արագաշարժ, մյուս մասը՝ դանդաղաշարժ: Ուշագրավ է, որ «արագաշարժ, ճարպիկ» և «դանդաղաշարժ, ծույլ» իմաստներ-

րով հականիշ դարձվածքների շարքերը քանակական առումով միմյանցից շատ չեն տարբերվում:

Ներկայացնենք այդ երկու շարքերն առանձին-առանձին:
ա. «արագաշարժ, ճարպիկ»

1. *Más ligero que una ardilla* - սկյուռից ավելի ճարպիկ, արագաշարժ,
2. *Parecer un caballo desbocado* - շատ արագ՝ գլխապատանով վազել,
3. *A mata caballo* - ամբողջ արագությամբ, ամբողջ ուժով,
4. *A corcel suelto* - արագ, ճարպկորեն,
5. *Correr como un corcel* - լավ վագորդ լինել, արագաշարժ լինել,
6. *Andar como las cabras por la sierra* - 1. շատ ճարպիկ, արագաշարժ լինել, 2. իրեն ազատ զգալ՝ ինչպես ձուկը ջրում,
7. *Saltar como una cabra* - շատ ճարպիկ՝ արագաշարժ լինել,
8. *Correr más que el ciervo* - եղնիկից ավելի արագ վազել,
9. *Correr como un gamo* - արագավազ լինել,
10. *Correr como gato al bofe* - մեծ արագությամբ սլանալ, վազել,
11. *Más ligero que una liebre* - նապաստակից ավելի թեթև՝ արագավազ,
12. *Correr más que un galgo* - քերծեից ավելի արագ վազել,
13. *Más liso que una lagartija* - մողեսից ավելի ճարպիկ՝ արագաշարժ,
14. *Más listo que un mono* - ճարպիկ, գործունյա, արագաշարժ,

15. *Más listo que una rata* - առնետից ավելի ճարպիկ՝ արագաշարժ
16. *Más listo que un ratón* - մկից ավելի ճարպիկ՝ արագաշարժ,
17. *Como raposas* - աղվեսի պես ճարպիկ՝ արագաշարժ,
18. *Volar más que un águila* - արծվից ավելի արագ թռչել,
19. *Más ligero que un pájaro* - ճարպիկ, թեթև, արագաշարժ,
20. *Como saltamontes* - մորեխի պես արագաշարժ:

բ. «դանդաղաշարժ, ծուլ»

1. *Burro matalón* - դանդաղաշարժ, ծուլ մարդ,
2. *A paso de buey* - դանդաղ, եզան քայլերով,
3. *Como un buey cansino* - հոգնած եզան պես՝ դանդաղաքայլ, ծանրաքայլ,
4. *Hecho un buey* - գեր, դանդաղաշարժ,
5. *Más pesado que un caballo de alquiler* - դանդաղաշարժ, ծանրաշարժ,
6. *Ir hacienda reverencias como caballo cojo* - կաղալով՝ երերալով քայլել,
7. *Hecho un camello* - 1. շշմած, ապուշ կտրած, 2. դանդաղաշարժ, ապաշնորհ,
8. *Más tropezón que mula coja* - կաղ ջորուց ավելի դանդաղաշարժ,
9. *Correr como mula coja* - կաղ ջորու պես վազել, հազիվ ոտքերը շարժել,
10. *Parado como mula de alquiler* - վարձու ջորու պես դանդաղաշարժ,
11. *Parecer una rana* - ճողված քայլել, հազիվ ոտքերը քարշտալ,

12. *Parecer uno un sapo* - ծանր, գորտի պես դանդաղաշարժ լինել,
13. *Como la tortuga* - 1. կծկված, կուչ եկած, 2. դանդաղ, կրիայի քայլերով,
14. *Andar hociendo como los puercos* - 1. քիթը խոթել ուրիշի գործերի մեջ, 2. սայթաքելով՝ վայր ընկնելով քայլել,
15. *Hocicar como marranos* - սայթաքելով և մոուրթը առաջ գցած քայլել,
16. *A echar pollos* - 1. շուտ քնող, 2. ուշ արթնացող, 3. դանդաղաշարժ, ծանրաշարժ,
17. *Sacar pollos* - 1. թուխս նստել, ճուտ հանել, 2. նստած մնալ, տեղից չշարժվել,
18. *Andar como los pavos* - հնդուհավի պես ճեմելով՝ շորորալով քայլել:

Այսպիսով՝ «արագավազ, ճարպիկ» հոմանիշ դարձվածքների խումբը հակադրվում է «դանդաղաշարժ, ծուլ» հոմանիշների խմբին, ուստի երկու տեսակի դարձվածքների փոխհարաբերությունը կարող է բնորոշվել *հականիշության* եզրույթով: Ըստ էության, առաջին շարքի ցանկացած դարձվածք երկրորդ շարքի որևէ դարձվածքի հականիշն է:

Հարկ է նկատի ունենալ, որ տվյալ դեպքում դարձվածքների հոմանիշությունը և հականիշությունը ինչ-որ չափով պատճառաբանված է, քանի որ այդ երևույթների հիմքում ընկած են կենդանիների իրական հատկություններ, որոնք կարող են հակադրվել միմյանց: Այդուհանդերձ, չի կարելի ասել, թե բերված բոլոր դարձվածքներում առկա է բաղադրիչների իմաստների մթագնում, քանի որ կենդանիներին վերագրվող հատկությունները հիմնականում պահպանում են իրենց նշանա-

կումները: Վերջին հաշվով, «արագաշարժ» - «դանդաղաշարժ» հակադրությունը շատ թափանցիկ է և հեշտությամբ կարող է կապվել այս կամ այն կենդանու անվան հետ:

Հայերենում այս երկու հականուն խմբերը փոքրաթիվ են և իրենց քանակով զգալիորեն զիջում են իսպաներեն դարձվածքներին: Ըստ էության, այստեղ խոսքը մեկ տասնյակի չհասնող գուգահեռ ձևերի մասին է.

ա. «արագաշարժ, ճարպիկ»

1. *Ձիու ականջը մտած /քշել, վազել/* - մեծ արագությամբ,
2. *Ձիու սանձը թողնել* - արագ, լրիվ ընթացքով քշել:

բ. «դանդաղաշարժ, ծուլ»

1. *Աղոթած էշ* - մոլորված, շվարած, անճարակ, շշմած մարդ,
2. *Աղամա եզ* - ծուլ, անհոգ մարդ,
3. *Կրիայի քայլերով* - շատ դանդաղ, դանդաղաշարժությամբ,
4. *Արջավազ տալ* - արջի նման՝ օրորվելով վազել:

Անշուշտ, իսպաներեն դարձվածքների մի զգալի մասն ունի կամ կարող է ունենալ իր ուղղակի հայերեն համարժեքները, որոնք բառարաններում չեն վկայված, ինչպես օրինակ՝ *a paso de buey* - դանդաղորեն, եզան քայլերով, *correr más que un ciervo* - եղնիկից ավելի արագ վազել, *andar como los pavos* - հնդուհավի պես շորորալ՝ ճեմել, *más ligero que un pájaro* - թռչնից ավելի թեթև, արագաշարժ և այլն:

Իսկ այժմ դարձվածային հականիշության մեկ այլ տարբերակ, որը կապ չունի կենդանիների հատկությունների հետ: Խոսքը վերաբերում է «ազատ, անկաշկանդ» և «նեղված, ճնշված» իմաստներով դարձվածքներին, որոնք բնորոշվում են

իրենց բաղադրիչների իմաստների առավել ամբողջական մթագնամամբ:

ա. «ազատ, անկաշկանդ»

1. *Andar como las cabras por la sierra* - 1. շատ ճարպիկ, արագաշարժ լինել, 2. իրեն զգալ ինչպես ձուկը ջրում,
2. *Como lobo en la camada (en rebaño)* - ինչպես գայլը փառախում,
3. *Encontrarse (estar, sentirse, hallarse, vivir) como pez en el agua* - իրեն զգալ ինչպես ձուկը ջրում,
4. *Como la rana en su charco* - ազատ, անկաշկանդ, ինչպես գորտը իր ջրափնոսում,
5. *Como zorra en gallinero* - ինչպես աղվեսը հավաբնում,
6. *Como gallo en en el gallinero* - ինչպես աքլորը հավաբնում,
7. *Estar (ir) uno como pato en el agua* - իրեն զգալ ինչպես բադը ջրում,
8. *Como abeja en flor* - ազատ, անկաշկանդ, ինչպես մեղուն ծաղկի վրա:

բ. «նեղված, ճնշված»

1. *Como sardine en tierra* - վտանգավոր դրության մեջ, դժվար վիճակում, ինչպես ձուկը ցամաքում,
2. *Como gallina en corral ajero* - նեղված, անհարմար վիճակում, ինչպես հավը օտար հավաբնում,
3. *Como gallo en corral ajeno* - նեղված, ճնշված, հալածված, ինչպես աքլորը օտար հավաբնում,
4. *Como piojos en costura* - անհանգիստ, նեղված, իրար գլխի թափված,

5. *Como pulga entire dedos* - նեղության մեջ, դժվար վիճակում:

Ի տարբերություն նախորդ շարքերի, այս երկու խմբերում ներկայացված դարձվածքներն աչքի են ընկնում զգալի պատկերավորությամբ և արտահայտչականությամբ: Ուշագրավն այն է, որ երկու շարքերում էլ գործում է դարձվածակազմական միևնույն կաղապարը՝ *ինչպես + կենդանու անվանում + տեղի պարագր*: Երկու շարքերում համընկնում են նաև որոշ բառեր՝ *como gallo en el gallinero* - ինչպես աքլորը հավաբնում - *como gallo en corral ajeno* - նեղված, ճնշված, հալածված, ինչպես աքլորը օտար հավաբնում:

Այս օրինակներում դարձվածային հոմանիշությունը և հականիշությունը ձևավորվել են որոշակի կաղապարների հիմքի վրա, ուստի նույն կաղապարում կարող են որոշ տարբեր փոխարինվել այլ բառերով, որից, սակայն, դարձվածքի իմաստը չի փոխվի: Այսպես, հենվելով վերը նշված *ինչպես + կենդանու անվանում + տեղի պարագր* կաղապարի վրա՝ կարելի է ստեղծել բազմաթիվ նոր դարձվածքներ, ինչպես օրինակ՝ *como la oveja en el prado* - ինչպես ոչխարը մարգագետնում, *como pájaro en el aire* - ինչպես թռչունն օդում և այլն: Նույն եղանակով կարող են ստեղծվել նաև այդ դարձվածքների հականունները՝ *como pájaro en la jaula* - ինչպես թռչունը վանդակում, *como perro en patio ajeno* - ինչպես շունը ուրիշի բակում և այլն:

Հայերենում այս կարգի դարձվածային հոմանիշությունն ու հականիշությունը նույնպես որոշ չափով արտացոլված են: Ճիշտ է, իրենց պարունակած կենդանիների անուններով միշտ

չէ, որ համընկնում են իսպաներեն գուգահեռների հետ, այդու-
հանդերձ, հոմանիշ-հականիշ հակադրությունն ակնհայտ է:

ա. «ազատ, անկաշկանդ»

1. *Ինչպես ձուկը ջրում* - ազատ, անկաշկանդ, հանգիստ, հարմարավետ,
2. *Երկնքի թռչունի պես ապրել* - անհոգ, ազատ, անկաշկանդ ապրել:

բ. «նեղված, ճնշված»

1. *Թանն ընկած մուկ* - խեղճացած, կուչ եկած,
2. *Կարասն ընկած մուկ* - անելանելի՝ խեղճացած վիճակում գտնվող մարդ,
3. *Ջրից դուրս ընկած ձուկ* - նեղված, ճնշված (ասվում է հատկապես հայրենիքից դուրս գտնվող մարդու մասին):

Իսպաներեն-հայերեն դարձվածքների համեմատությունից չի կարելի եզրակացնել, թե հոմանիշ և հականուն շարքերի թվով հայերենը զիջում է իսպաներենին: Ուսումնասիրությունը հենված է բացառապես բառարաններում արձանագրված տվյալների վրա, որոնք չի կարելի ամբողջական համարել: Հենց միայն «ազատ, անկաշկանդ» և «նեղված, ճնշված» իմաստներով դարձվածքների թիվը խոսակցական լեզվում կարող է բավականին մեծ լինել՝ ներառնելով բառարաններից դուրս մնացած կազմություններ, ինչպես օրինակ՝ *ինչպես էշը գարու հորում* «ազատ, անկաշկանդ, ըստ պահանջի», *մառանն ընկած մկան պես* «ազատ, անկաշկանդ, առատության մեջ», *հավաքունն ընկած աղվեսի պես* «ազատ, անկաշկանդ, առատության մեջ», *թակարդն ընկած գայլի պես* «նեղված,

ընկճված», *բնից ընկած ծտի պես* «խեղճացած, կուչ եկած», *ցանցն ընկած ձկան պես* «խեղճացած, կծկված» և այլն:

Գ. Պարձվածաբանական կաղապարների արդյունավետությունը:

Վերևում արդեն խոսվել է *ինչպես + կենդանու անուն + տեղի պարագա* կաղապարի մասին, որի դարձվածակազմական արդյունավետությունը բավականին մեծ է իսպաներենում և հայերենում: Նման արդյունավետության պատճառն այն է, որ երկու լեզուներում էլ *ինչպես + կենդանու անվանում + տեղի պարագա* կաղապարից կարող է սկիզբ առնել բազմաթիվ դարձվածքների՝ կախված այս կամ այն կենդանուն վերագրվող հատկանիշից և համատեքստից: Ամեն դեպքում՝ ակնհայտ է, որ այս կաղապարը ոչ այլ ինչ է, քան *համեմատություն* տարատեսակներից մեկը:

Իսպանագիտական աղբյուրներում դարձվածակազմական կաղապարների հարցն առանձին քննության առարկա չի դարձել, սակայն հետազոտողների ուշադրությունը գրավել է մեկ կաղապար, որն օժտված է բացառիկ արդյունավետությամբ: Խոսքը վերաբերում է *hecho* «դարձած, կտրած» հարակատար դերբայով կազմված կաղապարին:

Ընդհանրապես, տարածված է այն կարծիքը, որ *hecho* «դարձած, կտրած» (կամ՝ *estar hecho* - դարձած լինել, կտրել) հարակատար դերբայով կազմված դարձվածակազմական կաղապարը բնորոշ է բացառապես իսպաներենին և չի հանդիպում մյուս ռոմանական լեզուներում²⁷: Ինչպես ընդգծում է

²⁷ Н. Н. Курчаткина, А. В. Супрун, Фразеология испанского языка, Москва, 1981, 73:

Խուլիո Կասարեսը, հիշյալ կադապարն աչքի է ընկնում կառուցվածքի, իմաստի և գործառության ինքնատիպությամբ:

Կառուցվածքային առանձնահատկություններից մեկն այն է, որ *hecho/a* - (*estar hecho/a*) տարրը պարտադիր կարգով հանդես է գալիս դարձվածքի սկզբում՝ նախադաս դիրքում, ինչպես օրինակ՝ *hecho una sopa* «սաստիկ թրջված, ջուր դարձած», *hecho una bacalada* «նիհարած, չոփ դարձած» և այլն: Միաժամանակ, հարկ է նկատել, որ չնայած *hecho/a* «դարձած» բառը *hacer* «անել» բայի հարակատար դերբայն է, այդուհանդերձ, դարձվածքներում այն չի կարող փոխարինվել *hacer* - «անել» բայի խոնարհված տարբերակներով: Այս առումով, իրոք, *hecho* տարրով կազմված դարձվածքների կառուցվածքը աչքի է ընկնում մեծ կայունությամբ:

Բազմաթիվ դեպքերում *hecho* «եղած, դարձած» հարակատար դերբայով կազմված դարձվածքներն ունեն իրենց համեմատական զուգահեռ տարբերակները, ինչպես օրինակ՝ *estar como una criba = hecho una criba* - «պատառոտված, քրքրված լինել», *como una sopa = hecho una sopa* - «սաստիկ թրջված լինել» և այլն: Այս զուգահեռների հիման վրա հետազոտողները *hecho* հարակատար դերբայով կազմված դարձվածքները համարում են համեմատական: Սակայն, Խուլիո Կասարեսի կարծիքով, «Այդ դարձվածքները պարունակում են ավելին, քան սովորական համեմատությունը: Մի բան է նման լինել մի բանի, այլ բան է վերածվել այդ բանի»²⁸:

Իսպաներեն *hecho* հարակատար դերբային հայերենում համապատասխանում են *կտրած* և *դարձած* զուգահեռները, որոնք նույնպես օժտված են դարձվածակազմական մեծ ար-

²⁸ J. Casares, նշվ. աշխ., էջ 192:

դյունավետությամբ: Սակայն, ի տարբերություն իսպաներենի, հայերեն *կտրել* բայը հանդես է գալիս նաև խոնարհված տարբերակներով, ինչպես օրինակ՝ *լեղին ջուր կտրեց* «վախենալ, սարսափել», *սոյուն զտրեց* «քաջանալ, անվախանալ» և այլն: Այս կառուցվածքները կարող են փոխարինվել հարակատար դերբայով կազմված զուգահեռներով՝ *լեղին ջուր կտրած*՝ «վախեցած, սարսափած», *սոյուն զտրած* «քաջացած, անվախացած» և այլն:

Որքա՞ն է *hecho* հարակատար դերբայի դարձվածակազմական արդյունավետությունը կենդանու անուն պարունակող դարձվածքներում:

Իսպաներեն շարքերում ներկայացված է ավելի քան երեք տասնյակ դարձվածք, որոնք կազմված են *hecho* և *estar hecho* զուգահեռ տարբերակներով: Հաշվի առնելով այդ դարձվածքների կարևորությունը հայերենի հետ համեմատության տեսանկյունից՝ ստորև նշվում է դրանց ամբողջական ցանկը:

1. *Hecho un burro* - «ապուշ կտրած, էշացած»,
2. *Hecho un buey* - 1. «գեր, դանդաղաշարժ, եգ կտրած»,
2. «բութ, բթամիտ, տխմար»,
3. *Hecho un camello* - 1. «շմած, ապուշ կտրած», 2. «դանդաղաշարժ, ապաշնորհ, անճարակ»,
4. *Hecho un paleta* - «բոխ, անտաշ մարդ»,
5. *Hecho una víbora* - «կատաղած, մոլեգնած»,
6. *Hecho una hiena* - «կատաղած, մոլեգնած»,
7. *Hecho una pantera* - «կատաղած, մոլեգնած»,
8. *Quedarse uno hecho un mono* - «ամոթից՝ անհարմարությունից գլուխը կորցնել, շփոթվել»,
9. *Hecho un oso* - «անհաղորդ, մենակյաց, մարդախույս»,

10. *Está hecho un perro* - «ամեն քոռ կռպէկի համար սակարկում է»,
11. *Hecho un besugo* - «սառած, ցրտից կուչ եկած»,
12. *Hecho un salmón* - «կարմրած, կարմիր կտրած»,
13. *Estar hecho un puerco* - 1. «կեղտոտ, զզվելի, թափթփված լինել», 2. «խոզի պէս գեր լինել, խոզ կտրել», 3. «բռի, անտաշ լինել»,
14. *Quedar hecho un puerco* - «երախտամոռ, անշնորհակալ լինել»,
15. *Hecho un cebón* - 1. «կեղտոտ, փնթի, խոզ», 2. «գեր, ճարպոտ, խոզ կտրած»,
16. *Hecho un cerdo* - 1. «կեղտոտ, փնթի», 2. «խոզի պէս՝ ինքն իր համար ապրող», 3. «գեր, ճարպոտ, խոզ կտրած»,
17. *Hecho un gocho* - 1. «խոզ կտրած, զիրացած», 2. «կեղտոտ, խոզ դարձած», 3. «խոզ, բռի, անկիրթ»,
18. *Hecho un gorrino* - 1. «կեղտոտ, զզվելի, խոզ դարձած», 2. «լքված, թողնված», 3. «գեր, լցված, խոզ կտրած»,
19. *Hecho un guarro* - 1. «բռի անկիրթ, խոզ», 2. «գեր, ճարպոտ, խոզ կտրած»,
20. *Ponerse hecho un lechon* - «կեղտոտվել, խոզ դառնալ»,
21. *Hecho un marrano* - 1. «խոզ դարձած, կեղտի մեջ կորած», 2. «զիրացած, խոզ կտրած»,
22. *Quedar hecho un marrano* - «խոզի պէս վարվել, ապերախտ լինել»,
23. *Hecho una rana* - «մինչև ոսկերները թրջված»,
24. *Hecho un beccero* - 1. «գեր, ճարպոտ», 2. «բուլթ, բթամիտ, տխմար»,
25. *Estar hecho un topo* - «կարճատես, կարճամիտ լինել»,

26. *Hecho un toro* - 1. «կատաղած, ցուլ կտրած» 2. «գեր, տոգած»,
27. *Hecho unos zorros* - 1. «հոգնած, ուժասպառ», 2. «ծածված, ջարդված»,
28. *Estar uno hecho un zorro* - «քունը տանել, քնկոտ լինել»,
29. *Estar hecho uno como pollo de agua* - «սաստիկ թրջվել»,
30. *Hecho un pollo* - 1. «սաստիկ թրջված, թրջված հավ», 2. «տհաս, խակ»,
31. *Hecho un ganso* - «հիմարացած, շշմած, ապուշ կտրած»,
32. *Hecho un pato* - «սաստիկ թրջված, թրջված հավ»,
33. *Estar hecho un pavo* - «գիրացած, տոգած լինել»,
34. *Estar hecho un tórtolo* - «թունդ սիրահարվել»:

Այս օրինակները քաղված են իսպաներենի դարձվածաբանական բառարաններից և հաստատում են *hecho* հարակատար դերբայի դարձվածակազմական բացառիկ արդյունավետությունը, որպիսիք, իրոք, չենք գտնում մյուս ռոմանական լեզուներում: Սակայն երբ այս կաղապարը համեմատվում է հայերեն նյութի հետ, նկատելի է, որ հայերենը ոչ միայն ունի նմանօրինակ կազմություններ, այլև աչքի է ընկնում արտակարգ ճկունությամբ և դարձվածակազմական միջոցների հարստությամբ:

Բանն այն է, որ իսպաներեն *hecho* «դարձած» հարակատար դերբայի դիմաց հայերն դարձվածքներում առկա է *դարձած* բացարձակ զուգահեռը՝ *առյուծ դարձած, կատու դարձած* և այլն, սակայն դրան զուգահեռ մեծ գործածականություն ունի *կտրած* տարբերակը՝ *առյուծ կտրած, վագր կտրած* և այլն: Այլ կերպ ասած, իսպաներեն դարձվածակազմական մեկ կաղապարի դիմաց հայերենն ունի երկուսը:

Ի տարբերություն իսպաներենի՝ հայերենում *կտրել* բառն արդեն իսկ օժտված է որոշ արտահայտչականությամբ և փոխաբերական իմաստով նշանակում է «դառնալ»: Սրանից բխում է, որ հայերենում *կտրել* բայով կազմված դարձվածքները աչքի են ընկնում ավելի մեծ արտահայտչականությամբ, քան իսպաներենում՝ *hecho* հարակատար դերբայով կառույցները:

Մյուս էական տարբերությունն այն է, որ հայերեն դարձվածքներում *կտրել* բայը կարող է հանդես գալ խոնարհված տարբերակներով՝ ներառելով բայի թվի, դեմքի և ժամանակի կարգի հետ կապված առանձնահատկությունները: Այսպես, հայերեն կարելի է ասել *առյուծ կտրած*, *առյուծ է կտրել*, *առյուծ է կտրելու*, *առյուծ էր կտրել*, *առյուծ ենք կտրել* և այլն, մինչդեռ իսպաներենում կարող է գործել միայն *hecho un león* «առյուծ կտրած» կաղապարը:

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև հայերեն դարձվածքներում *դառնալ/դարձած* և *կտրել/կտրած* հոմանիշների գործածության իմաստային նրբերանգները, որոնցից գուրկ է իսպաներենը: Հայերեն դարձվածքներում *կտրել* բայը գործածվում է «դառնալ» իմաստով, որից էլ առաջանում են դարձվածային գուգաձևությունները, ինչպես օրինակ՝ *կատու կտրել* և *կատու դառնալ*, *խոզ կտրել* և *խոզ դառնալ* և այլն:

Հայերեն *դառնալ* բայը չեզոք է և որպես այդպիսին հակադրվում է *դարձնել* անցողականին՝ *կատու դառնալ* - «խեղճանալ» - *կատու դարձնել* - «խեղճացնել»: Այս երկու տարբերակներն էլ հավասարապես գործածական են դարձվածքներում:

Ինչ վերաբերում է *կտրել* բային, ապա այն իր ուղղակի իմաստով անցողական է և պահանջում է ուղիղ խնդիր՝ *ինչ-*

որ քան *կտրել*, սակայն ձեռք բերելով «դառնալ» իմաստը, դարձել է չեզոք, ուստի դարձվածքներում դրա գործածությունը շատ ավելի սահմանափակ է, քան *դառնալ* բայինը, քանի որ չի կարելի խոսել *կտրել* և *կտրեցնել* զուգահեռ ձևերի մասին, մինչդեռ *դառնալ-դարձնել* հակադրությունը շատ սովորական է:

Եթե այս վերլուծությունների ոգով անցկացվի համեմատության փորձ իսպաներեն *hecho* հարակատար դերբայով կազմած դարձվածքների և հայերեն համապատասխան ձևերի միջև, ապա սկնհայտ կդառնա, որ վերը բերված իսպաներեն երեք տասնյակ դարձվածքների դիմաց հայերենը կարող է ներկայացնել հարյուրավոր օրինակներ:

Ասենք նաև, որ հայերեն *կտրել* բայը «դառնալ» իմաստով առավելապես գործածվում է այն կենդանիների անվանումների հետ, որոնց իմաստները, այսինքն՝ կենդանիներին վերագրվող հատկությունները, առավել ցայտուն են և ընդգծված: Այսպես, կարելի է ասել *առյուծ կտրել* կամ *կատու կտրել*, սակայն չի կարելի ասել *ծիծեռնակ կտրել* կամ *կով կտրել*: Սա կապված է, ինչպես ասվեց, *կտրել* բառի արտահայտչականության հետ, որից զուրկ է *դառնալ* հոմանիշը, որի իմաստը համեմատաբար չեզոք է:

Ասվածից կարելի է գալ այն եզրակացության, որ հայերենում *կտրել* բայով կազմված դարձվածքներն օժտված են ավելի մեծ արտահայտչականությամբ, քան *դառնալ* հոմանիշով կազմվածները: Ըստ էության, *դառնալ* բայը կարող է գործածվել ցանկացած կենդանու անվան հետ՝ անկախ վերջինիս իմաստի, մինչդեռ *կտրել* բայը կարող է գործածվել միայն ընդգծված հատկություն ցույց տվող անվանումների հետ:

Իսպաներեն դարձվածքներում ունենք բոլորովին ուրիշ պատկեր: Ներկայացված երեք տասնյակ օրինակներից 10-ը կազմված են *puerco* - «խոզ» բառի զանազան հոմանիշներով: Սակայն խոզ կենդանին օժտված է մի շարք ընդգծված հատկություններով՝ «զեր», «կեղտոտ», «ապերախտ» և այլն: Իսպաներեն դարձվածքներում այս հատկություններն իրարից տարբերվում են ոչ թե կենդանիների անվանումների արտահայտած իմաստների, այլ դարձվածակազմական կաղապարների միջոցով: Այս տեսակետից հատկանշական են հետևյալ օրինակները.

1. *Estar hecho un puerco* - (բառացի՝ «խոզ դարձած լինել») «կեղտոտ, զզվելի, թափթփված լինել», 2. «խոզի պես զեր լինել, խոզ կտրել», 3. «բռի անտաշ լինել»,
2. *Quedar hecho un puerco* - (բառացի՝ «խոզ դարձած մնալ») «երախտամոռ, անշնորհակալ լինել,
3. *Hecho un marrano* - (բառացի՝ «խոզ դարձած») «խոզ դարձած, կեղտի մեջ կորած», 2. «զիրացած, խոզ կտրած»,
4. *Quedar hecho un marrano* - (բառացի՝ «խոզ դարձած մնալ») «խոզի պես վարվել, ապերախտ լինել»:

Առաջին երկու դարձվածքներում ունենք միևնույն *hecho un puerco* «խոզ դարձած» կաղապարը, սակայն իմաստային առումով երկու դարձվածքների միջև կան էական տարբերություններ: Պատճառն այն է, որ առաջին դարձվածքում *hecho un puerco* «խոզ դարձած» կաղապարից առաջ դրվել է *estar* «լինել», իսկ երկրորդ դարձվածքում՝ *quedar* «մնալ» բայը:

Ինչպես տեսնում ենք, երկու դարձվածքների միջև իմաստային տարբերությունները գալիս են ոչ թե *hecho un puerco* «խոզ դարձած» կաղապարից, որը երկու դարձվածքներում էլ

նույնությամբ կրկնվում է, այլ *estar* «լինել» և *quedar* «մնալ» բայերից, որոնք պետք է որ ոչ մի կապ չունենային տվյալ դարձվածքների իմաստների հետ:

Հաջորդ երկու օրինակներում կրկնվում է նույն պատկերը՝ *hecho un marrano* 1. «խոզ դարձած, կեղտի մեջ կորած», 2. «գիրացած, խոզ կտրած» դարձվածային իմաստները տարբերվում են *quedar hecho un marrano* «խոզի պես վարվել, ապերախտ լինել» դարձվածքի իմաստից լոկ այն պատճառով, որ երկրորդ օրինակում *hecho un marrano* «խոզ դարձած» կաղապարից առաջ դրված է *quedar* «մնալ» բայը:

Ճիշտ է, *estar hecho un puerco* և *quedar hecho un marrano* դարձվածքներում *estar* «լինել» և *quedar* «մնալ» բայերն իրենց բուն իմաստներով որևէ դեր չեն խաղում, սակայն իրենց ներկայությամբ օգնում են հիշյալ դարձվածքների դարձվածային իմաստի ձևավորմանը: Փաստորեն տվյալ դարձվածքներում *estar* «լինել» և *quedar* «մնալ» բառերը ներկա են միայն ձևակառույցին, չեն արտահայտում որևէ իմաստ, սակայն դա չի խանգարում, որ տվյալ կաղապարում բառային ոչ մի իմաստ չարտահայտող բառերը ունենան *իմաստատարներիչ* գործառություն, այսինքն՝ մի դարձվածքի իմաստը տարբեր է մյուսից:

Այս երևույթն իսպաներենի դարձվածակազմության կարևորագույն առանձնահատկություններից մեկն է, որն առավել ցայտունորեն դրսևորվում է դարձվածքների կազմում բառերի քերականական կարգերի գործառության փոփոխության մեջ, որի մասին կխոսվի հաջորդ գլխում:

Չորրորդ գլուխ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՄՊԱՆԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ինչպես ասվել է, դարձվածքի բնորոշ հատկանիշներից մեկը նրա բաղադրիչների բուն՝ բառային իմաստների միաձուլումն է դարձվածքի ընդհանուր իմաստի մեջ: Այլ կերպ ասած՝ բառերի կառուցվածքը ձուլվում է դարձվածքի ընդհանուր կառուցվածքին, իսկ նրանց բառային իմաստը՝ դարձվածքի ընդհանուր իմաստին:

Սակայն բառերն օժտված են որոշակի քերականական կարգերով, որոնցով հարաբերվում են միմյանց հետ: Հաճախ բառերը դարձվածք են ներթափանցում իրենց քերականական կարգերով հանդերձ, որոնց շնորհիվ էլ ձևավորվում է դարձվածքի ձևաիմաստային ամբողջությունը: Եվ եթե բառի կառուցվածքը ձուլվում է դարձվածքի կառուցվածքին, իսկ բառիմաստը՝ դարձվածքի ընդհանուր իմաստին, ապա նույնը տեղի է ունենում նաև քերականական կարգերի հետ, այսինքն՝ դարձվածքի կազմում բառի այս կամ այն քերականական կարգը ապահովում է կապը դարձվածքի բաղադրիչների միջև և ծառայում վերաիմաստավորված կայուն կապակցության ձևավորմանը:

Այսպիսով՝ կարելի է նկատել, որ որևէ դարձվածքի կառուցվածքային և իմաստային ամբողջականությունը գոյանում է նրա կազմի մեջ մտնող բաղադրիչների ամբողջականությունից:

Հաճախ դարձվածքի կազմում բառերի իմաստների մթագնումը զուգորդվում է նաև նրանց *քերականական կարգերի մթագնմամբ* կամ *ձևականացմամբ*: Ճիշտ է, քերականական կարգերն ապահովում են դարձվածքի բաղադրիչների միջև քերականական կապը՝ շարույթի ձևավորումը, սակայն առանձին դեպքերում դրանք կարող են զրկվել այդ գործառությունից և ստանալ բոլորովին այլ գործառույթ: Խոսքը վերաբերում է դարձվածքի ընդհանուր *իմաստի փոփոխությանը*, որը կարող է տեղի ունենալ ի հաշիվ այս կամ այն բառի քերականական կարգի մթագնման: Նման դեպքերում քերականական կարգերի զուտ քերականական բովանդակությունը դառնում է խորհրդանշական:

Խոսքի մասերի քերականական կարգերը բազմաթիվ են ու բազմազան, և անհնար է մեկ աշխատության սահմաններում վերլուծել բոլոր երևույթներն ու դրանց առանձնահատկությունները, ուստի տվյալ դեպքում անդրադառնանք միայն գոյականի քերականական կարգերի մթագնմանը:

Մի կողմ թողնելով գոյականի հոլովի կարգը, քանի որ իսպաներենը չունի հոլովական համակարգ, կարող ենք խոսել դարձվածքների կազմում գոյականի թվի, սեռի, որոշյալի և անորոշի առման քերականական կարգերի մթագնման կամ ձևականացման առանձնահատկությունների մասին: Ըստ այդմ՝ դարձվածքների կազմում գոյականի քերականական կարգերի ձևականացման դրսևորումները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

- ❖ *Թվի քերականական կարգի ձևականացում*
- ❖ *Սեռի քերականական կարգի ձևականացում*
- ❖ *Որոշյալի և անորոշի առման քերականական կարգի ձևականացում:*

Հարկ է նշել նաև, որ դարձվածքների կազմում գոյականի քերականական կարգերի մթագնումը կամ ձևականացումը չի ենթարկվում որոշակի օրինաչափությունների, և շատ հաճախ նկատում ենք, որ միևնույն դարձվածքում միաժամանակ ձևականանում են տարբեր քերականական կարգեր: Այլ կերպ ասած՝ թվի քերականական կարգի ձևականացումը զուգորդվում է սեռի կարգի ձևականացման հետ վերջինս՝ որոշյալի և անորոշի առման կարգի հետ և այլն:

Այսպիսով, դարձվածքի կազմում գոյականի քերականական կարգերի՝ վերը նշված երեք հիմնական տարբերակները կարող են ստորաբաժանվել երեք ենթախմբի.

- ❖ *Թվի և սեռի քերականական կարգերի զուգահեռ ձևականացում,*
- ❖ *Թվի և որոշյալի և անորոշի առման կարգերի զուգահեռ ձևականացում,*
- ❖ *Սեռի և որոշյալի և անորոշի առման կարգերի զուգահեռ ձևականացում:*

Որոշ դեպքերում միևնույն դարձվածքն ունի երկու զուգահեռ տարբերակներ՝ արականով-իգականով, կամ՝ որոշյալ-անորոշ առումներով: Նման դարձվածքները համեմատաբար սակավաթիվ են, և դրանց կազմում գոյականի քերականական կարգերի մթագնումը չի հանգեցնում դարձվածքի իմաստի փոփոխության: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է դարձվածային զուգաձևությանը: Առավել ուշագրավ են այն տարբերակները, որոնցում գոյականի քերականական կարգերը, թեև ձևական են, սակայն դարձվածքի համար ունեն *իմաստատարբերիչ* նշանակություն:

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես *zorro/a* - աղվես բառով կազմված դարձվածքները,

որոնք աչքի են ընկնում քերականական կարգերի մթագնման տարբերակների բազմազանությամբ և հնարավորություն են տալիս հանգելու որոշակի եզրակացությունների: Մյուս կողմից՝ հաշվի առնելով *zorro/a* - աղվես բառի իմաստային և դարձվածակազմական առանձնահատկություններն ու ելնելով նյութի ամբողջականության շահերից, նպատակահարմար է դարձվածաբանական քննությունը զուգորդել բառագիտական վերլուծություններով:

1. *Zorro/a* - աղվես

Առհասարակ, *աղվես* կենդանունը լայնորեն տարածված է տարբեր լեզուների դարձվածքներում, առաձներում և ասացվածքներում: Առավել հաճախ շրջանառության մեջ է մտնում աղվեսի հիմնական հատկությունը՝ խորամանկությունը, որը վերագրվում է մարդկանց: Բացի դրանից՝ *աղվես* բառը ծնունդ է տալիս բազմաթիվ բարդությունների, ինչպես օրինակ՝ *աղվեսություն*, *աղվեսային*, *աղվեսորեն* և այլն, որոնք նույնպես նշում են այդ կենդանու խորամանկությունը:

Որպես կանոն, «աղվես» իմաստը նշանակող բառերը ենթարկվում են տաբուի՝ բառարգելման, որն էլ իր հերթին հանգեցնում է հոմանիշ տարբերակների առատության և բազմազանության: Նույնը տեղի է ունեցել նաև ռոմանական լեզուներում: Լատիներենն ուներ *vulpes* - աղվես բառը, որը գրեթե նույնությամբ պահպանվել է իտալերենում՝ *volpe*, սակայն որոշ ռոմանական լեզուներ ստեղծել են սեփական զուգահեռ ձևերը, ինչպես օրինակ, իսպաներեն *zorro*, *raposo*, ֆրանսերեն - *renard* և այլն:

Լատինական *vulpes*-ի իսպաներեն ժառանգորդներն են *vulpécula* - աղվես, *vulpeja* - աղվես և *vulpino/a* - աղվեսային բառերը, որոնք համեմատաբար սահմանափակ գործածություն ունեն:

Ավանդաբար իսպաներեն բառարաններում, ի տարբերություն կենդանու անուններ նշանակող այլ բառերի, *zorro* - աղվես և *zorra* - էգ աղվես բառերը դրված են տարբեր բառահոդվածների տակ: Դա պայմանավորված է նրանով, որ այդ երկու ձևերից յուրաքանչյուրն ունի բառակազմական իր ուրույն առանձնահատկությունները: Որոշ չափով տարբեր են նաև դրանցով կազմված դարձվածքների կառուցվածքներն ու իմաստները:

Այդուհանդերձ, իսպաներենի Clave բառարանում (2000 թ.) *zorro* - *zorra* տարբերակները գետեղված են մեկ բառահոդվածում: Ընդ որում՝ *zorro/a* բառը դասակարգված է որպես ածական/գոյական, որի առաջին իմաստն է «խորամանկ, հաշվենկատ»:

Իսպաներենում *zorro* - աղվես բառը, ինչպես ենթադրվում է, ծագում է հին պորտուգալերեն *zorrar* - քարշ տալ բայից²⁹: Այն ունի նաև իգական տարբերակը՝ *zorra*, որը, ինչպես կտեսնենք, նույնպես զգալի չափով ներկայացված է դարձվածքներում:

Իսպաներեն բացատրական բառարանները տալիս են *zorro* - աղվես բառի հետևյալ իմաստները. 1. աղվես կենդանի, 2. աղվեսի, աղվեսի մորթի, 3. կեղծող, ձևացնող, աշխատանքից խուսափող մարդ, 4. խորամանկ մարդ, 5. փռշի թափ տալու խոզանակ:

Մի փոքր այլ է *zorra* - էգ աղվես բառի իմաստային դաշտը, 1. էգ աղվես, 2. «խորամանկ, հաշվենկատ մարդ, 3. հարբածություն, հարբեցողություն, 4. պոռնիկ, մարմնավաճառ»³⁰:

²⁹ CLAVE, Diccionario de uso del español actual, Madrid, 2000, 1888:

³⁰ CLAVE, Diccionario de uso del español actual, Madrid, 2000, 1888:

Իսպաներենում *zorro* - աղվես բառը, իր ուղղակի և փոխաբերական իմաստներով հանդերձ, աչքի է ընկնում բառակազմական զգալի արդյունավետությամբ: Այդ են վկայում, մասնավորապես, *zorrear* - խորամանկել, աղվեսություն անել, *zorrería* - խորամանկություն, աղվեսություն, *zorruno/a* - աղվեսի, աղվեսային և այլ բարդությունները:

Ի տարբերություն այս երկու ձևերի՝ *raposo* (իզ. *raposa*) հոմանիշը չունի իմաստների բազմազանություն և, ըստ էության, միայն կրկնում է նախորդների առաջին երկու իմաստները, բացի այդ, հազվադեպ է գործածվում դարձվածքներում և ասացվածքներում: Այդ իսկ պատճառով, նպատակահարմար է քննության առնել միայն *zorro/a* բառով կազմված դարձվածքները:

Օրինակ՝

Estar hecho unos zorros - Բառացի նշանակում է «աղվեսներ դարձած լինել», բուն իմաստն է՝ «չափազանց հոգնած կամ ուժասպառ լինել»:

Այս դարձվածքում ուշագրավ է *zorro* - աղվես բառի հոգնակի թիվը, որի զուտ քանակական բովանդակությունը մթազնված է: Այլ կերպ ասած՝ տվյալ դարձվածքում *unos zorros* բառը չի ընկալվում իբրև «ինչ-որ աղվեսներ», այլ արտահայտում է «աղվես» ընդհանուր իմաստը: Այդուհանդերձ, այս դարձվածքում *zorro* բառի հոգնակի թիվը խորհրդանշական չէ, այլ ունի *իմաստազատիչ* գործառություն, ինչպես որ երևում է հաջորդ օրինակից:

Մեկ այլ օրինակ՝

Estar hecho un zorro - Ըստ էության, կրկնում է նախորդ դարձվածքի կառուցվածքը, այն բացառությամբ, որ *zorro* բառը

հանդես է գալիս եզակի թվով: Բուն իմաստով նշանակում է - քունը տանել, չկարողանալ արթնանալ:

Ակնհայտ է, որ *zorro* - «աղվես» բառի թիվն իրարից տարանջատում է երկու նույնական դարձվածքների՝ թվական գաղափարի հետ ոչ մի կապ չունեցող իմաստներ: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ, ինչպես ասվել է, դարձվածքների բաղադրիչ կազմող բառերը, ինչպես նաև վերջիններից քերականական կարգերը, կորցնում են իրենց բուն իմաստները և ձուլվում դարձվածքի ընդհանուր տրամաբանությանը:

Այսպիսով՝ երկու դարձվածքների համեմատությունը ցույց է տալիս, որ թեև դրանցից առաջինում *zorro* - աղվես բառը գործածվում է հոգնակի թվով, իսկ երկրորդում՝ եզակի, սակայն այդ երկու տարբերակները քանակական առումով միմյանց չեն հակադրվում:

Իսկ այժմ անցնենք *zorro* - աղվես բառի իզականով կազմված դարձվածքների քննությանը:

Իսկ այս օրինակներում՝

- *A la zorra, candilazo*. Բառացի նշանակում է «էգ աղվեսին՝ լապտերով (ճրագով)», բուն իմաստն է՝ «խորամանկությամբ խորամանկին գերազանցել»:

- *No hay zorra con dos robos*. - Բառացի իմաստն է «Երկու պոչով էգ աղվես չի լինում», բուն իմաստով նշանակում է «գոյություն չունեցող կամ անհնարին բան»:

- *No ser la primera zorra que alguien ha desollado*. - Բառացի նշանակում է «առաջին էգ աղվեսը չէ, որ ինչ-որ մեկը քերթել է», իսկական իմաստն է «փորձված լինել, որևէ գործում հմտություն ունենալ»:

- *Pillar alguien una zorra*. - Բառացի նշանակում է «էգ աղվեսին կողոպտել», բուն իմաստն է «հարբել, կոնծել»:

- *No tener ni zorra.*- Բառացի նշանակում է «նույնիսկ էգ աղվես չունենալ», բուն իմաստն է «ոչինչ չունենալ»:

Բոլոր այս դարձվածքներում մենք ունենք *zorro* - աղվես բառի իգական սեռը՝ *zorra* - էգ աղվես: Մակայն դրանից չի բխում, թե տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հենց էգ աղվեսին: Այստեղ գոյականի սեռի կարգի տեսանկյունից հակադրություն չկա, ինչպես որ չկար նաև թվի կարգի պարագայում:

Ճիշտ է, դարձվածքների մի մասում *zorro* - աղվես բառը գործածվում է արական սեռով, իսկ մյուսներում՝ իգական, այդուհանդերձ սեռի ցուցիչի (-a վերջածանցի) առկայությունն ունի նաև այլ բացատրություն: Բանն այն է, որ արդի իսպաներենում, մասնավորապես խոսակցական լեզվում, իգական սեռին պատկանող *zorra* - էգ աղվես բառը ձեռք է բերել «աղվես» ընդհանուր իմաստը՝ առանց սեռի տարբերակման, որի հետևանքով արական և իգական ձևերի միջև տարբերությունը վերացել է: Միննույն ժամանակ, գրական իսպաներենում *zorra* բառը շարունակում է պահպանել իր հիմնական՝ «էգ աղվես» իմաստը:

Սրանից բխում է այն եզրակացությունը, որ դարձվածքի կազմում բառի իմաստի և քերականական կարգերի մթագնման գործընթացը զուգորդվել է բառիմաստի փոփոխությամբ, այսինքն՝ *zorra* - էգ աղվես բառը սկսել է արտահայտել «աղվես» իմաստը՝ անկախ դարձվածքի կազմում հանդես գալու հանգամանքից:

Մեկ այլ կարևոր հարց է:

Խնդրի առարկա *zorro* - աղվես արական սեռի գոյականը վերածվում է բայի՝ ստանալով *zorrer* կառուցվածքը: Այս դեպքում իմաստային դաշտը գրեթե չի փոխվում, քանի որ բայա-

կան ձևը արտահայտում է երկու հիմնական իմաստ՝ «խորամանկել, աղվեսություն անել» (անանցողական) և «խոզանակով թափ տալ» (անցողական):

Այլ է պատկերը *zorra* - էգ աղվես բառի բայացման պարագայում: Իսպաներենում, ինչպես ասվել է, *zorra* - էգ աղվես բառն ունի նաև «պոռնիկ, մարմնավաճառ» իմաստը, որն բխում է բառի իգական սեռից: Վերջինիս բայական ձևը նույնպես լինում է *zorrear*, սակայն բոլորովին այլ իմաստով: Եթե խոսքը վերաբերում է կնոջը, ապա *zorrear* նշանակում է «պոռնկություն անել, մարմնավաճառությամբ զբաղվել», իսկ եթե տղամարդուն, ապա՝ «շնանալ, հասարակաց տներ այցելել»:

Այսպիսով, իսպաներենում *zorro* - աղվես և *zorra* - 1. էգ աղվես 2. պոռնիկ, մարմնավաճառ գոյականների բայացումը կատարվել է նույն եղանակով և հանգեցրել միևնույն բայական ձևին՝ *zorrear*, այսինքն՝ տեղի է ունեցել երկու տարբեր իմաստների բաղարկություն՝ կոնտամինացիա:

Խառնաշփոթից խուսափելու նպատակով, իսպաներեն բառարաններում այդ երկու ձևերը ներկայացված են իբրև տարբեր բառահոդվածներ՝ *zorrear* 1 և *zorrear* 2: Առաջինի դիմաց նշված են «խորամանկել, աղվեսություն անել» 2. «խոզանակով թափ տալ» իմաստները, իսկ երկրորդի դիմաց՝ «պոռնկություն անել, մարմնավաճառությամբ զբաղվել», 3. «շնանալ, հասարակաց տներ այցելել» նշանակումները:

Հատկանշական է, որ իսպաներեն *zorrear* - պոռնկություն անել, մարմնավաճառությամբ զբաղվել, 2. շնանալ, հասարակաց տներ այցելել - բային հայերենում համապատասխանում է *շնանալ* բառը, որը կարող է վերաբերել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց: Դարձվածքի մակարդակով իսպա-

ներեն *zorrear* բայի դիմաց հայերենն ունի *շնություն անել* ձևը: Ուշագրավ է նաև այն, որ հայերենում *շնություն* - վատ արարք բառը ունի նաև «պոռնկություն, անառակություն» իմաստը, մինչդեռ իսպաներենում *zorreria* բառը արտահայտում է միայն «խորամանկություն, աղվեսություն» իմաստը:

Հայերենում երբեմն *շուն* կենդանու անվանումը գործածվում է «խորամանկ, փորձված, հաշվենկատ» իմաստներով, ինչպես օրինակ՝ *շատ շունն է* - «շատ խորամանկն է» տարբերակում, որի դիմաց իսպաներենն ունի *es muy zorro* - «շատ աղվեսն է» ձևը:

Իսկ այժմ անդրադառնանք այլ կենդանուններով կազմված դարձվածքների քննությանը:

2. Burro/a - էջ

1. *Como el (un) burro* - իշավարի, էջի պես

2. *Como burros* - խոշոր, գիրուկ, լցված

Առաջին տարբերակը դարձվածային գուգաձևություն է, քանի որ *el burro* և *un burro* ձևերի միջև որոշյալ և անորոշ առումների տարբերությունը չի հանգեցնում դարձվածքի իմաստի փոփոխության: Երկրորդ տարբերակը հակադրվում է առաջինի թվի քերականական կարգով, որը դարձվածքին հաղորդում է նոր իմաստ, որը, սակայն, կապ չունի քանակական գաղափարի հետ:

3. Buey - եգ

1. *Como el (un) buey* - 1. եզան պես, հիմար և հնազանդ, 2. բռի, անտաշ, 3. շատակեր, անկուշտ

2. *Como bueyes* - խոշոր, գիրուկ, լիքը

Կրկնում են նախորդ դարձվածքների կառուցվածքային և իմաստային փոխհարաբերությունները:

4. Caracol - խխունջ

1. *Hacer el caracol* - կաշել, պոկ չգալ, խնդրանքներով զգվեցնել

2. *Hacer caracoles* - ագուցել, կապկպել, հյուսել, այս ու այն կողմ տանել

Ներկայացնում են խառը տիպ. առաջին տարբերակում *el caracol* - խխունջ բառն ունի որոշյալ հոդ և դրված է եզակի թվով, երկրորդը հոգնակի թվով է և չունի որևէ հոդ, ուստի անորոշ է:

5. Gato/a - կատու

1. *A gatas* - չորեքթաթ

2. *A lo gato* - թաքուն, գաղտնի, աննկատելիորեն

Երկու դարձվածքներն էլ արտահայտում են «ձև, եղանակ» ընդհանուր իմաստը և համապատասխանում են հայերեն *կատվի պես, կատվավարի* կառուցվածքին: Այստեղ «ձև, եղանակ» իմաստն արտահայտված է *a* նախդիրի միջոցով, որն առկա է երկու դարձվածքներում: Իմաստային տարբերության հիմքում ընկած են սեռի և թվի քերականական կարգերը: Առաջին դարձվածքում առկա է *a gatas* կազմությունը, որում *gato* - կատու բառը դրված է հոգնակի թվով և անորոշ է, մինչդեռ երկրորդում *a lo* կապակցությունում առկա է չեզոք սեռ և եզակի թիվ: Այսպիսով, չնայած երկու դարձվածքներն էլ կազմված են նույն տարրերից, այդուհանդերձ իմաստային առումով էապես տարբերվում են միմյանցից՝ ի հաշիվ քերականական կարգերի ձևականացման:

6. Mono/a - կապիկ

1. *hacer una mona* - մտքին դնել,

2. *Hacer monos* - նկարել,

3. *Como el (un) mono* - կապկոդ, նմանակոդ,

4. *Como los monos* - կապիկի պես, ծամածռություններ անող:

Առաջին երկուսը ներկայացնում են քերականական կարգերի ձևականացման խառը տիպ: Դարձվածքների իմաստների տարբերակման համար հիմք են հանդիսանում միաժամանակ քերականական երկու կարգեր՝ սեռը և թիվը:

Երկրորդ զույգի առաջին տարբերակում առկա դարձվածային իմաստը չի փոխվում: Երկրորդ տարբերակը հակադրվում է առաջինին՝ թվի քերականական կարգով, որը հանգեցնում է դարձվածքի իմաստի փոփոխության:

7. Mulo/a - ջորի

1. *Como una mula* - հիմար, բթամիտ,

2. *Como un mulo* - 1.անկիրթ, անտաշ, բռի 2.եզան պես աշխատող:

Նախորդ մի քանի օրինակների նման, դարձվածքի իմաստի փոփոխությունը հենվում է սեռի քերականական կարգի ձևականացման վրա: Ուշագրավ է, որ իսպաներենում, ի տարբերություն հայերենի, *mulo/a* - ջորի բառն ունի երկու սեռ՝ արական և իգական:

8. Toro - ցուլ

1. *Como un toro* - 1. կատաղած, մոլեգնած 2. բռի, անտաշ, կոպիտ,

2. *Como los toros* - կոպիտ, անքաղաքավարի, բռիորեն:

Նշված կառույցները ներկայացնում են կարգերի ձևականացման խառը տիպ. երկու դարձվածքների իմաստային տարբերությունը հենվում է որոշյալ-անորոշ և եզակի-հոգնակի հակադրության վրա:

9. Pavo/a - հնդուհավ

1. *Como el pavo* - հիմար, բթամիտ,

2. *Como un pavo* - 1.կարմիր, կարմրած, շիկնած 2. գեր, լիքը:

Այս դարձվածքներում մթագնել է որոշյալ և անորոշի առման քերականական կարգը:

10. Mosca - ճանճ

1. *Mosca blanca* - 1. սպիտակ ճանճ, հազվագյուտ՝ արտասովոր բան 2. սպիտակ ագռավ, շրջապատից տարբերվող մարդ,

2. *Moscas blancas* - ձյուն, ձյան փաթիլներ,

3. *Andar uno mosca* - վատ տրամադրություն ունենալ, նեղսրտած լինել,

4. *Andar la mosca* - 1. փող ծախսել, ծախսի տակ ընկնել, 2. առատորեն վարձահատույց լինել, կաշառել,

5. *Como moscas* - չափազանց շատ, շնից շատ,

6. *Como las moscas (una mosca)* - կաշուն, զզվեցնող, տիզ:

Երեք գույգերում քերականական կարգերի ձևականացումը ընթացել է տարբեր ճանապարհներով: Առաջինում ունենք եզակի-հոգնակի հակադրությունը, որն իրարից անջատում է «հազվագյուտ, արտասովոր բան» և «ձյուն, ձյան փաթիլներ» նշանակումները:

Երկրորդ գույգում ձևականացել է որոշյալի և անորոշի քերականական կարգը, ընդ որում, այստեղ էական դեր են խաղում շարահյուսական հարաբերությունները. *andar uno mosca* տարբերակում *mosca* - ճանճ բառն ուղիղ խնդիր է, մինչդեռ *andar la mosca* - փող ծախսել, ծախսի տակ ընկնել կառուցվածքում՝ ենթակա: Այս հանգամանքն ինքնին նպաստում է երկու դարձվածքների իմաստային տարբերությանը:

Երրորդ գույգը նույնպես ներկայացնում է քերականական կարգերի ձևականացման խառը տիպ: Վերջին տարբերակում

առկա է դարձվածային գուգաձևություն, քանի որ *Como las moscas* և *Como una mosca* դարձվածքները, չնայած միմյանցից տարբերվում են թվի և որոշյալի և անորոշի առման քերականական կարգերով, այդուհանդերձ այդ կարգերը չունեն իմաստատարբերիչ գործառություն, և երկու դարձվածքներն էլ արտահայտում են նույն իմաստը: Հատկանշական է, որ *Como moscas* - չափազանց շատ, շնից շատ տարբերակը հակադրվում է նախորդներին երկու տարբեր կարգերով՝ մեկին՝ թվի, իսկ մյուսին՝ որոշյալի և անորոշի առման քերականական կարգով:

Como moscas - *Como una mosca* - (եզակի-հոգնակի հակադրություն),

Como moscas - *Como las moscas* - (որոշյալ-անորոշ հակադրություն):

10. Pulga - լու

1. *Como las pulgas* - տզի պես կաչուն, զզվեցնող,

2. *Como una pulga (como pulgas)* - փոքրիկ, չնչին, աննշան:

Ըստ էության, կրկնվում են վերջին երկու օրինակների կառուցվածքային և իմաստաբանական առանձնահատկությունները: *Como una pulga* և *Como pulgas* կառուցվածքները, թվի քերականական կարգով միմյանց հակադրվելով հանդերձ, արտահայտում են նույն իմաստը, ուստի դարձվածային գուգաձևություններ են: Առաջին տարբերակում դարձվածքի իմաստը փոխվել է՝ ի շնորհիվ որոշյալի և անորոշի քերականական կարգերի ձևականացման:

Այսպիսով, դիտարկված շուրջ երեք տասնյակ օրինակները ցույց են տալիս, որ իսպաներեն դարձվածքներում գոյականի քերականական կարգերի մթագնումը կամ ձևականացումը չի ենթարկվում որևէ օրինաչափության: Ըստ էության, կարելի

է խոսել մի երևույթի մասին, որի դրսևորումները տարերային են. որոշ դեպքերում դարձվածքի կազմում գոյականի քերականական կարգերի ձևականացումը հանգեցնում է դարձվածքի իմաստի փոփոխության, այլ դեպքերում այն չունի իմաստատարբերակիչ գործառնություն:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ հայերենում այդ երևույթները չեն կարող նույնությամբ կրկնվել, քանի որ հայերենը գուրկ է քերականական սեռից: Անդրադառնալով թվի ու որոշյալի և անորոշի քերականական կարգերի ձևականացմանը՝ պետք է նշել, որ կենդանիների անուն պարունակող հայերեն դարձվածքներից ոչ մեկում այդ երևույթները չեն դրսևորվել:

Սրանից բնավ չի բխում, թե հայերեն դարձվածքներում քերականական կարգերի մթագնումն առհասարակ չի կարող հանգեցնել դարձվածքի ընդհանուր իմաստի փոփոխության: Սակայն, ի տարբերություն իսպաներենի, հայերենն ունի որոշ առանձնահատկություններ, որոնք իրենց կնիքն են դնում դարձվածքի կազմում քերականական կարգերի ձևականացման գործընթացների վրա:

Խոսքը վերաբերում է, մասնավորապես, հոլովառությանը և խնդրառությանը. հայերենում դարձվածքի կախվածությունը քերականական կամ շարահյուսական հարաբերություններից ավելի մեծ է, քան իսպաներենում, թեև իսպաներենում նույնպես ձևաբանական, և շարահյուսական հարաբերությունները կարող են նպաստել դարձվածքի իմաստի փոփոխությանը, ինչպես որ ունենք *andar uno mosca* - վատ տրամադրություն ունենալ, նեղսրտած լինել և *andar la mosca* - փող ծախսել, ծախսի տակ ընկնել տարբերակներում, որոնցից առաջինում *mosca* - ճանճ բառն ուղիղ խնդիր է, երկրորդում՝ ենթակա:

Այսպես, եթե իսպաներենում *como una pulga* - փոքրիկ, չնչին, աննշան և *como las pulgas* - տզի պես կպչուն, զզվեցնող դարձվածքները պահպանում են իրենց հարաբերական անկախությունը ցանկացած համատեքստում, ապա հայերենում պատկերը բոլորովին այլ է: Հայոց լեզվում հողի առկայությունը զգալի չափով պայմանավորված է ձևաբանական և շարահյուսական գործոններով: Այսինքն՝ հայերենում որոշյալի և անորոշի առման քերականական կարգերը պահանջում են, որ դարձվածքը որոշակի հարաբերությունների մեջ մտնի շահույթի այլ անդամների հետ: Ըստ այդմ՝ բայով արտահայտված դարձվածքների իմաստը մեծ մասամբ թերի է և լրացվում է համապատասխան տարրերով:

Չհավակնելով ամբողջականության՝ ներկայացնենք մի քանի օրինակ՝ կապված որոշյալի և անորոշի առման քերականական կարգերի ձևականացման հետ.

1. *Կյանք տալ* - ծնել, առաջացնել,

2. *Կյանքը տալ* - իրեն գոհաբերել:

Առաջին օրինակը պահանջում է ուղիղ խնդիր (ինչ-որ բան, ինչ-որ մեկին), իսկ երկրորդը չի կարող գործածվել առանց անուղղակի խնդրի (ինչ-որ բանի, ինչ-որ մեկին):

3. *Գլուխ տալ* - ողջունել, խոնարհվել,

4. *Գլուխը տալ* - իրեն գոհաբերել:

Երկու տարբերակներն էլ պահանջում են անուղղակի խնդիր (ինչ-որ բանի, ինչ-որ մեկին):

5. *Ճանապարհ կտրել* - անցնել,

6. *Ճանապարհը կտրել* - դեմը դուրս գալ:

Առաջին տարբերակը թվում է անկախ, բայց պահանջում է ուղիղ խնդիր (*հինգ կիլոմետր ճանապարհ կտրել*), երկրորդը

չի կարող գործածվել առանց հատկացուցչի (ինչ-որ բանի, ինչ-որ մեկի):

7. *Միրտ առնել* - քաջություն ունենալ,

8. *Միրտը առնել* - բարկությունը անց կացնել, սիրաշահել:

Առաջին դարձվածքն անկախ է, քանի որ կարող է գործածվել առանց որևէ խնդրի (*նա վերջապես սիրտ առավ և գնաց պարտատիրոջ մոտ*), երկրորդ տարբերակը պահանջում է սեռական հոլովով հատկացուցիչ (ինչ-որ մեկի):

9. *Ձեռք բռնել* - օգնել, օգնության հասնել,

10. *Ձեռքը բռնել* - արգելել, թույլ չտալ:

Օրինակները քաղված են Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածակագմական բառարան»-ից: Երկուսն էլ պահանջում են սեռական հոլովով դրված հատկացուցիչ (ինչ-որ մեկի):

11. *Կրակ գցել* - հրդեհել, վառել,

12. *Կրակը գցել* - դժբախտացնել:

Առաջին դարձվածքը պահանջում է ուղիղ խնդիր (տունը, անտառը, խոտի դեզը), երկրորդը՝ լինելով *դժբախտացնել* բայի հոմանիշը՝ անուղղակի (ինչ-որ մեկին):

Այս վերլուծությունները ցույց են տալիս, որ հայերենում դարձվածքի իմաստային ամբողջականությունը հարաբերական է և մեծապես կախված է, ինչպես ասվեց, քերականական հարաբերություններից: Այդ իսկ պատճառով, հայերենում քերականական կարգերի մթագնումը կամ ձևականացումը ինքնին չի կարող հանգեցնել դարձվածքի իմաստի փոփոխության և չունի իմաստատարերիչ գործառնություն, որպիսին առկա է իսպաներենում: Դա գալիս է առաջին հերթին երկու լեզուներում հոդի գործառնության տարբերություններից. իսպաներենում հոդի գործառնությունը կապ չունի հոլովական տարբերու-

թյունների հետ, մինչդեռ հայերենում հոդը անբաժանելի է հոլովական համակարգից:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ դարձվածքի կազմում գոյականների քերականական կարգերի ձևականացումը բազմաթիվ դեպքերում հանգեցնում է դարձվածքի ընդհանուր իմաստի փոփոխության: Գոյականի քերականական կարգերը, ինչպես ցույց է տրվել, մթագնում են, դառնում ձևական, սակայն ստանում են միանգամայն նոր գործառույթ՝ *իմաստազատիչ հատկություն*, որը ոչ մի կապ չունի դրանց բուն՝ քերականական իմաստների հետ:

Այս պայմաններում կարելի է խոսել ոչ թե դարձվածքի կազմում քերականական կարգերի ձևականացման, այլ դրանց *գործառույթի փոփոխության* մասին, քանի որ ձևականացման դեպքում նշված քերականական կարգերը ընդհանրապես որևէ գործառություն չպետք է ունենային:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի մի բերելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ կարող ենք եզրահանգել.

- Ըստ հայագիտական և իսպանագիտական աղբյուրների՝ դարձվածքն ինքնուրույն լեզվական միավոր է, որն օժտված է որոշակի տարբերակիչ հատկանիշներով: Դարձվածքը բառից տարբերվում է իր բաղադրիչների քանակով և իմաստի տեսակով՝ դարձվածային իմաստով, իսկ նախադասություններից՝ կառուցվածքի կայունությամբ և պատրաստի ձևով վերարտադրելիությամբ: Դարձվածքին բնորոշ հատկանիշներից են պատկերավորությունը և հուզաարտահայտչականությունը: Շատ հաճախ դարձվածքի և ազատ կապակցությունների տարանջատման համար էական նշանակություն ունի համատեքստը:

- Կենդանիների անունները մնացած այլ գոյականների նման օժտված են հոմանիշությամբ: Ընդ որում՝ այդ հոմանիշությունն ունի երկու հիմնական դրսևորում՝ ուղղակի իմաստներ (բուն կենդանիների անվանումներ) և փոխաբերական իմաստներ (կենդանիներին վերագրվող հատկանիշներ): Առաջին խմբի հոմանիշները գոյականներ են, իսկ երկրորդ խմբում՝ ածականներ: Դարձվածակազմական արդյունավետության տեսանկյունից աչքի են ընկնում հատկապես փոխաբերական իմաստով գործածված կենդանիների անունները:

- Տիպաբանական - համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ իսպաներենում և հայերենում, ելնելով յուրաքանչյուր լեզվի առանձնահատկություններից, տարբեր են քերականական հարաբերությունները: Ինչպես արդեն նշվել է, հայերենում մեծ դեր է կատարում հոլովառությունը, մինչդեռ

խսպաներենում գոյություն չունի հոլովառություն և նման քերականական հարաբերություններն արտահայտվում են կապերի միջոցով: Ուշագրավ է նաև այն, որ հայերենում դարձվածքի կամընտիր անդամի հոլովված ձևերի դիմաց իսպաներենն ունի կապերի միջոցով արտահայտված կամընտիր անդամներ:

- Հարկ է նշել նաև, որ իսպաներենում երբեմն դարձվածքի կամընտիր անդամը կարող է հանդես գալ նաև առանց կապի, ինչպես արդեն նշվել են բերված օրինակներում:

- Գալով դարձվածքի կառուցվածքին՝ նշենք, որ իսպաներենում դարձվածքի կառուցվածքում երբեմն ի հայտ են գալիս դերանվանական անդամ կառույցներ (*declararse una cosa* – ինչ-որ բան հայտարարել), երբեմն էլ դարձվածքի «ազատ» անդամը արտահայտված է լինում անորոշ դերանուններով (*hechar la mano a **alguien*** – **ինչ-որ մեկին** օգնության ձեռք մեկնել, *no dejar a **nadie** quieto* – **ոչ մեկին** հանգիստ չթողնել):

- Ըստ իսպաներեն և հայերեն հոմանիշների բառարանների տվյալների՝ կենդանիների անունների հոմանիշների թվով հայերենն ունի 350, իսկ իսպաներենը՝ 326 տարբերակ: Հայերենն աչքի է ընկնում հատկապես տարաշխարհիկ կենդանիների անվանումների հոմանիշների առկայությամբ, որը գալիս է տարբեր լեզուների հետ հայերենի շփումներից:

- Ուսումնասիրվող միավորների գուգադրությունը երկու լեզուներում վեր է հանում մի շարք որակական տարբերություններ, որոնք կապված են իսպաներենի և հայերենի բառապաշարի առանձնահատկությունների հետ: Իսպաներենում որոշ կենդանու անվանումներ ունեն իրենց հոմանիշ տարբերակները, որոնք, սակայն, ուղղակի առումով կենդանիների անվանումներ չեն, այլ հանդես են գալիս որպես կերակրատե-

սակներ: Խոսքը վերաբերում է հատկապես pescado «ձկնով պատրաստած ճաշատեսակ» և pollo «հավ, հավով պատրաստված ճաշատեսակ» ձևերին, որոնց ուղղակի գուգահեռները, որպես առանձին հոմանիշներ, հայերենում չկան:

▪ Եթե կենդանիների անունների հոմանիշների թվով հայերենը որոշ գերազանցություն ունի իսպաներենի նկատմամբ՝ 350 հոմանիշ՝ 326-ի դիմաց, ապա կենդանու անուն պարունակող դարձվածքների թվով իսպաներենն ակնհայտորեն գերազանցում է հայերենին՝ 1200 դարձված՝ 400-ի դիմաց: Այլ կերպ ասած, ըստ իսպաներեն և հայերեն դարձվածաբանական բառարանների տվյալների, դարձվածքներում կենդանիների անունների ներկայացվածության տեսանկյունից իսպաներենը հայերենին գերազանցում է մոտ երեք անգամ:

▪ Նշված տարբերությունները չեն խոսում իսպաներենի հարստության կամ հայերենի աղքատության մասին, այլ պայմանավորված են մի շարք պատճառներով՝ ա) բառարանագրական սկզբունքներ, բ) իսպաներենի և հայերենի միջև բառապաշարի տարբերություններ, գ) բառակազմական առանձնահատկություններ: Իսպաներենում շատ մեծ թիվ են կազմում համեմատական դարձվածքները, որոնք կազմված են como «-պես, նման, ինչպես» մակբայով՝ como bueyes «խոշոր, գիրուկ» (բառացի՝ «եզների պես»), como un erizo «ծակող, փշոտ» (բառացի՝ «ոգնու պես») և այլն: Հայերեն դարձվածաբանական բառարաններում նման համեմատական դարձվածքների թիվը չափազանց քիչ է: Բառապաշարի տարբերությունները գալիս են տվյալ ժողովրդի կյանքում այս կամ այն կենդանու խաղացած դերից: Այս տեսանկյունից իսպաներենում բավականին շատ են ձկների և դրանց զանազան տարատեսակների անվանումներով կազմված դարձվածքները: Իսպաներեն և հայերեն

դարձվածքների միջև քանակական տարբերությունների մյուս պատճառը երկու լեզուների բառակազմական առանձնահատկություններն են: Իսպաներեն դարձվածաբանական բառարաններում ներկայացված դարձվածքների զգալի մասը կազմված է նախդիրներով՝ a caballo «ձիով», a paso de bues «եզան քայլերով, դանդաղ» և այլն, սակայն գործառությամբ համապատասխանում են գործիական հոլովին: Նման կառույցների դիմաց հայերենն ունի սովորական հոլովված ձևեր, որոնք դարձված չեն:

- Ըստ երկու լեզուների բառարանագրական տվյալների՝ իսպաներեն և հայերեն դարձվածքներում ակնհայտորեն գերիշխում են բայական դարձվածքները, համեմատաբար սակավաթիվ են անվանական՝ ածականական, մակբայական և գոյականական դարձվածքները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ այս տվյալները հարաբերական են. բառարաններում բայական դարձվածքները մեծ մասամբ տրված են անորոշ դերբայներով, մինչդեռ խոսակցական լեզվում դրանք կարող են գործածվել այլ դերբայներով՝ վերածվելով ածականական կամ մակբայական դարձվածքների:

- Իսպաներենում և հայերենում կենդանիների անուններով կազմված դարձվածքներում հոմանիշության և հականիշության դրսևորումներն ունեն որոշ առանձնահատկություններ, որոնք մեծ մասամբ կապված են կենդանիների վերագրվող հատկանիշների հետ: Իսպաներեն դարձվածքներում իրենց տեսակարար կշռով աչքի են ընկնում «փախչել, ծլկել», «հանդիմանել, կշտամբել» և «վրիպել, ձախողվել» իմաստներով դարձվածքները, իսկ հայերենում՝ «արագաշարժ, ճարպիկ», «դանդաղաշարժ, ծուլ» իմաստներով տարբերակները: Երկու

լեզուներում զգալի չափով ներկայացված են նաև «ազատ, անկաշկանդ» և «նեղված, ճնշված» իմաստներով հոմանիշները:

- Տիպաբանական առումով, իսպաներենում դարձվածակազմական կաղապարներից իր արդյունավետությամբ աչքի է ընկնում *hecho* «դարձած» հարակատար դերբայով կազմված կաղապարը, որը ներկայացված է 34 դարձվածքներով: Հայերենում այդ կաղապարին համապատասխանում են կտրած հարակատար դերբայով կազմությունները, որոնք աչքի են ընկնում առավել ճկունությամբ, քանի որ կարող են գործածվել նաև խոնարհված ձևերով՝ առյուծ կտրած – առյուծ կտրել – առյուծ կտրելով – առյուծ է կտրել և այլն:

- Իսպաներենում և հայերենում դարձվածքի կազմի մեջ մտնող խոսքի մասերի քերականական կարգերի մթազնումը կամ ձևականացումը շատ հաճախ հանգեցնում է տարբեր արդյունքների: Իսպաներենում գոյականը մի դարձվածքի կազմում կարող է հանդես գալ եզակի թվով, մյուսում՝ հոգնակի, մի դարձվածքում լինել որոշյալ, մյուսում՝ անորոշ, սակայն այս սովորական թվացող տարբերությունները երբեմն հանգեցնում են դարձվածքի ընդհանուր իմաստի փոփոխության, ինչպես օրինակ՝ *estar hecho un zorro* «քունը տանել, չկարողանալ արթնանալ» և *estar hecho unos zorros* «չափազանց հոգնած, ուժասպառ լինել» և այլն: Այսինքն՝ իսպաներենում գոյականի քերականական կարգերը մթազնում են, դառնում ձևական, սակայն ստանում են միանգամայն նոր՝ իմաստատարներից գործառություն, որը կապ չունի դրանց բուն՝ քերականական իմաստների հետ: Իսպաներեն դարձվածքների ցանկում ունենք գոյականների քերականական կարգերի նման ձևականացման երեք տասնյակ օրինակ: Հայերենում այդ երևույթը գոյություն չունի, քանի որ հայերեն դարձվածք-

ներում որոշյալ-անորոշ հակադրությունը չի սահմանափակվում միայն որոշիչ հոդերի առկայությամբ կամ բացակայությամբ, այլ պահանջում է համապատասխան խնդրառություն:

▪ Որպես ընդհանուր եզրակացություն՝ կարող ենք ասել, որ իսպաներենում և հայերենում կենդանիների անուններով կազմված դարձվածքները բնութագրվում են տիպաբանական ընդհանրություններով և երկու լեզուների բառապաշարի ու քերականական կառուցվածքի տարբերություններով:

Резюме

СОПОСТАВИТЕЛЬНОЕ ИЗУЧЕНИЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ, КОТОРЫЕ СОДЕРЖАТ НАЗВАНИЕ ЖИВОТНЫХ В ИСПАНСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

РИПСИМЕ ЛЕВОНОВНА ОГАНЯН

Сопоставительное изучение фразеологических единиц, которые содержат названия животных в испанском и армянском языках.

Данное исследование посвящено сопоставительному изучению фразеологических единиц.

Выбор темы определяется с недостаточной изученностью фразеологических единиц, которые содержат названия животных в сфере применения языка, который наиболее явно и непосредственно отражает установленные культурные традиции данного народа, своеобразие его национального менталитета.

Актуальность данной работы обусловлена современным интересом к сравнительно-типологическим работам. В профессиональной литературе вопрос сравнения испанских и армянских фразеологизмов недостаточно исследован. В источниках имеется большое количество научных работ, посвященных фразеологическим словарям и другим исследованиям, однако многие вопросы, связанные с этой областью, все еще нуждаются в дополнительном изучении.

Научная новизна данной монографии заключается, прежде всего, в самом вопросе. По существу, впервые предпринимается попытка провести сопоставительно-сравнительное исследова-

ние зарегистрированных в испанских и армянских словарях фразеологических единиц, которые содержат названия животных, а также впервые всесторонне выясняются особенности синонимии и антонимии названий животных в испанском и армянском языках, в частности вопросы словесной и фразовой синонимии. Рассмотрены вопросы, связанные с эффективностью фразеобразования на обоих языках.

Цель исследования заключается в:

- установлении сходств и различий в обоих языках в области фразеологизмов, которые содержат названия животных,
- изучении явления словесной и фразовой синонимии и антонимии названий животных в испанском и армянском языках, в изучении возможной смысловой зависимости фразеологических единиц от грамматических особенностей названий животных,
- сравнении и сопоставлении структурных особенностей фразеологических единиц,
- изучении связи фразеологических особенностей с национальными, социальными и культурными традициями,
- изучении и сравнении наиболее распространенных моделей построения предложений на испанском и армянском языках.

С **теоретической** точки зрения дается структурная и семантическая классификация фразеологических единиц, равно как их классификация по выполняемой в языке функции. Теоретически значимым оказывается положение о зависимости фразеологических единиц от грамматической категории формы

названия животного, который является основным компонентом.

Практическая значимость связана с результатами исследования, которые могут быть широко использованы в рамках образовательных курсов и семинаров, связанных с областью фразеологии и семантики испанского и армянского языков. Это также может быть полезно для переводов с испанского на армянский и с армянского на испанский.

Основными **методами**, использованными в работе, являются методы сопоставления и сравнения, которые позволяют сделать определенные типологические выводы. При необходимости также применялись методы семантического анализа и статистического расчета.

Фактический материал исследования включает 1600 словосочетаний, в которых представлено 71 название животных, а количество их синонимов достигает 676. Из них в испанском языке 326, а в армянском языке 350 синонимов, которые рассматриваются с точки зрения употребления и фразеологической эффективности. Основой фактического материала послужил ряд исторических словарей как на испанском, так и на армянском языках.

Структура и содержание работы. Работа состоит из введения, четырех глав, заключения и библиографического списка.

В **первой главе** представлена краткая теория армянской и испанской фразеологии. Сопоставляются определения словосочетания, виды и критерии структурно-семантической классификации словосочетаний, даются соответствующие анализы и интерпретации.

Во **второй главе** рассматриваются вопросы словесной и фразовой синонимии и антонимии названий животных в испанском и армянском языках, а также вопросы связанные с эффективностью фразеобразования на обоих языках.

Третья глава посвящена как сравнительному рассмотрению особенностей синонимии фразеологизмов, содержащих название животного в испанском и армянском языках, так и изучению возможной смысловой зависимости фразеологических единиц от грамматических особенностей названий животных.

В **четвертой главе** рассматриваются особенности формализации грамматического порядка слов в фразеологизме.

Summary

CONTRASTIVE STUDY OF PHRASEOLOGICAL UNITS WITH A NAME OF ANIMALS IN SPANISH AND ARMENIAN

HRIPSIME OHANYAN

The present research aims to carry out a contrastive analysis of phraseological units with names of animals (Zoonyms) in the mentioned languages. The **relevance** of this work is due to modern interest in comparative typological works and lack of comprehensive study of the topic in the professional literature, despite the abundance of phraseological dictionaries, scientific works and related studies. Moreover, there is a lack of comprehensive analysis of Spanish and Armenian phraseological units and many issues related to this area still require further study.

The **choice** of the topic is defined by inadequate knowledge of phraseological elements that contain names of animals, which most clearly and directly reflect the selected cultural traditions of a given nation and the features of national mentality.

The **novelty** of this monograph lies primarily in its exploration of a previously unaddressed issue. It marks the first attempt to conduct a comparative analysis of phraseological units found in Spanish and Armenian dictionaries, specifically those featuring animal names and the features of synonymy and antonymy of animal names in the Spanish and Armenian languages, namely the issues of verbal and phrasal synonymy as well as the effectiveness of phrase formation in both languages.

The **objectives** of the study are to:

- identify and define the similarities and differences in both languages in the field of phraseological units containing animal names,
- study verbal and phrasal synonymy and antonymy of animal names in the Spanish and Armenian languages in the scope of possible semantic dependence of phraseological units on the grammatical features of animal names,
- compare and contrast the structural features of phraseological units,
- examine the connection between phraseological features and national, socio-cultural traditions,
- analyze the most common patterns of sentence structure in Spanish and Armenian.

The **theoretical value** lies in the structural and semantic classification of phraseological units, as well as their classification according to the function performed in the language. It is theoretically significant that phraseological units depend on the grammatical category of the form of the name of the animal, which is the main component.

Practically, the findings of the study can be widely used in the framework of educational courses and seminars related to the field of phraseology and semantics of the Spanish and Armenian languages. They can also be useful for translations between both languages.

The main **methods** used in the study include juxtaposition and comparison, which allow making certain typological conclusions. Methods of semantic analysis and statistical calculation were also used where necessary.

The **empirical data** of the study comprises 1600 phraseological units, including 71 animal names and 676 synonyms. Among these, Spanish includes 326 and Armenian 350 synonyms respectively, each offering a distinct insight into usage and phraseological efficiency. Dictionaries in both Spanish and Armenian languages served as the primary source for the factual material, with specific references provided in the bibliography.

Structure and content of the work. The research consists of an introduction, four chapters, a conclusion and a bibliography.

Chapter one presents a brief theory of Armenian and Spanish phraseology. Definitions of phrases, types and criteria for the structural-semantic classification of phrases are compared, and corresponding analyses and interpretations are given.

Chapter two covers issues of verbal and phrasal synonymy and antonymy of animal names in Spanish and Armenian, as well as issues related to the effectiveness of phrase formation in both languages.

Chapter three focuses on two main aspects. Firstly, it conducts a comparative analysis of synonymy of phraseological units containing animal names in Spanish and Armenian. Secondly, it delves into the possible semantic correlation between phraseological units and the grammatical characteristics of animal names in both languages.

Chapter four covers the features of formalizing the grammatical order of words in phraseological units.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. **Աբրահամյան Ս. Գ.**, Հայոց լեզու. բառ և խոսք, Երևան, 1978:
3. **Աղայան Է. Բ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
4. **Աղայան Է. Բ.**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1984:
5. **Աղաջանյան Զ. Խ.**, Եղանակավորող դիմավոր բայ + անորոշ դերբայ կապակցությունը, Բանբեր Երևանի պետական համալսարանի, հ. 1, 2004:
6. **Աճառյան Հ. Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, 1-5, Երևան, 1958-1964:
7. **Բաղիկյան Խ.**, Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000:
8. **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986:
9. **Բաղդասարյան Հ.**, Թարգմանաբանության ներածություն, Երևան, 2007:
10. **Բաղդասարյան Հ.**, Համընդհանուրի, ազգայինի և անհատականի հակադրամիասնությունը որպես թարգմանական խնդիր, ԵՊՀ հրատ., Երան, 2023.
11. **Բաղդասարյան Հ.**, «Դոն Կիխոտ» վեպի դարձվածային միավորների ֆրանսերեն և հայերեն թարգմանությունների խնդրի շուրջ, «Սերվանդեսը և արդիականությունը» գիտաժողովի նյութերը, Երևան, 2005, էջ 19-32:
12. **Բարսեղյան Հ. Խ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:

13. **Բարսեղյան Հ. Խ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տեքստիմասնական բառարան, Երևան, 1973:

14. **Բեղիբյան Պ.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973:

15. **Գաբրիելյան Յու.**, Գերմաներեն լեզվի տիպաբանություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2006:

16. **Գևորգյան Ե.**, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969:

17. **Եզեկյան Լ.**, Հայերենի գործառնական ոճերը, Երևան, 1999:

18. **Եզեկյան Լ.**, Հայոց լեզու, Երևան, 2005:

19. **Թովմասյան Ն.**, Անգլերենից հայերեն գեղարվեստական թարգմանություններում դարձվածային միավորների պատկերավորության վերաբերյալը համամանությունների միջոցով, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, հ. 3, Երևան, 2002, էջ 121-126:

20. **Լեկիաշվիլի Վ. Ա.**, Դարձվածային միավորների դասակարգման ձևական չափանիշները, Բանբեր Երևանի պետական համալսարանի, հ. 3, 2002:

21. **Կարապետյան Լ.**, Կայուն դարձվածային համեմատությունների կառուցվածքային-քերականական վերլուծության փորձ, Ռոմանական բանասիրության հանդես, հ. 2, 2004, էջ 102-114:

22. **Մանուկյան Ա.**, Գունանուն պարունակող դարձվածքներն իսպաներենում և հայերենում, Ռոմանական բանասիրության հանդես, հ. 1, Երևան, 2004:

23. **Մարգարյան Ա.**, Հայերենի բաղիյուսական բարդությունները, Երևան, 1986:

24. **Մելքոնյան Ն.**, Դարձվածքների ծագման և զարգացման առանձնահատկությունների հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 1, 2003:

25. **Մուրվայան Ա. Ա.**, Հայոց լեզվի դարձվածակագմություն և բառակազմություն, Երևան, 1953:

26. **Նազարյան Ա.**, Ֆրանսիական առածներ և ասացվածքներ, Երևան, 1994:

27. **Նազարյան Ա., Բաղդասարյան Հ.** Թարգմանական ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000:

28. **Շալունց Ռ.**, Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979:

29. **Պապոյան Ա. Մ., Բատիկյան Խ. Մ.** Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 2003:

30. **Պետրոսյան Հ. Զ.**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:

31. **Պետրոսյան Ա. Խ.**, Ձկան և ձկնորսության հետ կապված բառեր, բառակապակցություններ ու դարձվածքներ, Բանբեր Երևանի պետական համալսարանի, հ. 3, 2004:

32. **Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ.** Հայոց լեզու, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատ. 1974:

33. **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

34. **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:

35. **Զահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969:

36. **Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ.**, Հայոց լեզու. ոճաբանություն, Երևան, 1976:

37. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004:

38. **Սուքիասյան Ա.**, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971:

39. **Քոսյան Վ.**, Դարձվածաբանություն (Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., «Հայոց լեզու» գրքում), Երևան, 1980:

40. **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1980:

41. **Օհանյան Հ.**, Ձկնանուն պարունակող դարձվածքները իսպաներենում և հայերենում, Ռոմանական բանասիրությունների հանդես, հ. 1, Երևան, 2004:

42. **Օհանյան Հ.**, Դարձվածակազմական կաղապարների արդյունավետությունը, իսպաներենում և հայերենում, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, հ.13, Երևան, 2012:

43. **Օհանյան Հ.**, Կենդանիների անվանումների դարձվածակազմական. արդյունավետությունը իսպաներենում և հայերենում, Ռոմանական բանասիրությունների հանդես, հ. 1, Երևան, 2013:

44. **Օհանյան Հ.**, Իսպաներենում և հայերենում դարձվածքի կառուցվածքային որոշ առանձնահատկությունների մասին, Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, հ. 3, 2016:

45. **Actas** de la I Conferencia de hispanistas de Rusia, Madrid, Ministerio de Asuntos Exteriores, 1995.

46. **Albir H. Hurtado**, Traducción y traductología, introducción a la traductología, Madrid, Ed.Cátedra 2014.

47. **Alonso A.**, Estudios lingüísticos, Temas españoles, Madrid, Ed. Cremos, 1967.

48. **Arroyo J. Blas**, Sociolingüística del español, Madrid, Ed.Cátedra 2005.

49. **Baghdasarián H., Santos M. Méndez**, Español académico para lingüistas, Ereván, 2009.

50. **Baghdasarián H., Santos M. Méndez**, Manual básico de la lexicología española, Ereván, Limush, 2011.

51. **Baghdasarián H.**, Lo universal y lo nacional en las paremias desde una perspectiva interlingual, *en* Paremia 23, Madrid, 2014.

52. **Baghdasarián H.**, Algunas consideraciones en torno a los procedimientos de traducción de refranes y proverbios *en* Alea: Estudios Neolatinos, vol. 19/3, Universidade Federal do Rio de Janeiro, 2017.

53. **Baghdasarián H.**, Algunas consideraciones sobre la traducción al italiano de las paremias de la novela Rinconete y Cortadillo de Cervantes *en* Paremia, 31, 2021.

54. **Beinhauer W.**, El español coloquial, Madrid, C.S.I.C., 1950.

55. **Carneado Moré Z.V., Tristá Pérez A.M.**, Estudios de la fraseología, La Habana, Ciencias sociales, 1995.

56. **Carreter L. F.**, Estudios de lingüística, Crítica, Barcelona, 1980.

57. **Casares J.**, Introducción a la lexicografía moderna, Madrid, S.C.I.S 1950.

58. **Cejador F.**, Fraseología o estilística castellana, Madrid, Lib. y Casa Ed. Hernando, 1925.

59. **Cejador J. y Frauca**, Fraseología o estilística castellana, Madrid, Corominas 2008.

60. **Cerny J.**, Historia de la lingüística, Cáceres, Universidad de Extremadura, 1998.

61. **Chomsky N.**, La arquitectura del lenguaje. Barcelona: Kairós, 2003.

62. **Corpas Pastor G.**, Manual de fraseología española, Madrid, Ed. Gredos, 1996:

63. **Coseriu E.**, La creación metafórica en el lenguaje, Montevideo, Universidad de la república, 1956.

64. **Coseriu E.**, Teoría del lenguaje y lingüística general, Madrid, Ed. Gredos, 1982.

65. **Coseriu E.**, Lecciones de la lingüística general, Madrid, Ed. Gredos, 1999.

66. **Coseriu E.**, Introducción a la lingüística, Ed. Gredos, 1986.

67. **Coseriu E.**, Gramática, semántica, universales, (estudios de la lingüística funcional), Madrid, Ed. Gredos, 1978.

68. **Croft W., D Alan Cruse**, Lingüística cognitiva, Ed. Akal, S.A., Madrid, 2008,.

69. **Esbozo de una nueva Gramática de la Lengua Española**, REA, Madrid, 1973.

70. **Escandell M.V. Vidal**, Introducción a la pragmática, Ed. Ariel, Barcelona, 2008.

71. **Gascón E.**, Español coloquial, Madrid, Espasa Calpe, 2000.

72. **González P.**, El español idiomático, Barcelona, Ariel Lenguas Modernas, 1988.

73. **Guitlitz A.**, Curso de lexicología de la lengua española contemporánea, Moscú, Ed. Vishaya shkola, 1974.

74. **Gurillo R. L.**, Aspectos de fraseología teórica española, Universidad de Valencia, Valencia, 1997.

75. **Iribarren J.**, El porqué de los dichos, 2ª ed., Madrid, Aguilar, 1956.

76. **Kany Ch.**, American-Spanish Syntax, 2ª ed. Chicago, University of Chicago Press, 1951.

77. **Lapesa R.**, El español moderno y contemporáneo, Estudios lingüísticos, Crítica, Barcelona, 1996.

78. **Lazo R.**, Elementos de la lengua española, La Habana, 1964.

79. **Llorach E.A.**, Estudios a la gramática funcional del español, Madrid, Ed. Gredos, 1986.

80. **Llorach E.A.**, Gramática de la lengua española, Vigésima ed., Espasa, Madrid, 2011.

81. **Lyons J.**, Semántica lingüística, Barcelona, ed. Paidós ibérica, 2009.

82. **Marín F. Marcos**, Curso de gramática española, Madrid, Cincel, 1987.

83. **Marín F. Marcos**, Introducción plural a la gramática histórica, Madrid, Cincel, 1983.

84. **Marín M. F.**, Lingüística y la lengua española, Cincel, Madrid, 1975.

85. **Marín M. F.**, Curso de gramática española, Cincel, Madrid, 1985.

86. **Marín M. J.**, Fraseologismos somáticos del alemán (un estudio lexicosemántico), Frankfurt am Main, Peter Lang, 2004.

87. **Menéndez P.R.**, Manual de gramática española, decimosexta ed., Espasa - Calpe S.A., Madrid 1980.

88. **Rodríguez C. Fuentes**, Lingüística pragmática y análisis del discurso, Ed. Arco/Libros, S.L., Madrid, 2000.

89. **Ruíz L.**, Aspectos de fraseología española, Universidad de Valencia, Valencia, 1997.

90. **Ruíz L.**, La fraseología del español coloquial, Ariel, Barcelona, 1988.

91. **Tristá Pérez A. M.**, Fuentes de formación de las unidades fraseológicas. Sus modos de formación, Z. Carneado More y A.M. Tristá Pérez, 1995.

92. **Tristá Pérez A. M.**, Fraseología y contexto, Ciencias Sociales, La Habana 1988.

93. **Trujillo R.**, Introducción a la semántica española, Ed. Arco/Libros, S. A. Madrid, 1988.

94. **Trujillo R.**, Principios de la semántica textual, Ed. Arco Libros, Madrid 1996.

95. **Ullman S.**, Semántica: La ciencia del significado, Aguilar, Madrid, 1980.

96. **Zuluaga A.**, Introducción al estudio de las expresiones fijas, Frankfurt, Peter D. Lang., 1980.

97. **Zuluaga A.**, Estudios generativo-transformativistas de las expresiones idiomáticas, en Thesaurus, 1970.

98. **Райхштейн А. Д.**, Сопоставительный анализ немецкой и русской фразеологии, Москва, 1980.

99. **Арутюнова Н.**, Предложение и его смысл, Москва, 1976.

100. **Будагов Р.**, Слово и его значение, Ленинград, 1974.

101. **Будагов Р.**, Сравнительно-семасиологические исследования (романские языки), Москва, Московский Университет 1963.

102. **Будагов Р.**, Человек и его язык, Москва, Московский Университет, 1974.

103. **Виноградов В.**, Грамматика испанского языка, Москва, Кн. дом "Университет" 2000.

104. **Виноградов В.**, Лексикология испанского языка, Москва, Высшая Школа, 1994.

105. **Виноградов В.**, Лексикология испанского языка, Москва, Высшая Школа, 2003.

106. **Вольф В., Левинтова Е., Мовшович, Э.**, Некоторые вопросы испанской фразеологии, Кишинев, Московский Университет 1963.

107. **Гак В.**, Сопоставительная лексикология, Москва, 1977.
108. **Жуков В. П.**, Семантика Фразеологических Оборотов, Москва, 1978.
109. **Касарес Х.**, Введение в современную лексикографию, Москва,
110. **Копыленко М., Попова З.**, Очерки по общей фразеологии, Воронеж, 1978.
111. **Кунин А.**, Фразеология современного английского языка, Москва, 1970.
112. **Курчаткина Н., Супрун В.**, Фразеология испанского языка, Москва, 1981.
113. **Назарян А.**, Фразеология современного французского языка, Москва, 1976.
114. **Сергиевский М.**, Введение в романское языкознание, Москва, 1952.
115. **Смит Л.**, Фразеология английского языка, Москва, 1959.
116. **Соколова Г.**, Фразообразование во французском языке, Москва, 1987.
117. **Телия В.**, Что такое фразеология?, Москва, 1966.
118. **Фирсова Н.**, Грамматическая стилистика современного испанского языка, РИССИЙСКИЙ УНИВЕРСИТЕТ ДРУЖБЫ НАРОДОВ, Москва, 2002.
119. **Черданцев Т.**, Язык и его образы, Москва, 1977.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱԴԱՆՆԵՐ

1. **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի արմատական բառարան, «Հայաստան», ԵՊՀ հրատ., Երևան, 1975:
2. **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, 1-2, Երևան, 1976:

3. **Աճառյան Հ.**, Հայերենի գավառական բառարան, Թիֆլիս, 1913:

4. **Բաղիկյան Խ.**, Ուսումնական դարձվածաբանական բառարան, Երևան, 2002:

5. **Բաղդասարյան Հ.**, Իսպաներեն-հայերեն բառարան, Երևան, 2002:

6. **Բեդիրյան Պ.**, Դարձվածաբանական բացատրական բառարան, Երևան, 1971:

7. **Բեդիրյան Պ.**, Դարձվածաբանական բացատրական բառարան, Երևան, 1971:

8. **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան 2011:

9. **Թեքեան Յ.**, Առձեռն բառարան սպաներենէ հայերէն, Բէյրութ, 1955:

10. **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, 1-4, Երևան, 1969:

11. **Խլղաթյան Ֆ.**, Ոճաբանական բառարան, Երևան, 2000:

12. **Հակոբյան Հ., Տեր-Անտոնյանց Ե.**, Ռուս-հայերն դպրոցական դարձվածաբանական բառարան, Երևան, 1985:

13. **Ղազարյան Ռ.Ս.**, Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան, գիրք Ա, կաթնասուններ, հրատ. Փյունիք, Երևան, 1998:

14. **Ղազարյան Ռ.Ս.**, Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան, գիրք Բ, սողուններ ու երկկենցաղներ, հրատ. Փյունիք, Երևան, 1998:

15. **Ղանալանյան Ա.Տ.**, Առածանի, Երևան, 1960:

16. **Ղարիբյան Ա.**, Ռուս-հայերեն բառարան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, Երևան, 1968:

17. **Մալխասյան Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, 1-4, Երևան, 1945-1946:

18. **Մելքումյան Ռ., Պողոսյան Պ.**, Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

19. **Նազարյան Ա.**, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993:

20. **Պետրոսյան Զ.**, Հայերենագիտական բառարան, «Հայաստան», Երևան, 1987.

21. **Պետրոսյան Հ., Գալստյան Ա., Ղարազյուլյան Թ.**, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

22. **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Հոմանիշների, հականիշների, դարձվածքների դպրոցական բառագիրք, Երևան, 2002:

23. **Սարգսյան Վ. Գ.**, Իսպաներեն-հայերն բառարան, Երևան, 2004:

24. **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2003:

25. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

26. **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 2009:

27. **Օհանյան Հ.** Իսպաներեն-հայերեն կենդանուն պարունակող դարձվածքների բառարան-տեղեկատու, Երևան, 2004:

28. **Ахманова О.**, Словарь лингвистических терминов, Москва, 1966.

29. **Ахманова О.С.** Словарь лингвистических терминов. М.: Советская энциклопедия, 1966.

30. **Левинтова Э. и др.**, Испанско-русский фразеологический словарь, Москва, 1985.

31. **Нелюбин Л.Л.**, Талковый переводоведческий словарь. М. Наука, 2006.

32. **Arazola Roberto**, Diccionario de modismos argentinos, Buenos Aires, Ed.Ira, 1943.

33. **Buitrago Alberto**, Diccionario de dichos y frases hechas, Madrid, Espasa Calpe, 2000.

34. **Buitrago Alberto**, Diccionario de dichos y frases hechas, Ed. Espasa, Barcelona 2012.

35. **Calveram C.**, Diccionario de ideas y expresiones afines, Madrid, Campos Juana G, 1956.

36. **Casares J.**, Diccionario ideológico de la lengua española 2ª ed. Gustavo Gill, Barcelona, 1977.

37. **Coseriu E.**, Diccionario práctico de locuciones y frases hechas, editorial Everest, 2nda edición, 1998.

38. **Diccionario** de la Real Academia Española, t. 1-2, Madrid, 2001.

39. **Diccionario de Sinónimos y Antónimos**, Diccionario de Lengua española, Dirección editorial Foronda Pascual Eladio Ed. Larousse, S.L., Barcelona, 2007.

40. **Equipo de la Universidad de Alcalá de Henares**, Diccionario para la enseñanza lengua española, Ed. Larousse, S.L., Barcelona, 2007.

41. **Ezquerria M. A.**, Nuevo diccionario de voces de uso actual, Ed. Arco Libros, S.L., Madrid, 2004.

42. **Haensch G.**, Los diccionarios del español en el umbral del siglo XX, Salamanca, Universidad de Salamanca, 1997.

43. **Junceda L.**, Diccionario de refranes, dichos y proverbios (tercera ed.), Espasa Calpe, S.A., Madrid, 2007.

44. **Lázaro Carreter F.**, Diccionario de términos filológicos, ed. Credos, Madrid, 1998.

45. **Moliner María**, Diccionario de uso del español actual, Credos, Madrid, 2001.

46. **Moliner María**, Diccionario de uso del español, ED. Gredos, S.A.U., Madrid 2008.

47. **REAL ACADEMIA ESPAÑOLA.**, Diccionario de la lengua española., 23.^a ed., [versión 23.5 en línea]., <<https://dle.rae.es>>

48. **Robles S.**, Diccionario de Sinónimos y antónimos, La Habana, 1968.

49. **Sáez J. S.**, Diccionario de Argot, Madrid, Espasa, 2004.

50. **Sbarbi J.**, Gran diccionario de refranes de la lengua española, Buenos Aires, Manuel J. Garcia, 1943.

51. **Seco, Manuel; Andrés, Olimpia, Ramos Gabino Aguilar**, Diccionario fraseológico documentado del español actual, Madrid, 2005.

52. **Seco M, Andrés Olimpia, Ramos G.**, Diccionario Abreviado Del Español Actual, Ed. S.A., Barcelona, 2000.

53. **Sevillia Muños J., Cantera Ortiz de Urbina J.(eds).**, 1001 refranes españoles con su correspondencia en ocho lnguas (alemán, árabe, francés, inglés, italiano polaco, provenzal y ruso), Ediciones Internacionales Universitarias, Madrid, 2001.

54. **Slager E.**, Pequeño Diccionario de Construcciones Preposicionales, Madrid, Visor Libros, 1997.

55. **Varela F., Kubarth H.**, Diccionario fraseológico del español moderno, Madrid, Ed. Gredos, 1994.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՒՓՄԻՄԵ ԼԵՎՈՆԻ ՕՀԱՆՅԱՆ

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԻՄՊԱՆԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Սրբագիր՝ Գ. Գրիգորյան

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 09.10.2024:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 10.75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y su.am